ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՀՏ

Բարենպաստ միջավայր կին ձեռներեցների համար

Մոդուլ Բ

UNITED NATIONS
APCICT-ESCAP

Քաղաքականություն մշակողների համար

Մոդուլ Բ:

ԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուշա Ռանի Վյասուլու Ռեդդի

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման վերապատրաստման կենտրոն

«Կանայք և ՏՀՏ»

Քաղաքականություն մշակողների համար

Այս աշխատանքը թողարկվել է Creative Commons Attribution 4.0 միջազգային լիզենցիայի ներքո: Լիցենզիայի պատճենին ծանոթանալու համար անցեք հետևյալ հղմամբ՝ *http://creativecommons.org/licenses/by/4.0/*.

Այս հրապարակման մեջ շարադրված տեսակետների, թվերի և գնահատականների համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և դրանք չպետք է պարտադիր կերպով դիտարկվեն որպես ՄԱԿ-ի հավանությանն արժանացած կամ վերջինիս արտահայտած տեսակետներ:

Այս հրապարակման մեջ օգտագործված նշանակությունները և ներկայացված նյութը չեն ենթադրում ՄԱԿ-ի Քարտուղարության կողմից որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ նրանց իշխանությունների օրինական կարգավիճակի կամ վերջիններիս սահմանների սահմանազատման վերաբերյալ որևէ կարծիքի արտահայտում:

Ընկերությունների անունների և կոմերցիոն ապրանքների հիշատակումը չի ենթադրում ՄԱԿ-ի հավանությունը:

Կոնտակտ՝

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ասիական և խաղաղօվկիանոսյան ուսումնական կենտրոն (UN-APCICT/ESCAP)

Ջի-Թաուեր 5-րդ հարկ, 175 Դաերո արվեստի կենտրոն, Յեոնսու-գու

Ինչեոն, Կորեայի Հանրապետություն

Հեռ.՝ +82 32 458 6650
Ֆաքս՝ +82 32 458 6691/2
Էլ.հասցե՝ info@unapcict.org
http://www.unapcict.org
Copyright © UN-APCICT/ESCAP 2016
Դիզայնը և ձևավորումը Սքենդ-Մեդիա Քորփորեյշն ՍՊԸ և պրն. Լուիլ Էսպադա

Տպագրված է Կորեայի Հանրապետությունում

Նախաբան

Կանանց ձեռներեցությունն ուժ է դրական սոցիալական փոխակերպման համար: Կին ձեռներեցների մեծ մասը նորարար է, լի վճռականությամբ հաղթահարելու խոչընդոտները և բաց՝ ողջ կյանքում սովորելու համար: Նրանց հաջողությունն առաջացնում է կողմնակի դրական ազդեցություն՝ տնային ավելի մեծ խնայողություններից և երեխաների առողջության և կրթության մեջ ավելի մեծ ներդրումից մինչ աշխատատեղերի ստեղծման խթանումը և ազգային ՀՆԱ-ի նշանակալի աճը:

Չնայած Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը վերացրել է գենդերային մի շարք բացթողումներ առողջության և կրթության ոլորտներում, կանայք դեռևս առավել զրկված են տնտեսական հնարավորություններից, քան տղամարդիկ. սահմանափակ մուտք դեպի աշխատուժ, ավելի ցածր աշխատավարձեր, խոցելություն վտանգավոր աշխատանք կատարելիս կամ ֆինանսների և վարկերի ավելի փոքր հասանելիություն:

Կայուն զարգացման 2030 օրակարգը մեր համաշխարհային նախագիծն է տնտեսապես, սոցիալապես և կայուն միջավայրով ապագայի համար, որը մենք ցանկանում են ունենալ այս և հետագա սերունդների համար: Քանի որ ավելի քան 20 տարիների ընթացքում գենդերային բացը շատ փոքր դրական փոփոխության է ենթարկվել, այս տեսլականի գիտակցումը Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ավելի մեծ մարտահրավեր կլինի: Անհավասարությունները ճնշում են տնտեսական դինամիկան, պառակտում սոցիալական միասնականությունը և վնասում կայուն միջավայրը:

Պահպանվող անհավասարությունների վերացումը պահանջում է արմատախիլ անել աղքատությունն ու խտրականությունը և ապահովել համապատասխան սոցիալան ապահովություն ամենախոցելի խմբերի համար: Անհրաժեշտ է նաև օգտագործել գիտության, տեխնոլոգիայի և նորարարության նվաճումները, ինչպես նաև ուղղորդել Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ուժը դեպի զարգացման բոլոր ոլորտներում հնարավորությունների ընդլայնման:

ՏՀՏ-ներն արժեքավոր գործիքներ են սոցիալ-տնտեսական զարգացման, սոցիալական մասնակցության և իրավունքների ու լիազորությունների ընդլայնման համար, միևնույն ժամանակ բնակչության առանձնահատուկ սեգմենտներ, որոնք դեռևս բախվում են խնդիրների՝ այս տեխնոլոգիաների օգտագործման պակասի և ցածր հասանելիության պատճառով: Այս թվային անդունդը և գենդերային բացը վերացնելուն նպաստելու համար Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ասիական և խաղաղօվկիանոսյան ուսումնական

կենտրոնը նախաձեռնել է <<Կանայք և ՏՀՏ>> նախաձեռնությունը (WIFI)՝ աջակցելու կանանց ձեռներեցությանը բիզնեսի կառավարման, ՏՀՏ հմտությունների և օնլայն ռեսուրսների վերաբերյալ հիմնարար գիտելիքներով: Ծրագիրը նաև ակտիվորեն խթանում է բարենպաստ քաղաքական միջավայրի ձևավորմանը, որը կվերացնի հատկապես կանանց առաջխաղացման ճանապարհին ընկած ինստիտուցիոնալ արգելքները:

WIFI մոդուլներն արտացոլում են ՏՀՏ հմտությունների և ձեռնարկատիրական գիտելիքների զարգացման կարևորությունը գոյության միջոցների բարելավման և, ընդհանուր առմամբ, տնտեսական բարգավաճման ու կանանց բարեկեցության համար: WIFI-ը հանդիսանում է կարևոր հիմնաքար բոլորի համար հավասար իրավունքներով և արտոնություններով եզակի և կայուն ապագա կառուցելու գործում:

Հյեուն-Սուկ Ռհի, փ.գ.թ.

Տնօրեն

UN-APCICT/ESCAP

Մոդուլի մասին

Այս մոդուլի նպատակներն են տեղեկացված դարձնել քաղաքական որոշումներ ընդունողներին և աջակցել նրանց՝ քաղաքականութան մշակման հմտությունների զարգացմանը գենդերի վերաբերյալ գիտելիքներով՝ ՏՀՏ-ների տիրապետող կին ձեռներեցների համար բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով:

Մոդուլը բաղկացած է չորս հիմնական բաժիններից, ինչպես նաև նախաբանից և եզրակացությունից: Առաջին բաժինը ներկայացնում է գենդերի և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման հասկացությունները կայուն զարգացման նպատակների համատեքստում: Երկրորդ բաժինը բացահայտում է կանանց, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջև առկա ինտերֆեյսերը՝ ներառյալ գենդերային բաժանումը՝ ըստ ՏՀՏ-ների կիրառման: Երրորդ բաժինը կենտրոնանում է գենդերի նկատմամբ զգայուն քաղաքականության գործընթացների վրա, իսկ չորրորդ բաժինն ուսումնասիրում է որոշ գործող ռազմավարություններ՝ նպաստելու կանանց ձեռնարկատիրությանը՝ մասնավորապես ՏՀՏ-ների օգտագործման միջոցով:

Այս բաժիններում ներկայացված հասկացությունների և հիմնախնդիրների բացատրությունը ընդլայնված է իրական օրինակներով և դեպքերի ուսումնասիրություններով: Յուրաքանչյուր բաժին ավարտվում է ամփոփումով և ինտերակտիվ վարժությունների համալիրով: Այս մոդուլի վերջում դասընթացավարների համար ներկայացված են նշումներ՝ թիրախային լսարանին դասընթացի մատուցման և տեղային կարգավորմամբ այս նյութի հարստացման վերաբերյալ առաջարկությունների տեսքով:

Ուսուցման արդյունքները

Մոդուլի ավարտին սովորողը՝

1. Կհասկանա գենդերային պրոբլեմատիկայի հայեցակարգը, ինչը կտանի գենդերային հիմնախնդիրների նկատմամբ զգայուն կառավարության ձևավորմանը:

2. Կկարողանա հասկանալ և դիմել այնպիսի քաղաքականության և նորմատիվ միջավայրի ձևավորման, որն անհրաժեշտ է գենդերային հիմնախնդիրների նկատմամբ զգայուն կառավարության ձևավորմանը:

3. Կկարողանա աջակցել կին ձեռներեցներին դեպի ՏՀՏ-ներ՝ հատուկ մուտքի տրամադրմամբ և դրանց օգտագործմամբ:

Թիրախային լսարան

Ազգային և տեղական քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունող և ղեկավար մարմիններ, խորհրդարանականներ և կառավարության պաշտոնյաներ

Ժամանակահատվածը

6 ժամ / մեկօրյա թրեյնինգ

Երախտիքի խոսք

UN-APCICT-ը շնորհակալություն է հայտնում այն տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և ազգային կազմակերպություններին ու անհատներին, ովքեր մասնակցեցին ուսուցման բովանդակության վերանայման բազմաթիվ փուլերին, ովքեր ունեցան անգնահատելի ներդրում այս մոդուլի մշակման գործում: Մենք շնորհակալություն ենք հայտնում Պակիստանի ՏՀՏ-ների զարգացման ինստիտուտին, Ֆիլիպինների Պրոֆեսիոնալ ղեկավարների ծառայության խորհրդի, Շրի Լանկայի Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գործակալությանը և խորհրդակցական հանդիպումների, փորձագետների խմբերի հանդիպումների, սեմինարների և դաշտային աջակցության մասնակիցներին: APCICT-ը բարձր է գնահատում Ուշա Ռանի Վյասալու Ռեդդիի, Ֆահիմ Հուսեյնի, Մարիա Խուանիտա Ռ. Մակապագալի կողմից ցուցաբերված աջակցությունները, ովքեր օգնել են զարգացնել և կազմել մոդուլի բովանդակությունը: Շնորհակալություն ենք հայտնում Քրիստինե Ապիկուլին մոդուլի խմբագրման համար:

Բովանդակություն

Նախաբան i
Մոդուլի մասին iii
Երախտիքի խոսք iv
Հապավումների ցանկ ix

I. Ներածություն 1

II. Գենդեր հասկացությունը և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը ԿԶՆ-ի համատեքստում 5

2.1 Սեռ և գենդեր հարաբերակցություն 5

2.2 Կայուն զարգացման նպատակներ 6

2.3 Կայուն զարգացման նպատակները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը 8

2.4 Ի՞նչ է իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը 12

2.5 Ֆինանսական հնարավորությունների հասանելիությունը կին ձեռներեցների համար 14

III. Կանայք և ՏՀՏ-ները։ Ինտերֆեյսեր 21

3.1 Կանանց ներգրավվածությունը հաղորդակցության ոլորտի մասնագիտություններին 23

3.2 Կանանց և աղջիկների ներկայացումը մեդիայում 25

3.3 Գենդերային բաժանումը՝ ըստ ՏՀՏ-ների օգտագործման 26

3.4 ՏՀՏ-ների օգտագործումը հանրային ծառայություններում 29

3.5 ՏՀՏ-հնարավորությունները կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համար 32

IV. Դեպի կանանց համար գենդերի նկատմամբ զգայուն քաղաքականության իրականացման գործընթաց 42

4.1 Մոտեցումներ գենդերային պրոբլեմատիկայի նկատմամբ 47

4.2 Գենդերային պրոբլեմատիկայի փուլերը 57

V. Գենդերի նկատմամբ զգայուն քաղաքականության և իրականացման պլանի շրջանակավորում կանանց ձեռներեցության մեջ ՏՀՏ-ների համար 67

5.1 Կառավարության դերը. համապատասխան օրենսդրություն և իրավական շրջանակներ 69

5.2 Միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրության քաղաքականությունը, օրենքները և կարգավորումները 78

5.3 Թվային տնտեսական ինտեգրացիա 78

5.4 Ենթակառուցվածք և տեխնոլոգիա 84

5.5 Կարողությունների և բիզնեսի զարգացման ծառայություններ 85

5.6 Տեղեկատվական-քարոզչական ծառայություններ և մարքեթինգ 86

5.7 Գենդերային խնդիրների նկատմամբ զգայուն էլեկտրոնային կառավարություն կանանց ձեռներեցության համար 87

5.8 Իրականացում 90

VI. Ամփոփում 96

6.1 Օրենքների և քաղաքականությունների ինտեգրացիա 96

6.2 ՏՀՏ հնարավորությունը կին ձեռներեցների համար 97

6.3 Գենդերային հիմնախնդիրների նկատմամբ զգայուն քաղաքական սցենարի մշակում 100

Հավելված 102

Պատկերների ցանկ

Պատկեր 1. Ներառական ֆինանսների փոխանցման մեխանիզմները 16

Պատկեր 2. Ինտերնետի մատչելիությունը և օգտագործումը՝ ըստ գենդերի 28

Պատկեր 3 «Ո՞րն է իմ տեղը: Ի՞նչ օգուտ այն կարող է ինձ տալ» 30

Պատկեր 4 Գենդերային վերլուծության Շահի մեթոդաբանությունը 51

Պատկեր 5 Ձեռներեցության էկոհամակարգ 75

Դեպքերի ուսումնասիրությունների ցանկ

Դեպքի ուսումնասիրություն 1. Նանդինին և UberDOST-ը 33

Դեպքի ուսումնասիրություն 2. Շեյլա և Էլանս 34

Դեպքի ուսումնասիրություն 3. ՏՏ-ն փոփոխության համար և Պրակրիեյի կողմից կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման մշակույթի ձևավորումը ՏՀՏ-ների օգտագործմամբ Հնդկաստանում՝ Կարնատակայում 36

Դեպքի ուսումնասիրություն 4. Ինֆոկանայք Բանգլադեշում 37

Դեպքի ուսումնասիրություն 5. Հարավ-արևելյան Հնդկաստանի Թենի շրջանի այծերի հովիվները 37

Դեպքի ուսումնասիրություն 6. ՍԱԶԿԱ-ն հնարավոր է դարձնում փոփոխությունները ՏՀՏ կիրառման միջոցով 38

Դեպքի ուսումնասիրություն 7. Լիխաանը ձևավորել է առցանց քարոզչության ֆորում 40

Դեպքի ուսումնասիրություն 8. Գենդերային մեյնսթրիմինգը Կամբոջայում 44

Դեպքի ուսումնասիրություն 9. Գենդերային աուդիտի գործիքը Վիետնամում 53

Դեպքի ուսումնասիրություն 10. Գենդերային հավասարության ապահովմանն ուղղված բյուջեն Ֆիլիպիններում 55

Դեպքի ուսումնասիրություն 11. Գենդերային մեյնսթրիմինգն Ինդոնեզիայում 56

Դեպքի ուսումնասիրություն 12. Հայդերաբադում (Հնդկաստան) վառառքով զբաղվողներն անտեղյակ էին իրենց համար հասանելի բանկային վարկերի մասին 63

Դեպքի ուսումնասիրություն 13. Գենդերային մեյնսթրիմինգը ՄԳԳՎԶԵԱԱ-ում 71

Դեպքի ուսումնասիրություն 14 Պապուա Նոր Գվինեայի համազգային միկրոբանկը թիրախավորում է կանանց 79

Դեպքի ուսումնասիրություն 15. Ռոտացիոն խնայողությունների և վարկային միավորումը 83

Դեպքի ուսումնասիրություն 16. Քրաուդֆանդինգը Kiva.org-ի միջոցով 84

Հապավումների ցանկ

ԱԶԲ Ասիական զարգացման բանկ

APCICT Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման վերապատրաստման կենտրոն

ԲԶԾ Բիզնեսի զարգացման ծառայություններ

ԲԳԱ Բիզնես գործընթացի աութսորսինգ

ԿՆԽԲՁՎՄԿ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

ESCAP Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովի

ՏՏ Տեղեկատվական տեխնոլոգիներ

ԻՁԾ Ինտերակտիվ ձայնային ծառայություն

ՃՔՀ Ճանաչիր քո հաճախորդին

ՀԶՆ Հազարամյակի զարգացման նպատակ

ՄՓՄՁ Միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրություն

ՄԳԳՎԶԵԱԱ Մահաթմա Գանդիի գյուղական վայրերում զբաղվածության երաշխավորման ազգային ակտ

ՈԿԿ Ոչ կառավարական կազմակերպություն

ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՌԽՎԱ Ռոտացիոն խնայողությունների և վարկերի ասոցիացիա

ՊՊԲ Պակիստանի պետական բանկ

ԿԶՆ Կայուն զարգացման նպատակ

ԻԿԱ Ինքնազբաղ կանանց ասոցիացիա

ՓՄՁ Փոքր և միջին ձեռնարկատիրություններ

ԿՀԾ Կարճ հաղորդագրությունների ծառայություն

ՄԱԶԾ Միացյալ ազգերի զարգացման ծրագիր

ՅՈՒՆԻՍԵՖ Միացյալ ազգերի երեխաների հիմնադրամ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության կեսը, անկախ ռասայից, հավատից, էթնիկ ծագումից, գույնից, ձևից և չափից ծնվել է որպես իգական սեռի ներկայացուցիչ և մեծանալով դառնում է աղջիկ, հետո՝ կին: Պատմության ընթացքում կանայք տարել են երեխաների խնամքի, ընտանիքի և օջախի հոգսերը, իսկ տղամարդկանց դերն է եղել միջոցներ հայթայթել իր ընտանիքի գոյատևման համար:

Հասարակությունների զարգացման արդյունքում և մշակութային, սոցիալական նորմերի և կրոնների ազդեցության հետևանքով այս հարաբերությունները դարձան ավելի ու ավելի բարդ և բազմաբովանդակ: Պատմության ընթացքում կանանց և տղամարդկանց միջև պայքար է գնացել կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների հարաբերություններում հավասարակշռություն հաստատելու համար: Դեպքերի մեծամասնությունում տղամարդկանց կողմից մշակված կանոնները և նորմերն անհավասար էին և նախատեսում էին ավելի մեծ հնարավորություններ տղամարդկանց համար: Հասարակությունների՝ կանանց և տղամարդկանց վերագրած դերերը լավագույնս արտացոլող հասկացությունը գենդերն է:

Գենդերի հետ կապված խնդիրները դուրս են գալիս կանանց և աղջիկներին հասարակական կյանք ներգրավելու խնդրից: Այս խնդիրները դուրս են գալիս ֆեմինիստական շարժման գաղափարախոսության սահմաններից: Անկախ որևէ գաղափարախոսական տարրից՝ գենդերային հիմնահարցերն ընկած իշխանական հարաբերությունների հիմքում՝ լինի դա ֆինանսական անկախության, կանանց և աղջիկների կրթական մակարդակի բարձացման, թե հասարակության կառավարման գործընթացում կանանց հավասար ներկայացվածության հարց:

Հետևաբար, գենդերային խնդիրներն առնչվում են հասարակության մեջ կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների դերերի, իրավունքների և պարտականությունների վերանայմանը: Դրանք նախատեսում են յուրքանչյուրի խաղացած դերի նկատմամբ փոխադարձ հարգանք, ինչպես նաև հավասարություն անկախություն այդ դերերում և գործառույթներում: Որոշ հասարակություններում հիմնական խնդիրները կենտրոնանում են երիտասարդ տղաներին և տղամարդկանց լիարժեք հասարակական կյանք վերադարձնելուն, իսկ որոշներում էլ շեշտը դրվում է կանանց և աղջիկների ներգրավվածության բարձրացմանը և հասարակության մեջ իրենց գիտակից դերը խաղալու հնարավորությունների ընդլայնմանը: Գենդերային հիմնախնդիրների հիմքում են սոցիալական, տնտեսական, կրթական և քաղաքական իրավունքների անհավասարությունները, որոնք պետք է հաղթահարվեն զարգացման նպատակներին հասնելու համար:

Իրավունքների վերանայումը և, հետևաբար, հնարավորությունների ընդլայնումը կարող են դիտարկվել նաև որպես որոշումներ կայացնելու կարողություն (կանանց կողմից անձնական, սոցիալական, տնտեսական և իրենց կյանքին առնչվող այլ որոշումներ կայացնելու հանրավորություն՝ զերծ որևէ արտաքին իմպերատիվներից): Եթե խոսենք հնարավորությունների ընդլայնման մակարդակների մասին, առաջին տեղում կլինեին ֆինանսական իրավունքները և անկախությունը, որը տալիս է անձնական, սոցիալական և այլ ոլորտներում գիտակցված ընտրություն կատարելու հնարավորություն:

Այն դրույթը, որ զարգացումն անհնար է առանց մարդկության կեսի ակտիվ մասնակցության, վիճարկման ենթակա չէ: Այնուամենայնիվ, գենդերի, զարգացման, հաղորդակցության, հազարամյակի զարգաման նպատակների և կայուն զարգացման նպատակների միջև փոխադարձ համալիր կապերը շարունակում են մնալ զարգացման շուրջ բանավեճերի ամենաքիչ հասկացված մասերից են: Նման թեմայի քննարկումը ժամանակին և տեղին է, որովհետև նման գենդերային բանավեճերը պայթյունավտանգ են և վերածվում են բառերի պատերազմի և զգացմունքային պոռթկումների այլ դեպքերում գիտնականների և վարչարարների միջև:

Մոտեցումների մի քանի փուլից հետո՝ սկսած Կանայք զարգացման գործընթացում մոտեցումից դեպի Կանայք և զարգացումը մոտեցումը և, վերջապես, Գենդերը և զարգացումը մոտեցումը, համաշխահային հանրությունն ընդունեց, որ կանայք զրկված են եղել իրենց մարդկայն իրավունքներից: Համաշխարհային հանրությունը հասկացել է, որ առանց գենդերային հիմնքախնդիրները լուծելու հնարավոր չէ հասնել աղքատների կյանքի որակի զգալի բարելավման: Գենդերը պետք է լինի զարգացման համաշխարհային օրակարգի հիմքում:

Գենդերը միջոլորտային խնդիր է, որն արտացոլված է բոլոր այն գլոբալ զարգացման նպատակներում, որոնցում խոսվում է ներառականության, ճկունության և կայունության մասին: Կառավարություններն առանցքային դեր են խաղում իրենց ստանձնած նպատակների իրականացման գործում: Այս է պատճառը, որ առկա է գենդերային հիմնահարցերը հասկանալու անհրաժեշտություն, որին հետևելու է գենդերազգայուն և «խելացի» կառավարման հաստատումը:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) կանանց կարողությունների զարգացման հիմնահարցերը ներկայացրել է «ԿԶՁ»՝ կրթություն, զբաղվածություն, ձեռներեցություն բանաձևի միջոցով: Այս մոդուլը հիմնականում կենտրոնանում է ձեռներեցության, և կանանց շրջանում ձեռներեցությունը խթանելու գործում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) խաղացած դերի վրա:

Մոդուլի որդեգրած այս մոտեցումը բխում է այն ենթադրությունից, որ տնտեսական անվտանգությունն այն գործոնն է, որն ապահովում է մնացած օրակարգային հարցերի արդյունավետ լուծումը, ուստի այն կենտրոնանում է այն հարցի վրա, թե ինչպես քաղաքականություն մշակողները, որոշում կայացնողները և ծրագրեր իրականացնող անձինք պետք է մշակեն գենդերազգայուն քաղաքականություն և իրականացնեն այն:

Երկորդ հարցը, որի վրա կենտրոնանում է այս մոդուլը, այն է, թե ինչպես կարող է օգտագործվել ՏՀՏ-ն հնարավորությունների ընդլայնման գործընացը խթանելու համար: Մոտ հինգ տասնամյակի ընթացքում ՏՀՏ կիրառման փորձը և համապատասխան հետազոտությունները ապացուցում են, որ լայն կիրառման դեպքում ՏՀՏ-ն կարող է զգալի փոփոխություններ մտցնել զարացման գործընթաց: Վերջին քասան տարվա ընթացքում համակարգիչներից և ինտերնետից արդյունավետ կերպով օգտվելու կարողությունը դարձավ մի քանի ասիական երկրների արագ զարգացման առանցքային գործոնը, և դրանց ազդեցությունը զգալի է պետական մարմինների, համալսարանների, զարգացման ինստիտուտների և բիզնեսների գործունեությունում ամբողջ աշխարհում:

Էլ-կառավարումը կամ ՏՀՏ գործիքների կիրառումը պետական ծառայությունների մատուցումը բարելավելու համար դարձել է որակյալ հանրային կառավարման համակարգի և արդյունավետ կառավարման էական բաղկացուցիչ: Հետազոտությունների և պրակտիկ կիրառման ընթացքում պարզ է դարձել, որ էլ-կառավարումը հանգեցնում է է՛լ ավելի մեծ փոփոխությունների հանրային մարմիններում: Էլ-կառավարման սկզբունքների կիրառումը ներառում է խոցելի բնակչության, հատկապես կանանց և աղջիկների կարիքների բավարարումը: Հետևաբար, գենդերազգայուն էլ-կառավարումն արդյունավետ կառավարման կարևորագույն բաղկացուցիչ է:

Այս մոդուլում քննարկվելու են համաշխարհային զարգացման օրակարգերը, մասնավորապես ԿԶՆ-ները և ՏՀՏ ու գենդերային հարցերի միջև փոխադարձ կապը (բաժիններ 2 և 3), որին հետևելու է քաղաքականության մշակման գործընթացում գենդերային մեյնսթրիմինգի կիրառման հիմնահարցը (բաժին 4): Մոդուլի վերջին բաժինը (բաժին 5) կենտրոնանում է գենդերազգայուն պետական քաղաքականության մշակման և իրականացման հարցերի վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց ձեռներեցության խթանման համար ՏՀՏ կիրառման հարցերի վրա:

Այս մոդուլը տարբերվում է «Կանայք և ՏՀՏ» նապխաձեռնության այլ մոդուլներից նրանով, որ այն հատուկ նախատեսված է քաղաքականություն մշակողների համար, և կենտրոնանում է գենդերային հնարավորությունների ընդլայնման առանցքային

սկզբունքների վրա, որոնք ընկած են քաղաքականության մշակման և կառավարության գործունեության հիմքում: Հնարավոր է, որ այս մոդուլում որոշ հարցեր համընկնեն այլ մոդուլներում քննարկվող թեմաներին, սակայն դրանց միջև չկա ոչ մի հակասություն և այս մոդուլում շոշափված հարցերը լրացնում և ամրապնդում են այլ մոդուլներում անդրադարձ կատարված հարցերի մասին գիտելիքները:

II. ԳԵՆԴԵՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԿԶՆ-Ի (ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ) ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուսուցման արդյունքները

- Հասկանալ սեռ-գենդեր հարաբերակցությունը սեփական հասարակության համատեքստում
- Սահմանել կայուն զարգացման նպատակները՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերի հետ կապված նպատակներին
- Հասկանալ կայուն զարգացման նպատակների կառավարման հիմնական սկզբունքները
- Հասկանալ կանանց լիազորությունների ընդլայնման և կայուն զարգացման նպատակների միջև կապը
- Հասկանալ ֆինանսական ներգրավվածությունը և նրա կարևորությունը կանանց իրավունքների ընդլայնման և ձեռներեցության զարգացման մեջ

2 Սեռ-գենդեր հարաբերակցությունը

Սեռը կենսաբանական հասկացություն է՝ պայմանավորված բազմացման ֆիզիոլոգիայով՝ որպես արական և իգական: Գենդերը, այնուամենայնիվ վերաբերվում է հասարակական դերին՝ ասոցացվելով արականի և իգականի գոյությամբ՝ որպես հարաբերություններ կանանց և տղամարդկանց միջև, աղջիկների և տղաների, ինչպես նաև առանձին հարաբերություններ աղջիկների միջև և տղաների միջև:

Այս բաղադրիչներն ու հարաբերությունները կառուցված են սոցիալականապես և ուսումնասիրված են սոցիալիզացիայի միջոցով: Նրանք հասկացութային են, փոփոխելի[1] և կախված են կոնկրետ ժամանակահատվածից: Գենդեր հասկացությունը ներառում է այն սոցիալական ակնկալիքներն ու բնութագրիչները, որ կանայք և տղամարդիկ ունեն միմյանց նկատմամբ: Այս ամենը պայմանավորված

[1] ՄԱԶԾ, «UNDP, "Գենդերային և ժողովրդավարական կառավարման հիմունքներ#4: Գենդերազգայուն էլ-կառավարում: Փոխակերպման ներուժի ուսումնասիրում», 2008թ.: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.undp.org/content/dam/aplaws/publication/en/publications/womens-empowerment/primers-in-gender-and-democratic-governance-4/f_GenderGovPr_eG_Web.pdf:

է նաև մշակույթով, էթնիկությամբ, ռասայով և այլն, ինչպես նաև փոփոխելի է ժամանակի ընթացքում:

Տարածված ենթադրություն է, երբ գենդերի թեմայի քննարկումը բացառապես տղամարդկանց և կանանց գործն է: Մինչդեռ այս ենթադրությունը սխալ է: Սա արտացոլումն է պատմական ստորադասման այն պայմանի և անհավասարության, որ կանայք և աղջիկները փորձառու են շատ հասարակություններում: Այս անհավասարության հաղթահարումը և լիակատար բավարարվածություն կլինի մարդու իրավունքների գլխավորապես տղամարդիկ և տղաները մաս կազմեն գենդերային հավասարության[2] շարժման: Կենսականորեն հավասարությունը նշանակում է հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ բոլորի համար, անկախ նրանից նրանք աղջիկ են ծնվել, թե տղա:

Գենդերային հավասարությունը արդար լինելու ընթացք է տղամարդկանց և կանանց միջև: Սրան հասնելու համար անհրաժեշտ է տեղում ձեռնարկել միջոցներ կոմպենսացնելու համար այն պատմական և սոցիալական վնասները, որ խանգարում են կանանց և տղամարդկանց գործել նույն մակարդակի դաշտերում: Իրավահավասարությունը միջոց է, հավասարությունը՝ արդյունք:[3]

Գենդերային իրավահավասարության միջոցով գենդերային հավասարության ձեռքբերման ուղղությամբ աշխատանքն այն է, ինչին նվիրված է եղել համաշխարհային հանրության ջանքերը վերջին 5 տասնամյակներում:

2.2 Կայուն զարգացման նպատակներ

Կայուն զարգացումը[4] մարդկության ապագայի համար ընդունված համաշխարհային օրակարգ է, որն արտացոլված է 2030 օրակարգում: Այս օրակարգը կարող է կյանքի կոչվել համամարդկային ուժերի միոցով, և եթե տարբեր պատճառներով մարդկանց որևէ խումբ կամ շրջան դուրս է մնում այս օրակարգից, այն չի կարող լիարժեք իրականացվել:

---

[2] Նույն տեղում

[3] ՅՈՒՆԵՍԿՕ, «Գենդերային մեյնսթրիմինգի իրականացման շրջանակ: Աձանցքային հայեցակարգերի և հասկացությունների հիմնարար սահմանումներ», 2003 թ. ապրիլ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unesco.org/new/fileadmin/MULTIMEDIA/HQ/BSP/GENDER/PDF/1.%20Baseline%20Definitions%20of%20key%20gender-related%20concepts.pdf:

[4] Ամբողջական փաստաթուղթը և մանրամասները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://sustainabledevelopment.un.org/post2015/transformingourworld:

Ի՞նչ է կայուն զարգացումը

Կայուն զարգացումն այն զարգացումն է, որը բախվում է ապագայի կարիքներին՝ առանց հաշվի առնելու ապագա սերունդների ունակությունը բախվելու իրենց կարիքներին: Այն բաղկացած է երկու առանցքային հասկացություններից.

- Կարիքներ հասկացությունից, մասնավորապես աշխարհի աղքատության կենսական կարքիները, որին առավելապես պետք է տալ գերակայությունը:
- Սահմանափակումների գաղափարը պայմանավորված է տեխնոլոգիայի վիճակով և հասարակական կազմակերպության ներկա և ապագա կարիքները բավարարելու շրջակա միջավայրի ունակությամբ:

Կարևոր է հասկանալ կայուն զարգացման նպատակների երեք առանցքային հասկացությունները՝

- Ճկունություն
- Ընդգրկունակություն
- Կայունություն

Ճկունությունը խմբերի, համայնքների ունակությունն է հաղթահարել արտաքին սթրեսները և խռովությունները, որոնք արդյունքն են սոցիալական, քաղաքական և միջավայրային փոփոխությունենրի:[5] Հասարակության կամ խմբի ճկունության աստիճանը որոշվում է փոփոխվող եղանակին, կլիմայական պայմաններին հարմարվելու ունակությամբ, ինչպես նաև ունակությունն է հարմարվել էպիզոդներին կապված ծայրահեղ անձրևներին և երաշտին, ինչպես նաև ունակությունն է վերականգնելու աղետը:

Ներառականությունը նշանակում է, որ բոլոր խոցելի համայնքները, հատկապես այնտեղ, որտեղ կան և բնիկներն ու եկվորները, մարգինալացվածներ, կոնֆլիկտներից տուժածներ, տեղահանվածներ, անաշխատունակներ ու հաշմանդամներ, անհրաժեշտ է, որ ներառված լինեն մարդկային զարգացման գործընթացներում: Ի թիվս բոլոր այս նշած համայնքներում կանայք և տղամարդիկ են, կազմում են աշխարհի բնակչության կեսը անկախ ազգությունից, դասակարգից, կրոնից, էթնիկությունից, կամ ցանկացած այլ դասակարգից, որը կարող է ընտրվել դիմելու: Բոլոր երկրներում էլ կանայք և տղամարդիկ իրենց ունակություններով

[5] Ու. Նեյլ Ադգեր, «Սոցիալական և բնապահպանական ճկունություն: Արդյո՞ք դրանք փոխկապակցված են», Մարդկային աշխարհագրության առաջընթաց, համար 24, 2000թ. սեպտեմբեր, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://groups.nceas.ucsb.edu/sustainability-science/2010%20weekly-sessions/session-102013-11.01.2010-emergent-properties-of-coupled-human-environment-systems/supplemental-readings-from-cambridge-students/Adger_2000_Social_ecological_resilience.pdf:

տարբեր են կատարելու արդյունավետ կյանքի ընտրություն տարբեր ոլորտների շրջանակում, կանանցը որպես կանոն ավելի անբարենպաստ է:

Կայունությունն ընդգրկում է երեք առանցքային տարրեր, որոնք փոխկապակցված են.

1. Տնտեսական աճ
2. Սոցիալական ներառում
3. Շրջակա միջավայրի պաշտպանություն

Գենդերային հավասարությունը սոցիալական ներառականության մաս է:

Եզրակացությունն այստեղ այն է, որ հնարավոր չէ հասնել իրական և կայուն զարգացման, եթե հասարակության լայն զանգվածներ զրկված են զարգացման բարիքներից: Ավելի պարզ ասած՝ ոչ ոքի չի կարելի արհամարհել: Սրան հասնելու համար անհրաժեշտ է բոլոր մակարդակների և ոլորտների զարգացման մարմինների միջև և կողմից համակարգված աշխատանքի իրականացում:

2.3 Կայուն զարգացման նպատակները և կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը

Գենդերային տարբերություններով ու անհավասարությամբ պայմանավորված կանայք և տղամարդիկ ունեն տարբեր փորձառություն, գիտելիք, տաղանդ և կարիքներ: Հետևապես, արական և իգական սեռերի վրա զարգացման նախաձեռնությունը կարող է ազդել չափազանց տարբեր կերպ: Կանայք հաճախ հանդիպում են մասնակցային խոչընդոտների նույնիսկ առանց գենդերային դինամիկայի կանխամտածված քննարկման:

Օրինակի համար, Սննդի և գյուղատնտեսության կազմակերպությունը գնահատում է, որ եթե կանայք ունենային հավասար մուտք և հնարավորություն, արտադրող ռեսուրսներ, գյուղատնտեսական արտադրությունը կաճեր 20-30 տոկոսով, որը կարող է իր հերթին մեծացնել է գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր աճը զարգացող երկրներում 2.5-ից 4 տոկոսով և նվազեցնում քաղցածների թիվը աշխարհում 10-12 տոկոսով:[6]

Կապ չունի, թե զեկույցն ում է ուղղված: Բոլոր զեկույցներն ընդգծում են կանանց և աղջիկների ստորադաս ստատուսը, չնայած նրանց ներդրումներին տնային

[6] Սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն, Սննդի և գյուղատբտեսական իրավիճակը 2010-2011թթ: Կանայք գյուղատնտեսության մեջ. Գենդերային բացի փակում հանուն զարգացման (Հռոմ, 2011թ.): Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.zaragoza.es/contenidos/medioambiente/onu/095-eng-ed2010-2011.pdf:

տնտեսություններում, համայնքներում և հասարակություններում: Հետևապես, կանայք ունեն պակաս սեփականատիրություն և վերահսկողություն արժեքավոր բաների վրա, նվազեցված է որոշումների ընդունման կարողությունը, ունեն ավելի քիչ կրթական և տնտեսական հնարավորություններ, քան տղամարդիկ, մինչդեռ ունեն կրկնակի ծանրաբեռնվածություն չվճարվող տնային պարտականությունների և արտաքին աշխատանքի[7]: Բավականին հայտնի է նաև կանանց և աղջիկների խոցելիությունը գենդերային բռնության, պոռնոգրաֆիայի, սեռականության[8], մարդկային թրաֆիքինգի, և մարդու իրավունքների ժխտման տարբեր ձևերի մասին:

Որոշ եզրահանգումների ենք հասնում այնպիսի ոլորտներում, ինչպիսին է կրթությունը, առողջապահությունն ու շրջակա միջավայրի պաշտպանությունը: Որ կողմ էլ նայենք, զարգացման տարբեր մակարդակներում և համընդհանուր ուսումնասիրությունը հետևողականորեն ցույց է տալիս, որ եթե կան հավասար հնարավորություններ, հավանականությունը մեծ է, որ հավասարակշռությունն ու ավելի անաչառ աճը մեծ է:

Միջազգային համաձայնագրերը ստորագրվել են բոլոր երկրների կողմից որն ընդգրկված է ՄԱԿ-ի՝ Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայում: CEDAW-ը Կանանց իրավունքների միջազգային օրինագիծ է[9], որը նվիրված է կանանց դեմ բռնությունների բոլոր ձևերի նվազեցմանը:

Գործողությունների պեկինյան հարթակը, որն ընդունվել էր ՄԱԿ-ի՝ կանանց հարցերով չորրորդ համաժողովի ժամանակ 1995թ., կառավարություններին, միջազգային հանրությանը, ՈՀԿ-ներին և մասնավոր ոլորտին կոչ էր անում ռազմավարական քայլեր ձեռնարկել հետևյալ առանցքային ոլորտներում.

- Կանանց աղքատության շարունակական աճող բեռը,
- Կրթական, վերապատրաստման, առողջապահության և հարակից այլ ոլորտների անհավասար հասանելիությունը և դրանցում առկա անհավասարությունները,
- Կանանց նկատմամբ բռնությունը,
- Զինված կամ այլ տեսակի հակամարտությունների ազդեցությունը կանանց, ներառյալ օտարերկրյա օկուպացիայի տակ ապրող կանանց վրա,

---

[7] ԱՄՆ Միջազգային զարգացման օրակարգ, «Գենդերային հավասարություն և կանանց հնարավորությունների ընդլայնում: Գենդերի ինտեգրում», 2012թ.: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://transition.usaid.gov/our_work/cross-cutting_programs/wid/gender/index.html:

[8] Սեռաշորթումը (sextortion) սեռական շահագործման ձև է, որը ենթադրում է հարկադրանքի ոչ ֆիզիկական ձևեր՝ զոհից սեռական բարիքներ ստանալու համար: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://en.wikipedia.org/wiki/Sextortion:

[9] ՄԱԿ կանայք, «Ամփոփաթերթ: ԿՆԽԲՁՎՄԿ»-ն և կանանց միգրացիան Ասիայում»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://asiapacific.unwomen.org/en/digital-library/publications/2012/9/factsheet-cedaw-and-womens-migration-in-asia:

- Անհավասարություն տնտեսական կառույցներում և քաղաքականություններում, արտադրական գործունեության բոլոր ձևերում և ռեսուրսների մատչելիության հարցում,
- Կանանց և տղամարդկանց անհավասարությունը իշխանության բաժանման և որոշումների ընդունման գործընթացներում: Բոլոր մակարդակներում կանանց հնարավորությունների ընդլայնման մեխանիզմների անբավարարությունը,
- Կանանց մարդկային իրավունքների նկատմամբ հարգանքի պակասը և դրանց անբավարար խթանումն ու պաշտպանությունը,
- Հաղորդակցության համակարգերում, հատկապես լրատվամիջոցներում կանանց կարծրատիպային կերպարի ձևավորում և դրանց հասանելիության և դրանցում մասնակցության անհավասարություն,
- Գենդերային անհավասարություն բնական ռեսուրսների կառավարման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում,
- Աղջիկ երեխաների նկատմամբ շարունակական խտրականությունը և նրանց իրավունքների խախտումը:

Հազարամյակի զարգացման նպատակների ամփոփիչ հաշվետվությունները 2000-2015 թվականներին ցույց են տվել, որ գրանցվել են բազմաթիվ հաջողություններ մարդկանց աղքատությունից հանելու գործում: Այնուամենայնիվ, գենդերային անհավասարությունները շարունակում են մնալ արդիական, հատկապես այն հանգամանքը հաշվի առնելով, որ ավելի շատ կանայք են ապրում աղքատության մեջ, քան տղամարդիկ, ինչը հանգեցրել է «աղքատության ֆեմինիզացիա» կոչվող ֆենոմենին: Այսօր կանանց համար դեռևս պակաս հասանելի են կրթությունը, տնտեսական ռեսուրսները և աշխատանքը, և կանայք թերներկայացված են և մասնավոր, և հանրային «որոշում կայացնող» դիրքերում/պաշտոններում:

Գենդերային պարիտետի է հաջողվել հասնել (պարիտետ՝ թվային հավասարություն, որը հաշվարկվում է Գենդերային պարիտետի ցուցիչի միջոցով) նախնական դպրոցական ուսուցման ոլորտում: Այժմ երեխաների մահացության մակարդակն ավելի ցածր է, մայրական առողջության և խնամքի մակարդակը բարձրացել է ամբողջ աշխարհում: Այնուամենայնիվ, կանայք շարունակում են թերներկայացված լինել իրենց աշխատավայրում և ավելի քիչ են վարձատրվում իրենց աշխատանքի դիմաց՝ անկախ իրենց կրթական մակարդակից: Նման գենդերահեն բացերը շարունակում են արդիական մնալ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

Ընդհանուր 17 ԿԶՆ-ներից 5-րդ նպատակը գենդերային հավասարության հասնելն ու բոլոր կանանց և աղջիկների հնարավորությունների ընդլայնումն է:

ԿԶՆ 5: Հասնել գենդերային հավասարության և ընդլայնել բոլոր կանանց և աղջիկների հնարավորությունները

ԿԶՆ 5-ը անդրադառնում է գենդերային հավասարության և բոլոր կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնման հարցերին: Դրա հիմնական թիրխներն են.

5.1 Հասնել ամենուր կանանց և աղջիկների դեմ խտրականության բոլոր ձևերի վերացմանը,
5.2 Վերացնել կանանց և աղջիկների դեմ բռնության բոմոր ձևերը հանրայի և մասնավոր ոլորտներում, ներառյալ թրաֆիկինգը և սեռական և այլ տեսակի շահագործումը,
5.3 Վերացնել այնպիսի վնասակար սովորույթներ, ինչպիսեք են երեխաների վաղ և հարկադրական ամուսնությունը և կանանց սեռական օրգանների խեղումը:
5.4 Ճանաչել և գնահատել չվարձատրվող տնային աշխատանքը հանրային ծառայությունների մատուցման, ենթակառուցվածքների և սոցիալական պաշտպանության քաղաքականության, ինչպես նաև տնային տնտեսությունում և ընտանիքում համատեղ պատասխանատվությունը խթանելու միջոցով՝ հարմարացնելով այն ազգային պայմաններին:
5.5. Ապահովել կանանց ամբողջական և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային ոլորտներում որոշումների կայացմանը, այդ թվում՝ ղեկավար մակարդակում:
5.6 Ապահովել սեռական և վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների համընդհանուր մատչելիությունը՝ Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի միջոցառումների ծրագրի և Գործողությունների պեկինյան հարթակի սկզբունքներին համապատասխան:
5ա) Իրականացնել բարեփոխումներ կանանց և աղջիկներին տնտեսական ռեսուրսների, ինչպես նաև հողի և սեփականության այլ ձևերի տիրապետման և տնօրինման իրավունք տալ, հասանելի դրածնել ֆինանսական ծառայությունները, ժառանգական իրավունքները և բնական ռեսուրսները՝ ազգային օրենքներին համապատասխան:
5բ) Մեծացնել կարողությունները մեծացնող տեխնոլոգիաների, հատկապես ՏՀՏՃի կիրառումը կանանց հնարավորությունների ընդլայնման գործընթացը խթանելու համար:
5գ) Մշակել և զարգացնել արդյունավետ քաղաքականություններ և կիրարկելի օրենսդրություն՝ գենդերային հավասարությունը և բոլոր մակարդակներով կանանց և աղջիկների հնարավորություներ ըդայնումը խթանելու համար:

Ի հավելումն ԿԶՆ 5-ի, որն ուղղակիորեն անդրադառնում է կանանց և աղջիկների կարիքներին, մնացած բոլոր 16 ԿԶՆ-ներն էլ ընդգծում են ներառական և ունիվերսալ լինելու անհրաժեշտությունը բոլորի համար: Սա նշանակում է, որ չնայած կանանց և աղջիկների կարիքներին հատուկ անդրադարձ է կատարվում նպատակ 5-ում, այնուամենայնիվ այլ ԿԶՆ-ների իրականացմանն ուղղված գործընթացները նույնպես պետք է ընդգրկեն կանանց և աղջիկներին և այլ խոցելի տարրերին:

Առանց կառավարության ակտիվ մասնակցության՝ հավասար զարգացում և կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնում չի կարող տեղի ունենալ:

Սա մեզ բերում է «հնարավորությունների ընդլայնում» հասկացությանը, որը պետք է ներկայացվի մինչ գենդերային հավասարության հաստատման և կանանց հնարավորությունների ընդլայնման գործում կառավարության դերի քննարկմանն անցնելը:

2.4 Ի՞նչ է նշանակում իրավունքների և հնարավորությունների ընդլայնում

Զարգացման դիսկուրսներում իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը լայն բանավեճերի առարկա է, որը հաճախ տարբեր կերպ է սահմանված և նկարագրված տարբեր ակադեմիկոսների, պրակտիկանտների և հետազոտողների կողմից: Երբեմն տերմինն օգտագործվում է <<ներկայացվածության>> փոխարեն և հաճախ տնտեսական, սոցիալական կամ քաղաքական ձևերի հետ հարաբերությամբ: Ըստ էության, այս ամենը և շատ ավելին:

ՄԱԿ-ը սահմանում է իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը հետևյալ կերպ.

> Իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը նշանակում է, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ կարող են տնօրինել իրենց կյանքը, կազմել իրենց օրակարգը, ձեռք բերել հմտություններ (կամ ճանաչել տալ իրենց հմտություններն ու գիտելիքները), մեծացնել ինքնավստահությունը, լուծել խնդիրները և ամրապնդել ինքնուրույնությունը[10]:

Այս հասկացությունն ընդլայնելու և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը որպես գործընթաց դիտարկելու դեպքում հնարավոր կլինի չափել, թե որքանով կանայք/աղջիկներն ունեն.

[10] ՄԱԿ կանայք, «Կանանց հնարավորությունների ընդլայնման սկզբունքներ: Հավասարությունը նշանակում է բիզնես», երկրորդ հրատարակչություն, 2011 թ.: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unwomen.org/en/digital-library/publications/2011/10/women-s-empowerment-principles-equality-means-business:

- **վերահսկողություն ռեսուրսների նկատմամբ**, որը չափվում է վաստակելու և եկամուտը վերահսկելու, նյութական կարողությանը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու կանանց հնարավորությամբ,
- **ազատորեն տեղաշարժվելու հնարավորություն**, որը չափվում է սեփական տեղաշարժն ազատորեն որոշելու և իրենց բնակարաններից տեղափոխվելու կարողությամբ,
- **ընտանիք կազմելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք**, որը չափվում է կանանց և աղջիկների հնարավորությամբ՝ որոշելու՝ երբ և ում հետ ամուսնանալ, երբ և քանի երեխա ունենալ և երբ ամուսնալուծվել,
- **ազատություն բռնության ռիսկից**, որը չափվում է տնային բռնության և սեռական, ֆիզիկական կամ հոգեբանական բռնության այլ ձևերի տարածվածությամբ,
- **հասարակության մեջ ձայն և քաղաքականության մեջ ազդեցություն ունենալու կարողություն**, որը չափվում է պաշտոնական քաղաքականության մեջ մասնակցությամբ և ներկայացվախությամբ և կոլեկտիվ գործողությունների ու ասոցիացիաների մեջ ներգրավվածությամբ[11]:

Այստեղ վիճարկվում է այն գաղափարը, որ գործակալության գործունեության հիմքում ընկած է տնտեսական իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը, քանի որ տնտեսական իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը կարող է զարգացնել այն նյութական պայմանները, որոնք անհրաժեշտ են այլ իրավունքների իրացման համար: Ձեռներեցությունը՝ որպես կանանց ուժեղացնելու, զբաղվածություն ապահովելու, հասարակությունը վերափոխելու և աղքատությունը կրճատելու ներուժ ունեցող շատ տնտեսություններում տնտեսական իրավունքների և հնարավորությունների ընդլայնման ձևերից մեկը, տնտեսական զարգացման և աճի կարևորագույն շարժիչ ուժն է[12]:

Ավելի մեծ եկամուտները ավելի են մեծացնում մուտքը դեպի սոցիալական և այլ ծառայություններ: Ավելին, ավելի մեծ եկամուտները նվազեցնում են տնտեսական կախվածությունը և այսպիսով հնարավոր դարձնում ավելի մեծ մասնակցությունը և ավելի մեծ կշռի ձեռքբերումը՝ ինչպես ընտանիքի, այնպես էլ հասարակության

---

[11] Համաշխարհային բանկ, «Կանանց օրակարգի առաջմղում», Համաշխարհային զարգացման վերաբերյալ զեկույց, (Վաշինգթոն, 2012թ), հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://siteresources.worldbank.org/INTWDR2012/Resources/7778105-1299699968583/7786210-1315936222006/chapter-4.pdf:

[12] ՏՀԶԿ, «Գենդերային հավասարությունը «Երեք Es-ում» Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում», Հայացք հասարակությանը: Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, 2014թ., էջ 41: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.oecdilibrary.org/docserver/download/8114171ec005.pdf?expires=1464400445&id=id&accname=guest&checksum=AA2CD88D76694B1591FAF95AA8C10D24:

ներսում: Եթե կանայք կարող են ունենալ իրենց սեփական եկամուտները, ապա մեծանում է ներկայացուցչությունն ապահովելու նրանց կարողությունը:

Սակայն միայն տնտեսական աճը և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը չեն կարող վերացնել գենդերային անհավասարությունները, բայց սա կարևոր խթան է: Սա չի նշանակում, որ այլ սոցիալական, օրինական և քաղաքական պայմանները կարևոր չեն, քանի որ դա այդպես չէ, և եթե կառավարությունները խաղում են դրական և վճռական դեր այնպիսի իրավական շրջանակների ձևավորման մեջ, որոնք նվազեցնում են նման անհավասարությունները, արդյունքում տեղի կունենա տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնում:

2. 5 Ֆինանսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնում ձեռներեց կանանց համար

Ձեռներեցների համար ամենալուրջ մարտահրավերներից է ֆինանսների և վարկերի փոքր հասանելիությունը: Դեռ ավելին, կանայք, ում խոչընդոտում է սեփականության և սեփականության ու ֆինանսների տնօրինման սոցիալական, կրթական և իրավական սահմանափակումները: Գլոբալ առումով գրանցվեց ֆինանսավորման խթան, որը վերացնում է այս բոլոր սահմանափակումները:

Հանրամատչելի ֆինանսավորումը, ըստ ՄԱԿ-ի, սահմանվում է որպես խելամիտ արժեքով մուտք դեպի տարբեր հանրամատչելի ֆինանսավորման և կայուն ինստիտուտների կողմից տրամադրվող լայն ֆինանսական ծառայություններ[13]:

Չայած սահմանումը կարող է տարբերվել[14], լայն շրջանակների կողմից ընդունված է, որ հանրամատչելի ֆինանսները չեն վերաբերում միայն դեպի այնպիսի ֆինանսական ծառայությունների հասանելությանը, ինչպիսիք են վճարումները, խնայողությունները, վարկերը և ապահովագրությունը: Հանրամատչելի ֆինանսները նաև վերաբերում են ֆինանսների հասանելիությանը և դրանց օգտագործմանը, հաճախորդների

[13] ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն, «Ներառական և տեղական ֆինանսներ»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.un.org/esa/ffd/topics/inclusive-finance.html:

[14] Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամն առաջարկել են ավելի որոշակի և չափելի սահմանում, համաձայն որի՝ «ներառական ֆինանսներն այն անհատների և ընկերությունների համամասնությունն է, որոնք օգտվում են ֆինանսական ծառայություններից»: Այս սահմանումն ավելի շատ ընդգրկում է ոչ թե հասանելիությունը, այլ փաստացի օգտվելու փաստը: Մյուս կողմից ESCAP-ի 2015 թվականի քննարկումների թերթիկը տալիս է ավելի ներառական սահմանում՝ ներառական ֆինանսները սահմանելով որպես «համապատասխան ֆինանսական արտադրանքին և ծառայություններին հասանելիության ապահովման գործընթաց, որոնց կարիքն ունի ամբողջ հասարակությունը և, մասնավորապես, խոցելի խմբերը: Դա պետք է ապահովվի չափավոր գնով, արդար և թափանցիկ ձևով գլխավոր ինստիտուցիոնալ խաղացողների կողմից»:

ֆինանսական գրագիտությանն ու վերջիններիս պաշտպանությանը, ֆինանսական կարգավորման, գնահատման ու մշտադիտարկման պետական մեխանիզմներին:

Կանանց ֆինանսական ներգրավվածության ամենաուժեղ փաստարկները տնտեսական են՝ ֆինանսների հասանելիությունն ընդլայնում է մուտքը դեպի արտադրական ակտիվներ և ընդլայնում արտադրողականությունը, իսկ ֆինանսական միջնորդությունը կապված է ավելի մեծ տնտեսական աճի հետ:

Կանանց շուկան (կամ կանայք՝ որպես շուկա) շատ մեծ է և ներկայացնում է կանանց շատ սեգմենտներ՝ ոչ պետական սեկտորում ցածր եկամուտ ունեցող ինքնազբաղ կանայք, գյուղատնտեսության և հողագործության ոլորտում աշխատող կանայք, փոքր և միջին ձեռնարկատիրություն (ՓՄՁ) և ցածր եկամուտ ունեցող վարձու աշխատողներ (օրինակ, գորաճարանի աշխատակիցներ, տնային աշխատողներ): Այս խմբի ամենաընդհանուր և հաճախ նշվող հատկանիշն այն է, որ վերջիններս հաճախ են զրկվում ֆինանսական ծառայություններից՝

- սահմանափակ ֆինանսական կարողության և ֆինանսական գրագիտության բացակայության պատճառով,
- սեփականության մասին օրենքների պատճառով, գրավի պահանջները բավարարելու անկարողության պատճառով,
- աշխատելու, պայմանագրեր ստորագրելու, բանկային հաշիվներ բացելու և սեփականություն ունենալու իրավունքի սահմանափակման պատճառով,
- անձը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով,
- առանց ամուսնու համաձայնության վարկեր ձեռք բերելու անկարողության պատճառով:

Թեմայի վերաբերյալ զեկույցները ցույց են տվել, որ կանայք հաճախ մատնացույց են անում ֆինանսավորման հասանելիությունը՝ որպես հիմնական խոչընդոտ: Հետևաբար, սահմանափակումների վերացումը վճռական նշանակություն ունի: Ֆինանսական մատչելիության ընդլայնումը կանանց պահանջներին համապասխան պահանջում է կշռադատված ուշադրություն քաղաքական որոշումներ կայացնողների կողմից և սեռի հիման վրա տարանջատված տվյալների հավաքագրում՝ նման որոշում կայացնելու համար:

Ձեռներեց կանանց համար ֆինանսական ներգրավվածությունն ընդգրկում է ֆինանսական ապրանքների լայն շարք՝ ներառյալ վարկեր, խնայողություններ, ապահովագրություն, վճարումներ և տեղական ու միջազգային դրամական փոպանցումներ, որոնք կարող են բարելավել սոցիալապես անապահով մարդկանց և ՓՄՁ-ների կյանքը:

Պատկեր 1. Ներառական ֆինանսների փոխանցման մեխանիզմները



Աղբյուր՝ Էզազուլ Իսլամ, «Ներառական ֆինանսները Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Միտումներ և մոտեցումներ», Քննարկման նախագիծ, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում բարձ մակարդակով խորհրդակցություն զարգացման ֆինանսավորման վերաբերյալ, Ջակարտա, Ինդոնեզիա, 29-30 ապրիլի, 2015թ : Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unescap.org/sites/default/files/3-ESCAP_ FfD_Financial%20inclusion_24April2015.pdf.

2.5.1 Ֆինանսական ապրանքներ և ծառայություններ

Միկրոֆինանսավորումը ֆինանսական ծառայությունների տրամադրումն է այն անհատներին ու ինստիտուտներին, որոնք դուրս են մնացել այնպիսի պետական ֆինանսական ինստիտուտներից, ինչպիսին են բանկերը, քանի որ չեն կարող բավարարել այս ինստիուտների կողմնակի պահանջները:

1970-ական թթ. Բանգլադեշի Գրամին բանկն առաջինն աշխարհում իրականացրեց միկրոֆինանսավորում, որը շուտով տարածվեց աշխարհի զարգացող երկրների շրջանում: Միկոֆինանսավորման ինստիտուտները սկսեցին միկրովարկերի (կամ փոքր վարկերի) առաջարկից, սակայն ընդլայնվեցին մինչև ֆինանսական

ծառայությունների լայն համալիրի՝ համապատասխանելով զարգացող երկրներում ցածր եկամուտ ունեցող խմբերի կարիքներին:

Միկրոֆինանսավորումը հաճախ թիրախավորում է ձեռներեց կանանց՝ համապատասխան փաթեթներով: Ձեռներեց կանանց համար նախատեսված միկրոֆինանսավորման տարբերակները ներառում են՝

- **Միկրոխնայողություններ** – խնայողական հաշիվներ ցածր կամ նույնիսկ նվազագույն հաշվեկշռի պահանջներով՝ այսպիսով հնարավորություն տալով կանանց կուտակել միջոցներ
- **Միկրովարկ** – փոքր եկամտով և առանց ֆիզիկական գրավի փոքր վարկերի տրամադրում նրանց, ում համար այս ամենը անհասանելի էր սոցիալական անապահովության, գործազրկության կամ ցածր վարձատրության, կապիտալի բացակայության և վարկային պատմության բացակայության պատճառով
- **Միկրոապահովագրություն** – ցածր հավելավճարով կամ փոքր հնարավորություններ ունեցող սոցիալապես անապահով մարդկանց համար նախատեսված ապահովագրություն: Այս պարագայում ամենամեծ մարտահրավերը հաճախորդներին ծառայության արժեքը սովորեցնելը և զանգվածային շուկայի իրազեկումն է:

2.5.2 Ֆինանսական հանրամատչելիության առաջարկն ու պահանջարկը

Վերոնշյալ նկարագրված տարբերակները ֆինանսական հանրամատչելիության առաջարկի մի մասն են, որն ապահովում է ֆինանսական շուկաների/ ծառայությունների մատակարարումը և բանկերի ու այլ ինստիտուտների ինստիտուցիոնալ հնարավորությունները: Գոյություն ունի նաև պահանջարկի հատվածը, ինչպիսին է հաճախորդների տեղեկացվածությունը և ֆինանսական ապրանքների մասին գիտելիքները, ֆինանսական գրագիտությունը և վարկի յուրացման կարողությունը, որը ևս պետք է հաշվի առնել[15]:

Միկրոֆինանսավորման միայն առաջարկի հատվածի ապահովումը բավարար չէ: Այն պետք է զուգորդվի պահանջարկի հատվածի գործոններով, ինչպիսիք են

[15] Էզազուլ Իսլամ, «Ներառական ֆինանսներն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Միտումներ և մոտեցումներ», Քննարկումների թերթի նախագիծ, Ասիա-խաղաօվկիանոսյան տարածաշրջանում բարձրամակարդակ խորհրդատվություն զարգացման գինանսավորման վերաբերյալ, , Ջակարտա, Ինդոնեզիա, 29-30 ապրիլի, 2015 թ.: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unescap.org/sites/default/files/3-ESCAP_FfD_Financial%20inclusion_24April2015.pdf:

ֆինանսական գրագիտության տարածումը, սպառողական ֆինանսական կարողությունների ստեղծումը և սպառողների պաշտպանության քաղաքականության մշակումը, որը հաշվի է առնում ոչ ֆորմալ տնտեսության սոցիալապես անապահով ընտանիքների սահմանափակումները և պայմանները:

Ֆինանսական գրագիտությունը և կրթությունը բաղկացած են երեք բաղադրիչներից՝

- **Ֆինանսական գրագիտություն** – հմտություններ և գիտելիքներ գրագետ ֆինանսական որոշումներ կայացնելու համար:
- **Ֆինանսական կրթություն** – ֆինանսապես գրագետ լինելու համար գիտելիքների, հմտությունների և մոտեցումների ձեռքբերման գործընթաց: Այն մարդկանց ներկայացնում է գումարի տնօրինման լավագույն մեթոդները՝ գումար վաստակելու, ծախսելու, խնայելու, փոխառության և ներդրումների համար:
- **Ֆինանսական հնարավորություններ** – ֆինանսական գրականության մեջ ներկայացված գիտելիքները և հմտությունները օգտագործելու հնարավորություն և ունակություն: Ֆինանսական հնարավորությունը շատ վելի լայն հասկացություն է, որն անհրաժեշտաբար կապում է անհատական գործունեությունը ֆինանսական համակարգերի միավորների հետ:

2.5.3 Ֆինանսական հանրամատչելիության հիմնախնդիրները

Զարգացող երկրներում տնային տնտեսությունների ամենաանապահով 40 տոկոսի մեջ չափահասների ավելի քան կեսը չունեն մուտք դեպի բանկային ծառայություններ[16]: Բանկային ծառայություններից զրկված ամեն հինգերորդ քաղաքացին բանկային հաշիվ չունենալու պատճառ է նշում հեռավորությունը[17]: Այսպիսով, հասանելիությունը խնդիր է, որին պետք է լուծում տա կառավարությունը:

ՓՄՁ-ները և ձեռներեցները զարգացող երկրներում ավելի շատ սահմանափակումների են հանդիպում ֆինանսավորման պարագայում: Զարգացող երկրներում փոքր ձեռնարկատիրության միայն 18 տոկոսն ունի վարկեր[18]: Սրա պատճառը կարող է լինել հեռավորությունը, ինչպես նաև վերոնշյալ մի շարք այլ պատճառներ՝ ներառյալ վարկերն ապահովելու համար գրավի բացակայությունը, ոչ

[16] World Bank, "The Global Findex Database 2014". Available from http://www.worldbank.org/en/programs/globalfindex. This is a comprehensive database on financial inclusion, launched by the World Bank, to provide in-depth data on how individuals save, borrow, make payments, and manage risks. Collected in partnership with the Gallup World Poll and funded by the Bill & Melinda Gates Foundation, the Global Findex Database is based on interviews with about 150,000 adults in over 140 countries.

[17] The unbanked refers to those who do not have a bank account at a formal financial institution. Distance refers to the formal financial institution being too far away.

[18] World Bank, "Enterprise Survey 2014". Available from http://data.worldbank.org/data-catalog/enterprise-surveys.

պատշաճ ֆինանսական գրագիտությունը և հաճախորդների պաշտպանվածությունը, ինչպես նաև սոցիոմշակութային սահմանափակումները, որը ներառում է գենդերային անհավասարությունը:

Մուտքը դեպի ֆինանսական միջոցներ հավասարպես ապահովված չէ կանանց և տղամարդկանց համար՝ հաշվի տնօրինման, խնայողական, վարկային և վճարային ծառայությունների առումով: Հարավային Ասիայում բանկային հաշիվների տիրապետման առումով գենդերային բացը ամենամեծն է՝ տղամարդկանց և կանանց միջև 18 տոկոսային կետերի տարբերությամբ[19]:

Այդ բացը տարածվում է բանկային հաշվի բացումից էլ այն կողմ: Կանայք ֆորմալ ինստիտուտների միջոցով խնայողությունների և փոխառությունների տեմպերով նկատելիորեն հետ են մնում տղամարդկանցից[20]:

Սահմանափակ մուտքը դեպի ֆինանսներ հսկայական խոչընդոտ է ձեռներեց կանանց համար: Այս պատճառով էլ, մնացած այլ արգելքները միասին վերցրած, ձեռներեց կանայք հակված են՝

- նախապատվությունը տալ ավելի փոքր բիզնեսների, և կանանց սեփականության տոկոսը նվազում է ձեռնարկատիրության մեծանալուն զուգահեռ,
- գործունեություն ծավալել փոքր նշանակություն ունեցող և աճի ցածր ներուժով սահմանափակ հատվածներում, ինչպիսին են ծառայությունների ոլորտը, և չափից ավելի մեծ ներկայացվածություն ունեն սոցիալական նորմերին հարմարեցված գործունեության ոլորտներում (խոհանոց, կարուձև, վարսահարդարում):

Գործնական առաջադրանք

- Թղթի վրա գրել, Ձեր կարծիքով, հակառակ սեռին նկարագրող 15 բառ:
- Բաժանել այդ բառերը երկու սյունակների՝ նրանք, որոնք նկարագրում են կենսաբանական գործառույթները և որոնք արտացոլում են Ձեր հասարակության կողմից հակառակ սեռին տրված սոցիալական դերերը:
- Ի՞նչ է այս ցուցակն ասում Ձեզ սեռի և գենդեր մասին Ձեր սեփական պատկերացումների վերաբերյալ:
- Ձեր կարծիքով այս բառերից քանի՞սն են ներկայացնում կարծրատիպեր:
- Այս բառերից քանի՞սն են ներկայացնում այն դերերը, որոնք պետք է փոխվեն:

Առանցքային դրույթներ

[19] World Bank, “Global Findex Database 2014”. Available from http://www.worldbank.org/en/programs/globalfindex.
[20] Ibid.

- Սեռը ունի կենսաբանական բնույթ: Գենդերը սոցիալական կառուցվածք է և վերաբերում է կնոջ և տղամարդու միջև սոցիալական հարաբերություններին:
- Գենդերային հարաբերությունները գերազանցապես համատեքստային են և կախված են կոնկրետ հասարակույունից և ֆիքսված կամ մշտական չեն: Գենդերային հարաբերությունները կարող են փոխվել:
- Կայուն զարգացման գլոբալ օրակարգ 2030-ի առանցքային սկզբունքներն են ընգրկունությունը, կայունությունը և ճկունությունը: Դրանք երաշխավորում են, որ կայուն զարգացման առավելությունները նախատեսված են բոլոր մարդկանց համար՝ առանց բացառության:
- Կանայք և աղջիկները բախվում են պատմական և քրոնիկ անարդարությունների, երբ խոսքը գնում է գլոբալ զարգացման մասին: Պատճառները շատ են:
- Իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը նշանակում է, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ կարող են տնօրինել իրենց կյանքը, կազմել իրենց սեփական օրակարգը, ձեռք բերել հմտությունները և ամբողջությամբ հասարակական գործընթացների մասնակիցը լինել՝ առանց հանդիպելու արգելքների սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական ուժերի կողմից:
- ԿԶՆ-ների 5-րդ նպատակը համաշխարհային հանրության ուսերին է դնում կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը երաշխավորելու պատասխանատվությունը: Այլ նպատակներով հանդերձ, որոնք որպես առանցքային սկզբունք համարում են հանրամատչելիությունը, կանանց պահանջները պետք է բավարարվեն բոլոր ուղղություններով:
- Քանի որ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումն ունի բազմաթիվ չափորոշիչներ, կանանց և աղջիկների կյանքը բարելավելու առանցքային խթան է տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը: Սա իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտ նախապայման է:
- Ֆինանսական հանրամատչելությունը կարևոր բաղադրիչ է, որը խթանում է կանանց ձեռներեցությունը:

III. ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ. ԻՆՏԵՐՖԵՅՍԵՐ

Ուսուցման արդյունքները

Այս բաժինը կարդալուց հետո դասընթացի մասնակիցները կկարողանան

- հասկանալ ՏՀՏ-ների ներուժը՝ որպես գենդերային բաժանումը նեղացնելու հզոր գործիք,
- որոշակիացնել և վերլուծել իրենց երկրներում դեպքերի ուսումնասիրությունները կանանց և ՏՀՏ-ների միջև ինտերֆեյսում ,
- հասկանալ կանանց համար խոչընդոտները դեպի ՏՀՏ-ներ մուտք ունենալու և դրանց օգտագործման ճանապարհին:

Համաշխարհային գրականության մեջ հիմնական համոզմունքն այն է, որը ներկայիս ՏՀՏ-ները <<գենդերային առումով չեզոք>> և <<հզոր գործիքներ>>: Մասնավորապես, բջջային հեռախոսների տարածմամբ հիանալի հնարավորություններ են ստեղծվել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ շնորհելու իրենց տնտեսական, սոցիալական և քաղաքական դերերում: Ենթադրվում է, որ ՏՀՏ-ները հզոր և գենդերային առումով չեզոք են:

Սակայն մինչ նախազգուշական միջոցներ ձեռք առնելը, ՏՀՏ-ներն ունեն ներուժ ստեղծելու և ընդլայնելու <<ունենալու>> և <<չունենալու>> միջև բաժանումները, որտեղ բուրգի ներքևում գտնվողները և <<լուռ մեծամասնությունը>>[21] չեն համարվում ապագա ՏՀՏ-ների քաղաքականության և պրակտիկայի մի մասը: ՏՀՏ-ները դիտարկվում են որպես <<շարժիչ ուժեր>> կարող են այնուհետև դառնալ խոչընդոտներ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համար՝ խորացնելով թվային և տեղեկատվական անդունդը[22]:

ՏՀՏ-ները խաղացել են առանցքային դեր ներկայիս համաշխարհային հասարակության մեջ: Նշանակալիորեն նվազեցնելով տրանսպորտի և հաղորդակցության արժեքը՝ նրանք մեծացրել են առևտրային գործարքների արագությունը և փոխել համաշխարհային առևտրի դեմքը: Քանի որ ՏՀՏ-ները

[21] The silent majority is an unspecified large group of people in a country or group who do not express their opinions publicly. Wikipedia, “Silent majority”. Available from https://en.wikipedia.org/wiki/Silent_majority

[22] Nancy Spence, “Gender, ICTs, Human Development, and Prosperity”, USC Annenberg School for Communication and Journalism, Volume 6, Special Edition (2010). Available from http://itidjournal.org/itid/article/download/626/266

հեռավորությունը դարձրել են աննշան, հնարավոր է դարձել տեղափոխել տեղեկատվության մշակման աշխատանքները՝ ապրանքներում և ծառայություններում, դեպի այնպիսի միավորներ, որոնք հեռու են հիմնական տարածությունից, օրինակ բիզնես գործընթացի աութսորսինգ կամ զանգերի կենտրոն: Ցածր աշխատավարձերով, համակարգչային գրագիտությամբ և անգլերենի իմացությամբ աշխատուժով որոշ զարգացող երկրներ շահել են: Կանայք այսպիսի երկրներում այս համաշխարային տարածում ունեցող աշխատանքի հիմնական կրողներն են:

Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած այլ նորարարություն, ՏՀՏ-ները ներդրվում են հասարակական շրջանակների մեջ: Հետևաբար, ինչպես վիճարկում է Նենսի Հաֆքինը, ՏՀՏ-ները գենդերային առումով չեզոք չեն:

Այս ենթադրությունը, որ այսպես կոչված գենդերային առումով չեզոք տեղեկատվական տեխնոլոգիական նախագիծը շահեկան կլինի ողջ հասարակության համար՝ անկախ գենդերային պատկանելությունից, իրականում հիմնավորված չէ տեխնոլոգիայի վրա գենդերային հարաբերությունների ազդեցության և կանանց համար տեղեկատվական տեխնոլոգիաների հասանելության և դրանց օգտագործման սոցիալական սահմանափակումների պատճառով[23]:

Ի հավելումն տեխնոլոգիաների հասանելիության սոցիալական սահմանփակումների՝ առկա են նաև առաջարկի մասով խնդիրներ, որոնք սահմանափակում են կանանց կողմից ՏՀՏ-ների օգտագործումը ներկայացուցչությունն ուժեղացնելու համար: Այս խնդիրներից են տեխնոլոգիաների մշակումը և օգտատիրական ինտերֆեյսերը, բովանդակությունը, համացանցի լեզուն (գլխավորապես անգլերեն) և որոշակի տեխնիկական գիտելիքների տիրապետումը[24]:

Չնայած վերոնշյալը ճշգրիտ վերլուծություն է, գոյություն ունի փոփոխության ապացույց, որն այնուամենայնիվ բավարար չէ լայն ընդհանրացումներ անելու համար: Հեղինակը, 2010թ. Հնդկաստանում լայնածավալ դաշտային տվյալների հավաքագրման ընթացքում շարունակաբար հանդիպում էր մի փաստի, որ բջջային հեռախոս ունեցող կանայք ունեն ավելի բարձր ինքնագնահատական և ինքնավստահություն, քան այն կանայք, ովքեր չունեն բջջային հեռախոս: <<Չերի Բլեյրի անվան կանանց հիմնադրամ>>-ի կողմից կատարված

[23] Nancy J. Hafkin, Is ICT gender neutral? A gender analysis of six case studies of multi donor ICT projects (Santo Domingo: United Nations Research and Training Institute for the Advancement of Women (now UN Women), 2002).
[24] Swasti Mitter, "Globalization, ICTs and Economic Empowerment", in Gender and the Digital Economy: Perspectives from the Developing World, Cecilia Ng and Swasti Mitter, eds. (New Delhi: Sage, 2006) .

ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս նմանատիպ արդյունքներ[25]: Ընդհանրապես, բջջային հեռախոսները հնարավորություն են տալիս կանանց կապ հաստատելու ընտանիքի, ընկերների, իրենց փոքր բիզնեսի հաճախորդների հետ և օգնում են ստանալ տեղեկատվություն առողջության, աշխատանքային հնարավորությունների և, նույնիսկ, իրավաբանական աջակցության վերաբերյալ:

Հետևաբար, մինչ անցնելը ՏՀՏ-ների՝ կանանց վրա ազդեցության և նրանց ցուցաբերվող օգնության վերաբերյալ ընդլայնված քննարկմանը, օգտակար կլինի անցկացնել ՏՀՏ-ների և կանանց միջև հատման կետերի հակիրճ քննարկում:

Կանանց և ՏՀՏ-ների հատման վերաբերյալ քննարկումներում գերակշռել են երկու հիմնական թեմաներ, որոնք են՝ (1) կանանց ներգրավվածությունը հաղորդակցության ոլորտի մասնագիտություններում, (2) մեդիայում կանանց և աղջիկների ներկայացումը:

Այս երկու թեմաները ներկայացվել են Պեկինի Women's Critical Area J-ի շրջանակներում, որը կոչ է արել կառավարությանը, ոչ կառավարական և մեդիա կազմակերպություններին (1) ընդլայնել կանանց մասնակցությունը և մուտքը դեպի որոշումների կայացման և տեսակետների արտահայտման գործընթացներ մեդիայի և հաղորդակցային նոր տեխնոլոգիաների միջոցով, և (2) նպաստել կանանց հավասարակշռված և ոչ կարծրատիպային ներկայացմանը մեդիայում:

Անհրաժեշտ է արագ և համառոտ հայացք նետել երկու թեմաներին էլ մինչ ՏՀՏ-ների և կանանց իրավունքների ու հնարավորությունների վրա կենտրոնանալը, քանի որ հասարակության մեջ գոյություն են ունեցել գենդերային հիմնախնդիրներ և ուժեղացվել են մեդիայում, և այժմ դրանք տեղափոխվում են դեպի ՏՀՏ-ների օգտագործում:

3.1 Կանանց ներգրավվածությունը հաղորդակցության ոլորտի մասնագիտություններում

1995թ. Կանանց վերաբերյալ Պեկինի կոնֆերանսից 20 տարի հետո անցկացված վերլուծությունները ցույց են տվել, որ գրանցվել է չնչին դրական փոփոխություն

[25] Cherie Blair Foundation for Women, "Mobile Technology Programme". Available from http://www.cherieblairfoundation. org/programmes/mobile

մեդիայում կանանց մասնակցության ցուցանիշներում[26]: Կանայք կազմում են վերլուծության առարկաների միայն 20 տոկոսը և զբաղեցնում են չափազանց փոքր թվով պաշտոններ մեդիայում որոշումների կայացման գործընթացում: Ցածր և անհավասար աշխատավարձերը, անարդար վերաբերմունքը և աշխատանքի ճանաչման բացակայությունը, կանանց նկատմամբ հետապնդումները և ճնշումները աշխատանքի վայրում, և մասնագիտական ու անձնական պարտականությունների հավասարակշռման կրկնակի բեռը նշվում են որպես կանանց՝ աշխատանքը թողնելու հիմնական պատճառներ:

Իրավիճակը չի փոխվել ավելի նոր ՏՀՏ-ների ներկայացմամբ: Շատ քիչ են կամ գրեթե բացակայում են սեռի հիման վրա տարանջատված մանրակրկիտ տվյալները, և միակ համազգային ՏՀՏ-ցուցիչը, որը տարանջատված է ըստ սեռի՝ ընդլայնվող հաճախականությամբ (չնայած առանց ստանդարտացման տվյալների հավաքագրման), համացանցն է և բջջայինների օգտագործումը երկրում և տարածաշրջանում:

ՏՀՏ-ը հատվածը՝ իր նեղ իմաստով, ընկալվում է որպես արական սեռի գերիշխանությամբ ոլորտ: Սա հատկապես ճշմարիտ է ոլորտում տեխնիկական մասնագիտությունների և բարձր ղեկավար մակարդակների առումով[27]:

Միաջազգային հեռուստահաղորդակցության միության զեկույցը, այնուամենայնիվ, ընգծում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կանանց զանազան փորձը ՏՀՏ հատվածում և ցույց է տալիս, որ որոշ երկրներ ջանքեր են գործադրում ընդլայնելու կանանց թիվը ՏՀՏ հատվածում: Այնպիսի զարգացող տնտեսություններում, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը և Ֆիլիպինները, մեծ

[26] See: Who Makes the News, "Global Media Monitoring Project". Available from http://whomakesthenews.org/gmmp ; C. Rodriguez Bello, Women and Media: Progress and Issues (Toronto: Association for Women's Rights in Development, 2003); and United Nations Commission on the Status of Women, "Secretary-General's Report: Participation of women in the news media and in the information and communications technologies and women's access to them, as well as their repercussions on the advancement and empowerment of women and their use for these purposes", Doc E/CN.6/2003/6. Available from http://www.un.org/womenwatch/daw/csw/47sess.htm. See also ESCAP, Gender Equality and Women's Empowerment in Asia and the Pacific: Perspectives of Governments on 20 Years of Implementation of the Beijing Declaration and Platform for Action (Bangkok, 2015). Available from http://www.unescap.org/sites/default/files/B20%20Gender%20Equality%20Report%20v10-3-E%20(Final%20for%20web).pdf

[27] International Labour Organization, 2001 Report on Work in the New Economy, cited in International Telecommunication Union, "A Bright Future in ICTs: Opportunities for a New Generation of Women", February 2012. Available from https://www.itu.int/en/ITU-D/Digital-Inclusion/Women-and-Girls/Documents/ReportsModules/ITUBrightFutureforWomeninICT- English.pdf

է կանանց մասնակցությունը ՏՀՏ ոլորտում՝ չնայած ցածր մակարդակի աջակցման դերերում:

Հնդկաստանում ստեղծվում են խթաններ կանանց՝ ՏՀՏ ոլորտում ներգրավելու համար: Դրանք ներառում են աշխատանքի տանելու և աշխատանքից հետ բերելու տաքսի ծառայություններ, գենդերային հետապնդումների հարցով հանձնաժողովների ստեղծում և հղիության ու ծննդաբերության արձակուրդի տրամադրում: Արդյունքում, ՏՀՏ ոլորտում կանանց թիվն աճել է: Փաստացիորեն Հնդկաստանը գրանցել է տարածաշրջանում գենդերային աշխատուժի ամենաբարձր գենդերային հարաբերակցությունը (30 տոկոս 2009թ.-ին) և հասանելի է դարձրել ղեկավար պաշտոնները կանանց համար (20 տոկոս 2009թ.-ին)[28]:

Մալայզիայում ընդունված որոշումը՝ ստեղծել Մուլտիմեդիայի սուպեր միջանցք հատուկ վարչական տարածքում, որը ղեկավարվում է տարբեր՝ առավել ազատական օրենքներով և կանոններով, խթանել է ՏՀՏ հատվածում կանանց ներգրավվածությունը: Ավելին, քանի որ ՏՀՏ բումի հետևանքով առաջացավ որակավորված ՏՀՏ մասնագետների խիստ պակաս, երկրի ՏՀՏ հատվածը ողջունում է կանանց՝ որպես նախկինում արական սեռի գերիշխանության ներքո գտնվող ՏՀՏ համայնքի նոր անդամներ[29]:

3.2 Կանանց և աղջիկների կերպարը լրատվամիջոցներում

Աշխարհի տարբեր ծայրերից ստացված տվյալները, անկախ երկրից, շատ փոքր փոփոխություններ են արձանագրում բոլոր հաղորդակցական միջոցներում կանանց և աղջիկների կերպարի ձևավորման հարցում: Կանանյք թերներկայացված մեդիադաշտում, և կանանց վերաբերյալ նյութերը շարունակում են մնալ բացասական, կարծրատիպային, սեքսիստական և նվաստացուցիչ: Կանայք հաճախ ասոցացվում են նորաձևության, զգացմունքային հարաբերությունների և ընտանիքի հետ, և ներկայացվում են որպես շատ թույլ տեխնոլոգիական հմտություններ ունեցողներ:

Նոր տեխնոլոգիաների ներմուծումը չի բարելավել իրավիճակը: Փաստացիորեն այն իրականում վատթարացրել է իրավիճակը: ՏՀՏ հեղափոխության ամենաբացասական կողմերից մեկը համացանցը կանանց և երեխաների սեռական շահագործման համար օգտագործելն է: Ինտերնետային տեխնոլոգիաները

[28] Ibid., p. 33; and NASSCOM, "Impact of IT-BPO Industry in India: A Decade in Review", pp. 12-13. Available from http:// www.nasscom.in/impact-itbpo-industry-india-decade-review.

[29] International Telecommunication Union, "A Bright Future in ICTs: Opportunities for a New Generation of Women", February 2012, p. 32. Available from https://www.itu.int/en/ITU-D/Digital-Inclusion/Women-and-Girls/Documents/ReportsModules/ ITUBrightFutureforWomeninICT-English.pdf.

մարդկանց հնարավորություն են տալիս առանց մեծ ջանքի գնել, վաճառել և փոխանակել սեռական շահագործման պատկերներ և տեսաձայնագրություններ, հրապարակել սեքս տուրիզմի վերաբերյալ հայտարարություններ կամ առաջարկել ծառայություններ սեռական շահագործման նպատակով համապատասխան անձանց գտնելու նպատակով: Ավելի մտահոգիչ է համացանցի օգտագործումը կանանց թրաֆիքինգի համար, օրինակ երիտասարդ կանանց համար կեղծ աշխատանքային հնարավորություններ գովազդելով: Կանայք, հայտնվելով համապատասխան երկրում, ստիպված են լինում աշխատել որպես սեքս-ստրուկներ:

Այժմ գնալով ավելի մեծ ճանաչում է ստանում լրատվամիջոցների բովանդակությունն ու օգտագործումը կարգավորելու անհրաժեշտությունը: Դա պետք է իրականացվի այնպես, որ չոտնահարվեն կանանց և աղջիկների արժանապատվությունն ու մարդկային իրավունքները և միաժամանակ ապահովվի, որ այդ կարգավորումները չօգտագործվեն որպես ցենզուրայի և վերահսկողության գործիք:

Սակայն ինչպե՞ս է հնարավոր կարգավորել նման նյութերի բովանդակությունը, երբ դրանք արտադրվում են մի երկրում, տեղափոխվում մեկ այլ երկրի միջոցով և նախատեսված են երրորդ երկրի սպառողների համար: Պոռնոգրաֆիայի, զրպարտության, տեղեկատվության ազատության և կիբեռհանցագործության վերաբերյալ քաղաքականությունները պետք է վերանայվեն և հավասարակշռվեն, որպեսզի կանանց և տղամարդկանց արժանապատվությունը չզոհաբերվի ՏՀՏ ընձեռած հնարավորություններից օգտվելու ցանկությանը:

3.3 Գենդերի բաժանումը՝ ըստ ՏՀՏ-ների օգտագործման

Քչերն այսօր կարող են վիճարկել ՏՀՏ-ների վճռորոշ դերը, որը վերջիններս խաղում են զարգացման գործընթացում: Արագությունը, հզորությունը, ծածկույթը, բազմակողմանիությունը և շղթայում վերջին մարդու հետ կապվելու հնարավորությունը, ազգային և տեղական մակարդակներում կիրառելիության ճկունությունը, տարբերակները և օգտագործման բազմաթիվ հնարավորությունները ու փոփոխությունները ՏՀՏ-ների էական հատկանիշներից մի քանիսն են: Կառավարությունները, օրինակ, օգտագործում են ՏՀՏ-ները ապահովելու ավելի լավ, ավելի արդյունավետ և արագ արձագանքող կառավարում:

Մասամբ գլխավորապես <<բջջային հեղափոխության>> շնորհիվ, ՏՀՏ գործիքները լայնորեն ընդունելի են դառնում բնակչության լայն զանգվածների, այդ թվում նաև՝ չսպասարկվողների և ոչ բավարար կերպով սպասարկվողների համար: Համաշխարհային բնապատկերն արագորեն փոփոխող ՏՀՏ գործիքները հզոր ուժ են մարդկանց կենսակերպի և հաղորդակցման ձևավորման և դրանց վրա ազդեցության

համար: ՏՀՏ-ների կողմից առաջարկվող օգուտներն ընդարձակ են և օրեցօր աճում են: ՏՀՏ-ների ներուժը՝ առաջարկելու շուկայական և գնային տեղեկատվություն, ապրանքների կատարելագործում, կատարելագործված մատակարարման շղթայի կառավարում և վերապատրաստում, կարող է լինել տարբերակիչ գործոն մասնավոր հատվածում հաջողության և ձախողման միջև: Նրանք, ովքեր չունեն մուտք դեպի տեխնոլոգիաներ, գտնվում են ակնհայտ անբարենպաստ իրավիճակում:

Առևտրից, արդյունաբերությունից, շահ չհետապնդող և իշխանական աղբյուրներից հասանելի վիճակագրությունները ներկայացնում են Ասիական և Խաղաղօվկիանոսյան մի շարք երկրներում համացանցում, բջջայինների հասանելիության և օգտագործմա հիման վրա սեռերի տարբերակման հետաքրքիր պատկեր: Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ վիճակագրությունը հաճախ չի անցնում հասանելիությունից և կիրառությունից այն կողմ, և նույնիսկ այնտեղ կան հսկայական գենդերային բացեր բազմաթիվ զարգացող երկրների մասնակցային ցուցանիշներում[30]:

[30]World Bank, “Engendering ICT Toolkit: Indicators for Monitoring Gender and ICT”. Available from http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTGENDER/EXTICTTOOLKIT/0,,contentMDK:20272986~menuPK:562601~pagePK:641 68445~piPK:64168309~theSitePK:542820,00.html .

Պատկեր 2. Ինտերնետի մատչելիությունը և օգտագործումն ըստ գենդերի



Աղբյուրներ՝ Բանգլադեշ, Ալեքսանդրա Թայերս,«Գենդերային թվային անհավասարությո՞ւն: Բանգկադեծում կանայք անգլերեն են սովորում ՏՀՏ միջոցով, Բանգլադեշի բրիտանական խորհուրդ/ Կրթության ինստիտուտ, Լոնդոնի համալսարան: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://ceur-ws.org/Vol-955/papers/paper_16.pdf, Չինաստան, Չինաստանի ինտերնետային ցանցի տեղեկատվական կենտրոն, «Վիճակագրական հաշվետվություն Չինաստանում ինտերնետի զարգացման վերաբերյալ», 2016թ հունվար: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cnnic.com.cn/IDR/ReportDownloads/201604/P020160419390562421055.pdf, Հոնկոնգ, Ինդոնեզիա և Կորեայի Հանրապետություն, Համաշխարհային բանկ, «Գենդերը և ՏՀՏ-ն մշտադիտարկելու ցուցիչներ»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTGENDER/EXTICTTOOLKIT/0,,contentMDK:20272986~menuPK:562601~pagePK:64168445~piPK:64168309~theSitePK:542820,00.html, Հնդկաստան, Սկատիստա, «Ինտերնետի օգտատերերի բաշխումը Հնդկաստանում 2015թ-ի հոկտեմբեր դրությամբ»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.statista.com/statistics/272438/gender-distribution-of-internet-users-in-india/:

Կանայք, իրականում, պետք է ՏՀՏ-ներից ունենան այն նույն օգուտները, ինչ տղամարդիկ, սակայն երբ ՏՀՏ-ի օգտագործումն ուսումնասիրվում է <<գենդերային տեսապակու>> ներքո, գենդերային խոչընդոտները դառնում են տեսանելի:

Օրինակ, կանանց համար բջջային հեռախոսների հասանելիության խոչընդոտները ներառում են՝

- արժեք,
- ցանցի որակ և ծածկույթ,
- անվտանգություն և հետապնդումներ,
- բջջային օպերատորի/գործակալի հուսալիություն,
- տեխնիկական գրագիտություն և ինքնավստահություն[31]:

Այս հիմնախնդիրների ըմբռնումն այն անհավասարությունների վերացման կարևորագույն մասն է, որոնց բախվում են կանայք:

3.4 ՏՀՏ-ների օգտագործումը հանրային ծառայությունների համար

Պեկինի 1995թ. կոնֆերանսից տասնամյակներ առաջ և առ այսօր իրականացվել են բազմաթիվ փորձարկումներ, պիլոտային ծրագրեր և նախագծեր, որոնք զարգացող երկրներում օգտագործել են ինչպես ավանդական մեդիան՝ տպագիր մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը, այնպես էլ ավելի նորը՝ համակարգիչը և վեբ-տեխնոլոգիաները տարբեր նպատակներով: Այս հին և նոր ՏՀՏ-ներն օգտագործվել են՝ վերացնելու աղքատությունը, հասանելի դարձնելու կրթական և առողջապահական ծառայությունները և նվազեցնելու աղետների ռիսկերը:

Զարգացման նպատակներին և, համապատասխանաբար, ԿԶՆ-ներին հասնելու համար ՏՀՏ-ների օգտագործման գլոբալ փորձը գենդերային տեսանկյունից դիտարկելիս պարզ է դառնում, որ շատ երկրներ իրենց սահմանադրություններում ներառել են գենդերային հավասարությունը: Սակայն մեծ անդունդ կա նման սահմանադրական կետերի և այսօրվա իրականության մեջ, հատկապես, երբ խոսքը գնում է քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում գենդերային հավասարության հեռանկարի ինտեգրացման մասին: Արդյունքում, շատ ազգային ՏՀՏ նախագծեր (այդ թվում նաև ավանդական մեդիան) կույր են գենդերի նկատմամբ[32] (չեն նկատում գենդերային հիմնախնդիրները):

Երբ տեղի է ունենում միջամտություն ՏՀՏ-ների մեջ, և հաշվի չեն առնվում գենդերային նկատառումները, հավանական է, որ կանանց և աղջիկների ներգրավվածությունը ցածր է: ՏՀՏ նախագծերի ազդեցության վերլուծությունները ցույց են տալիս համընդհանուր կերպով, որ սոցիալապես անապահով խավի ցածր

[31] GSMA, Connected Women – Bridging the Gender Gap: Mobile Access and Usage in Low- and Middle-Income Countries, Executive Summary (2015), p. 4. Available from https://www.intgoforum.org/cms/igf2016/uploads/proposal_background_paper/GSMAReport_Executive-Summary_NEWGRAYS-web3.pdf

[32] Gillian M. Marcelle, "Information and communication technologies (ICT) and their impact on and use as an instrument for the advancement and empowerment of women", Report from the online conference conducted by the Division for the Advancement of Women (now UN Women), no date. Available from http://www.un.org/womenwatch/daw/egm/ict2002/ reports/Report-online.PDF .

մասնակցության դեպքում սոցիալապես անապահով կանանց մասնակցության ցուցանիշներն ավելի ցածր են:

Պատկեր 3. «Ո՞րն է իմ տեղը: Ի՞նչ օգուտ այն կարող է ինձ տալ:»



Ավելին, գենդերին վերաբերող հիմնախնդիրների տվյալներում առկա են որոշ բացեր: Այդ պատճառով էլ բարդ է որոշել նման արդյունքների քանակը և , հետևաբար, կարևոր է գենդերի տեսանկյունից վերաքննել բոլոր նախկին և ներկա նախագծերը:

Սոցիալապաես անապահով խավի շրջանում մասնակցության ցածր ցուցանիշների պատճառներից մի քանիսն ակնհայտ են դարձնում, որ հասանելիությունը, մատչելիությունը և մի քանի հիմնական հմտությունները էական նախապայմաններ են: Տեխնիկական ենթակառուցվածքը, կապի արժեքը, համակարգչային գրագիտությունը և լեզվական հմտությունները համընդհանուր սահմանափակումներ են: Այս համընդհանուր սահմանափակումները հաճախ խորանում են գենդերի վրա հիմնված սոցիոմշակութային որոշիչ գործոններով՝ հատկապես սոցիալապես անապահով կանանց շրջանում:

Օրինակ, շատ կանայք չունեն հողային իրավունքներ կամ իշխանություն իրենց տնային տնտեսությունների՝ տնտեսական հարցերով որոշումների կայացման գործընթացում: Սա նշանակում է, որ ՏՀՏ-ների օգուտները համայնքային էլեկտրոնային գյուղատնտեսական նախաձեռնություններում կարող են բաժին

հասնել միայն տղամարդկանց, քանի դեռ կանանց մասնակցությունն ապահովված է դիզայնով[33](ձևականորեն):

Չնայած, որ կանայք ունեն ՏՀՏ-ների կարիքը այն նույն նպատակների համար, ինչ տղամարդիկ, ինչպես օրինակ իրենց արտադրական, վերարտադրական և համայնքային դերերին և տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանն առնչվող և իրենց անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության համար, գենդերային խոչընդոտները վերջիններիս համար ստեղծում են անբարենպաստ իրավիճակ և հեռացնում իրենց ծայրաստիճան անհրաժեշտ տեխնոլոգիաներից:

Խոչընդոտները, որոնց բախվում են կանայք, ՏՀՏ-երի համար եզակի չեն՝

- **Գրագիտության մարտահրավերը** պետք է հաղթահարվի, մինչ կանայք կկարողանան օգուտ քաղել ՏՀՏ-ներից, չնայած այն հանգամանքին, որ աուդիո և վիդեո տեխնոլոգիաները նախատեսված են եղել որոշ չափով հաղթահարելու կանանց գրագիտության խնդիրը:
- **Աղքատությունը և տնտեսական ազդեցության պակասն** ավելի շատ ազդում է տղամարդկանց, քան կանանց վրա:
- Ծանր տնային պարտականությունների պատճառով **ուսմանը ժամանակ հատկացնելու կանանց անկարողությունը** քաջ հայտնի է բոլորին:
- **Կանանց համար նպաստավոր պայմանների և կանանց ուղղված աջակցության բացակայությունը**, ինչպիսին են երեխաների խնամքի կենտրոնները, փոխազդեցության համար նախատեսված անվտանգ հասարակական տարածքները և կին-միջնորդները, դասընթացավարները և փոփոխության գործակալները, խոչընդոտում է կանանց կողմից ՏՀՏ-ների օգտագործումը:
- **Սոցիոմշակութային գործոնները, որոնք ամրապնդում են կանանց անհավասարությունը հասարակության մեջ** և թերագնահատում նրանց կրթություն ստանալու կարիքը, ինչն ավելի է կանխարգելում ցանկացած առաջընթաց:

Այս բոլոր գործոնների ամբողջությունը սահմանափակում է կանանց աճը: Համապատասխանության, լեզվի, մատչելիության և կիրառության առումով բովանդակության բացակայության հետ համատեղությամբ, սպասելի են կանանց մասնակցության սարսափելի ցուցանիշներ տեխնոլոգիաների օգտագործմամբ զարգացման , գործադրվող ջանքերից օգուտ քաղելու և դրանց հասանելիության առումով:

[33] IT for Change, “Gender Equality in the Information Society”, March 2014

3.5 ՏՀՏ-ների հնարավորությունը կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համար

Կանանց համար ՏՀՏ-ների հզոր ներուժը հասկանալու համար անհրաժեշտ է մեկ անգամ ևս աչքի անցկացնել գենդերային և զարգացման գրականությունը: Իրավունքների և հնարավորությունների ընդլայնումն ինքնին իշխանության մի ձև է, որտեղ <<իշխանությունը>> բաժանված է <<ինչ-որ բանի նկատմամբ իշխանության>>(գերիշխանություն), <<իշխանության դեպի>>(կարողություն), << ներսից իշխանության>>(ներքին ինշխանություն), <<ինչ-որ բանի հետ իշխանության>>(համագործակցության և դաշինքի միջոցով ձեռք բերված իշխանություն):

Իրավունքների և հնարավորությունների ընդլայնում հասկացության ֆեմինիստական կիրառության դեպքում շեշտն ակնհայտորեն դրված է <<իշխանություն դեպի>>-ի և կարողության, և ոչ թե <<ինչ-որ բանի նկատամամբ իշխանության>> վրա[34]: Հետևաբար, <<կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում>>-ը կենտրոնացած է իրենց իշխանության (ներկայացուցչության) վրա՝ վերահսկելու իրենց կյանքը ձևավորող որոշումները՝ կապված ռեսուրսների հասանելիության, որոշումների կայացման գործընթացում մասնակցության, թե օգուտների բաժանման նկատմամբ վերահսկողության հետ[35]:

ՏՀՏ-ների միջոցով կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման երկու հիմնական մոտեցումներ են գերիշխում: Առաջինը հիմնված է անհատ կնոջ իրավունքների և հնարավորությունների ընդլայնման, և մյուսը՝ կանանց կազմակերպված խմբերի կամ կոլեկտիվների իրավունքների և հնարավորությունների ընդլայնման վրա: Երկու մոտեցումներն էլ կարևոր են և փոխլրացնող, և կանանց գործունեությունը հաճախ ներառում է երկուսի համակցությունը:

Կանանց հետամնացության հիմնական՝ գրագիտության, կրթական և առողջական պատճառների վերացումից հետո պարզ է դառնում, որ կանանց, ովքեր ունեն մուտք դեպի ՏՀՏ-ներ և կարող են օգտագործել դրանք, առաջարկում են պոտենցիալ ընդլայնված հնարավորություններ աղքատությունը վերացնելու և ձայն ստանալու համար:

---

[34] Kum-kum Bhavani, J. Foran and P. Kurian, eds., Feminist Futures: Re-imagining Women, Culture and Development (New Delhi: Zubaan, 2006).

[35] United Nations, "Gender equality and empowerment of women through ICT", in Women 2000 and Beyond, September 2005, p. 13.

Ազգային աղբյուրների տվյալները դեռևս համապատասխան չեն, քանի որ հաճախ բաց են թողնում սեռով պայմանավորված վիճակագրությունները, սակայն անեկդոտային (ծիծաղելի) ապացույցները հաստատում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ծառայություններում կանանց մասնակցության աճի մասին եզրակացությունը, որը բարելավում է ինչպես կանանց, այնպես էլ նրանց ընտանիքների կյանքը:

Այնուամենայնիվ, աշխատաշուկայում, կրթական և վերապատրաստման հնարավորություններում և ձեռնարկատիրական գործունեության ու բիզնեսի զարգացման համար ֆինանսական միջոցների հատկացման գործում գոյություն ունեցող գենդերային խտրականությունը բացասաբար է ազդում կանանց ներուժի վրա՝ ամբողջությամբ օգտագործելու ՏՀՏ-ները տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման համար:

Կանայք և աղջկները շահել են այն ժամանակ, երբ գենդերային խոչընդոտները վերացել են, և երբ նրանք շահել են կրթական հնարավորություններից: ՏՏ աջակցության տեղեկատվական կենտրոնների կողմից, ինչպիսին են Հնդկաստանը և Ֆիլիպինները, տրամադրվել են անեկդոտային (ծիծաղելի) փաստեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են երիտասարդ, գյուղացի կանայք, հաճախ լինելով սոցիալապես անապահով խավի առաջին կրթված սերունդը, առավելագույնս օգտագործել տրված հնարավորությունները և դուրս բերել իրենց ու իրենց ընտանիքներին աղքատությունից: Զարգացող տնտեսություններում, ինչպիսին Հնդկաստանն է, որտեղ կանայք աշխատել են ծրագրային ապահովման ոլորտում ավելի քան մեկ տասնյակ, այս հատվածն առաջարկում է ավելի շատ գենդերային հավասարությանը միտված աշխատանքի հնարավորություններ, քան ինժեներության այլ ճևերը, և կանայք արագորեն օգտագործել են այս տարածությունը[36]: 1-ին և 2-րդ դեպքերի ուսումնասիրությունները ներկայացնում են պատմություններ այն մասին, թե ինչպես են ՏՀՏ-ները նպաստել երկու կանանց տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանը:

Դեպքի ուսումնասիրություն 1

Նանդինին և UberDOST-ը

[36] Shoba Arun and Thankom Arun, "ICTs, Gender and Development: Women in Software Production in Kerala", Journal of International Development (2002), cited in International Telecommunication Union, "A Bright Future in ICTs: Opportunities for a New Generation of Women", February 2012. Available from https://www.itu.int/en/ITU-D/Digital-Inclusion/Women- and-Girls/Documents/ReportsModules/ITUBrightFutureforWomeninICT-English.pdf.

Բանգալորի մոտակայքում բնակվող աղքատացած ընտանիքի ավագ դուստրը միշտ երազել էր բժիշկ դառնալու մասին: Կրթություն ստանալու գումար չունանալու պատճառով նա ավարտել է ավագ դպրոցը հեռակա ուսուցմամբ և այնուհետև փորձել մի շարք ճանապարհներով սկսել սեփական փոքրիկ բիզնեսը: Այս ջանքերը բավարար չէին ինքն իրեն և իր ընտանիքին աջակցելու համար:

Տեղի ունեցած ողբերգության արդյունքում նրա հայրը մահացավ և նա միայնակ մնալով՝ ստիպված էր մարել հսկայական վարկերը: Այդ ընթացքում նա բացահայտեց Ուբերի ուղղորդումները: Uber-ը համաշխարհային առցանց տրանսպորտային ցանց և հարթակ է, որը ուղղակիորեն կապում է վարորդներին ուղևորների հետ: UberDOST-ը Uber-ի ուղղորդիչ հարթակն է, որտեղ օգտատերերը կարող են վաստակել գումար՝ վարորդներին ուղղորդելով դեպի Uber:

Նանդինին հասկացավ դեպի Uber վարորդներ ուղղորդելու առաջարկի ներուժը: Նա հիմնեց փոքրիկ գրասենյակ և որոշ հետազոտություններ անելով՝ սկսեց հետևել որոշ օրինակների: Այսօր նա վաստակում է ամսական գրեթե 200,000 հդկական ռուփի (3000 ԱՄՆ դոլար), մարել է բոլոր վարկերը, օգնել վճարել քրոջ հարսանիքի համար և այժմ իր սեփական տան հպարտ սեփականատերն է:

Աղբյուր՝ Sneha Banerjee, “How a Mother Paid Off Her Debts by Referring Drivers for Uber”, Entrepreneur India, 7 May 2016. Available from https://www.entrepreneur.com/ article/275380 (accessed 17 May 2016):

Դեպքի ուսումնասիրություն 2

Շեյլա և Էլանս

Ֆիլիպինների Շեյլաի և Էլանսի անվան համալսարանի գրադարանավարուհի Շեյլա Օրտենսիոն վաստակում էր ժամում 1,50 ԱՄՆ դոլար և պայքարում սննդի և երեխաների խնամքի համար վճարելու համար: Էլանսում որպես ազատ գրաֆիկով աշխատանքի չորս տարիների ընթացքում էլեկտրոնային գրքերի առցանց ցուցակագրմամբ և ժամում 8,50 ԱՄՆ դոլար վաստակելու շնորհիվ նա ի վիճակի էր խնայել բավարար գումար սեփականություն գնելու՝ այդ թվում նաև երկրի մայրաքաղաքում՝ Մանիլայում սեփականություն ձեռք բերելու համար:

Էլանսն առցանց հարթակ է, որը կապում է ազատ գրաֆիկով աշխատողներին և նախագծի հեղինակներին: Նման միտումի առաջխաղացումը տասնյակ՝ հիմնականում ամերիկյան, ստարտափեր են, որոնք հնարավորություն են տալիս այլ ՓՄՁ-ների նախագիծը բաժանել մի քանի մասի և վարձել ազատ գրաֆիկով անհատ աշխատակիցների կամ խմբերի այդ աշխատանքի իրականացման համար: Օգտագործելով ավելի արագ, ավելի տարածված և ավելի էժան համացանց,

ստարտափերը կարող են քաղել SS-ի և տվյալների մուտքագրման աութսորսինգի փոքր ներուժ ունեցող պտուղները, որոնցով այլևս չեն զբաղվում BPO-ի խոշոր խաղացողները:

Աղբյուրը՝ Jeremy Wagstaff, “Global Army of Online Freelancers Remakes Outsourcing Industry”, Reuters, 10 October 2012. Available from http://www.reuters.com/ article/2012/10/10/us-asia-freelance-idUSBRE8991MY20121010:

Մինչդեռ բոլոր զարգացած և զարգացող երկրներում տվյալները ցույց են տալիս, որ ՏՀՏ հատվածը մնում է ակտիվ, զբաղվածության աճող սեկտոր և զարգացման հիմքում ընկած առանքային տնտեսական գործոն, այս աճը չի հանգեցրել ՏՀՏ աշխատաշուկայում կանանց համար աշխատանքների թվի զուգահեռ ավելացմանը: Կանանց ներկայացվածությունը մեծ է ցածր մակարդակի պաշտոններում: Այնուամենայնիվ, 15%-ից պակասը ղեկավարներ կամ ռազմավարության պլանավորողներ են: Սա նշանակում է, որ հաշվի առնելով կրթություն ստանալու հնարավորությունները, կանայք ինքնակրթվել են և մուտք են գործել ՏՀՏ աշխատաշուկա և հաջողություններ գրանցել, սակայն մեծ թվով կանայք թողնում են այս աշխատանքը ծառայողական դիրքի առաջխաղացման բացակայության և գենդերային դերերից և պարտականություններից առաջացող սթրեսի պատճառով:

ՏՀՏ-ները կարող են ուղղակիորեն օգուտ տալ կանանց, երբ կանայք օգտագործեն ՏՀՏ-ները իրենց կարգավիճակը բարելավելու, և անուղղակիորեն՝ երբ ՏՀՏ-ներն օգտագործվում են կատարելագործելու տեղեկատվության և ծառայությունների մատակարարումը կանանց: ՏՀՏ-ներն առաջարկում են կանանց առցանց առևտրի մեջ ներգրավվելու և առցանց կառավարման ու կրթության ծառայությունների հասանելիության հնարավորություններ՝ շրջանցելով սոցիոմշակութային խոչընդոտները, որոնք խոչընդոտում են տնտեսական առաջընթացը: Կանանց խմբերի շրջանում ՏՀՏ-ների կիրառումը հնարավորություն է տվել կանանց կազմակերպել կանանց իրավունքների և մասնակցության պաշտպանությանն ուղղված արշավներ՝ ապահովելով հաղորդակցության նոր հարթակ իրենց տեսակետների արտահայտման և կանանց հիմնախնդիրների տեղեկացվածության բարձրացման համար:

Կան տասնյակ օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են ՏՀՏ-ներն օգուտ տվել կանանց խմբերին: Օրինակները՝ Հնդկաստանից, Մալայզիայից, Ֆիլիպիններից և Շրի Լանկայից, ցույց են տալիս կանանց կազմակերպված խմբի կողմից տեխնոլոգիայի կոլեկտիվ կիրառումը փոխակերպել է կանանց իրենց և իրենց

շրջապատող համայնքի կյանքի պասիվ դերակատարներից՝ ակտիվների[37]: Եկեք դիտարկենք դրանք 3-6-րդ դեքերի ուսումնասիրություններում:

Դեպքի ուսումնասիրություն 3

ՏՏ-ն փոփոխության համար և Պրակրիյեն ստեղծում են իրավունքների և հնարավորությունների ընդլայնման մշակույթ՝ օգտագործելով ՏՀՏ-ները Կարնատակայում՝ Հնդկաստանում

Հնդկաստանի հարավային նահանգում՝ Կարնատակայում, հնդկական <<ՏՏ-ն փոփոխության համար>> ՈԿԿ-ն աշխատել է Պրակրիյեյի հետ (Հասարակական ինֆորմատիկայի և զարգացման կենտրոն) տեսնելու, թե ինչպես թվային տեխնոլոգիաները կարող են ուժեղացնել կանանց իրավունքների ու հնարավորությունների շարժումը: Նախագիծը ներդրված է Կարնատակայում պետական մակարդակով Մահիլյա Սամախյայուում, որը Հնդկաստանի մարդկային ռեսուրսների զարգացման նախարարության՝ կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման ազգային ծրագիր է:

Պրակրիյե թիմը ստեղծվել է ՏՀՏ-ների հզորությունը կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համար որպես հիմնաքար օգտագործելու հիպոթեզից: Կանանց համայնքի վերապատրաստմանը հաջորդել է երեք թվային բաղադրիչների զարգացումը և օգտագործումը: Առաջինը ամեն շաբաթ կանանց սեփական ձայնով հեռարձակվող ռադիոհաղորդումն էր (Կելու Սակխի կամ Լսիր, ի՛մ ընկեր): Երկրորդը կանանց անհրաժեշտ տեղեկատվության, օրինակ ինչպես բանկից վարկ վերցնելու, վերջիններիս իրավունքների վերաբերյալ տեսանյութերի նկարահանումն ու մշակումն է: Երրորդ բաղադրիչը հանրային տեղեկատվության հասանելիության գյուղական համայնքի հեռուսակենտրոններն են, որոնք ղեկավարվում են հենց գյուղական համայնքի կանանց կողմից:

Պարզ դարձավ, որ խոսքը միայն տեխնոլոգիայի մասին կամ հնարավորությունների ընդլայնման մասին չէ, այլ իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման մշակույթ ձևավորելու մասին:

Աղբյուրը՝ Anita Gurumurthy and others, “Mahiti Manthana: Reimagining a women’s empowerment programme through digital technologies”, IT for Change Think Piece, 2010, p. 4. Available from http://www.itforchange.net/sites/default/files/ITfC/ Mahiti%20Mantana-%20website.pdf:

[37] The Deccan Development Society and E-Seva Models in India, CENWOR’s work in Sri Lanka, and the very successful E-Homemakers demonstrate the liberating and empowering effect of ICTs on organized groups of women.

Դեպքի ուսումնասիրություն 4

Ինֆոկանայք Բանգլադեշում

Բանգլադեշում երիտասարդ ինֆոկանայք ծառայում են որպես միջնորդներ գիտելիքի և Բանգլադեշի գյուղական համայնքների կանանց միջև՝ օգտագործելով ՏՀՏ-ները որպես շարժիչ ուժեր:

Ապահովված լինելով համակարգչով, խելացի հեռախոսով և համացանցով՝ ինֆոկանայք առաջարկում են առողջապահության, գոյուղատնտեսության ընդլայնման և ՏՀՏ-ների հետ կապված տեղեկատվություն, ծառայություններ և ապրանքներ գյուղական համայնքներին: Օրինակ, ինֆոկանայք կարող են առաջարկել հղի կանանց խնամքի ծառայություն՝ ցուցադրելով մուլտիմեդիայի բովանդակությունը հղիության խնամքի վերաբերյալ՝ օգտագործելով իրենց համակարգիչը, անցկացնելով բազային զննում բժշկական պարագաների օգտագործմամբ և վաճառելով այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են ֆոլաթթուն: Ինֆկանայք կարող են նաև նպաստել կառավարության, ՈԿԿ-ների և մանսավոր հատվածի կողմից առաջարկվող առցանց ծառայությունների հասանելիությանը՝ այդ թվում ծննդաբերության առցանց գրանցում և բջջային բանկինգ:

Ինֆկանայք գյուղական համայնքների ցածր եկամուտ ունեցող կամ սոցիալապես անապահով ընտանիքներից են՝ 12-ամյա դպրոցական կրթությամբ: Նրանք ունեն սահմանափակ աշխատանքային հնարավորություններ իրենց համայնքներում և դրանցից դուրս:

Ինֆոկանայք հաջողակ են դարձնում երեք հիմնական հատկանիշներ, որոնք են՝ (1) ձեռնարկատիրական մտածելակերպ, (2) արագ սովորելու ընդունակություն և (3) հաղորդակցային բավարար հմտություններ: Ինֆոկանանց աջակցելու համար Կենտրոնական բանկը տրամադրել է վերջիններիս ցածր տոկոսադրույքով վարկեր:

Աղբյուր՝ Dnet, “Infolady Model”. Available from http://dnet.org.bd/page/Generic/0/61/145/85:

Դեպքի ուսումնասիրություն 5

Հարավ-արևելյան Հնդկաստանի Թենի շրջանի այծերի հովիվները

Հարավ-արևելյան Հնդկաստանի Թենի շրջանում այծերի հովիվներ հանդիսացող կանանց մի խումբ ստեղծել է սեփական ընկերությունն այն բանից հետո, երբ վերապատրաստում է անցել այծերի ֆերմերային տնտեսության և բիզնեսի կառավարման ոլորտներում, որը կազմակերպվել էր «Ուսուցման

համագործակցություն» կազմակերպության «Շարունակական ուսուցում ֆերմերների համար» ծրագրի շրջանակներում:

Ընդամենը 15 տարի առաջ այս կանայք չունեին բջջային հռախոսներից օգտվելու կամ սեփական բիզնես իրականացնելու փորձ: Այժմ նրանք ձայնային հաղորդագրություններ են ուղարկում իրենց անդամների բջջային հեռախոսներին՝ ավելի լավ բազմացման, կերակրման, առողջության կառավարման և կենդանիներին ավելի լավ խնամելու միջոցով այծաբուծության ոլորտում ավելի մեծ արտադրողականության հասնելուն աջակցելու համար:

Այդ կանայք իրենց հպարտությամբ կոչում են «ձայնային հաղորդագրություններով աշխատող ֆերմերներ»: 2013 թվականին կանայք սկսեցին մտածել սեփական ընկերությունը հիմնելու շարջ միջնորդությունների կարիքը վերացնելու և սեփական համայնքում սեփական աշխատանքից ավելի շատ եկամուտ ստանալու համար: «Վիդիյալ» ՈԿԿ-ի և Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման Հնդկաստանի ազգային բանկի աջակցությամբ 2016 թվականի հունվարին Ընկերությունների գրանցման ակտում գրանցվեց «Թենի շրջանի այծերի ֆերմերների սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը»:

Ընկերությունը ղեկավարում է 10 հոգուց բաղկաղած խորհուրդը, որը բաղկացած է 8 կանանցից և 2 տղամարդուց, ովքեր ղեկավարում են ընկերությունը՝ հիմնվելով անդամության բաժնեմասերի վաճառքի միջոցով ստացված գումարների վրա: Յուրաքանչյուր անդամ գնել էր 100 բաժնետոմս: Շահույթը բաժանվում է որպես դիվիդենտ, իսկ ավելցուկը պահվում է որպես ռեզերվ:

Աղբյուր՝ Ուսուցման համագործակցություն, «Թենի շրջանի «ձայնային հաղորդագրություններով աշխատող ֆերմերները» հիմնում են իրենց սեփական ընկերությունը «L3F» վերապատրաստում անցնելուց հետո», 6 հունվարի, 2016 թվական: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.col.org:

Դեպքի ուսումնասիրություն 6

ՍԱԶԿԱ-ն հնարավոր է դարձնում փոփոխությունները ՏՀՏ կիրառման միջոցով

Սեփական աշխատանքով զբաղվող կանանց ասոցիացիան (ՄԱԶԿԱ) Հնդկաստանում գործող կազմակերպություն է, որն ունի երկրի ոչ պաշտոնական, չպաշտպանված աշխատանքային սեկտորի մաս կազմող սեփական աշխատանքով զբաղվող կանանց հետ աշխատելու մանդատ: Սկզբում ՄԱԶԿԱ-ն համակարգիչներ տեղադրեց իր անդամների տներում և սովորեցրեց նրանց օգտվել դրանցից: Այնուհետև նրանք հիմնեցին համայնքային ուսուցման կենտրոններ, որոնք օգտագործվում էին վերապատրաստումների, ծրագրավորման, աշխատաժողովների

և հանդիպումների համար: ՏՀՏ-ն փոխեց կազմակերպության և նրա անդամների գործունեության բնույթը:

Աղբյուր՝ ՏՀՏ-ն հանուն փոփխության, «Սեփական աշխատանքով զբաղված կանանց ասոցիացիա, Գուջառատ: Դեպքի ուսումնասիրություն»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.eldis.org/go/home&id=67915&type=Document#.V0kQZCN97R0:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կան բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կոլեկտիվում գտնվող կանայք շահում են միասին լինելուց և, օգտագործելով ՏՀՏ ուժը, բարելավում են իրենց կյանքի որակը: Որոշ դեպքերում դրան նպաստել է բարենպաստ քաղաքական միջավայրը, որոշներում էլ դա արվել է առանց օգնության՝ կանանց սեփական նախաձեռնությամբ:[38]

ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (ESCAP)կողմից ՏՀՏ և կանանց կոլեկտիվների վերաբերյալ 12 գործերի ուսումնասիրությունը, որը հատուկ կենտրոնացել էր կանանց հնարավորությունների ընդլայնման գործում էլ-կառավարման խաղացած դերի վրա, հստակ ապացույցներ էր գտել, որ գենդերազգայուն էլ-կառավարման միջամտությունները մեծ դրական ազդեցություն են ունենում գենդերային հավասարության վրա:[39]

> Դրանք բարձրացնում են կանանց ինքնագնահատականը, հնարավորություն են տալիս նրանց մարտահրավեր նետել ավանդական նորմերին և հաստատել գործընկերային փոխհարաբերություններ, մեծացնում են աշխատաշուկա մտնելու նրանց վստահությունը, տալիս են կարոր տեղեկատվություն առկա իրավունքների և հնարավորությունների մասին և հասանելի են դարձնում փոխհատուցման մեխանիզմները: Դրանք նաև փոխակերպում են հանրային ինստիտուտները՝ դրանք երկսեռ ծառայություններ մատուցելուն տեխնիկապես և քաղաքականապես ավելի ունակ դարձնելով: [40]

Կանայք օգտագործել են ՏՀՏ-ն նաև կարծիքներ հավաքագրելու ու համախմբելու և իրենց շահերը լոբբի անելու համար: Մոնղոլիայի ժողովրդավար կանանց միությունը կիրառեց արշավների մոտեցումը և օգնեց ապահովել կանանց առցանց

[38] The ADB has compiled a large number of Asia-Pacific initiatives. See ADB, "Gender Equality Results Case Studies". Available from http://www.adb.org/publications/series/gender-equality-results-case-studies.

[39] ESCAP, "E-Government for Women's Empowerment in Asia and the Pacific", May 2016. Available from http://egov4women. unescapsdd.org/ .

[40] Oyungerel Tsedevdamba, "Mongolia's Experience: Increasing Women's Visibility Using Internet and Social Media", presentation. Available from http://iknowpolitics.org/sites/default/files/increasing_womens_visibility_using_internet_and_social_media_1. pdf

ներկայությունը և մեծացնել կանանց թիվը խորհրդարանում: 2010 թվականից, երբ արշավը սկսվեց, մինչև 2012 թվականը խորհրդարանում կանանց մասնակցությունը զրոյից հասավ վեցի:

Դեպքի ուսումնասիրություն 7

Լիխաանը ձևավորել է առցանց քարոզչության ֆորում

Լիխաանը (Կանանց առողջությանը կենտրոնը) զանգվածային կազմակերպություն է Ֆիլիպիններում, որն ակտիվ կերպով ներգրավված է եղել Վերարտադրողական առողջության մասին օրենքի ընդունման օգտին իրականացվող մոտ տասնամյակ տևած արշավին, որը նախաձեռնվել էր երկրում գործող կանանց խմբավորումների կողմից: Լիխաանը ստեղծեց առցանց ամսագիր, որը նպատակ ուներ պաշտպանել մարգինալացված խմբերի կանանց և երիտասարդների շահերը, որոնք ամենից շատն էին զգում սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված ծառայությունների և իրավունքների պաշտպանության կարիք: Լիխաանը հույս ունի, որ սա վերջիվերջո կազդի իրավաստեղծների վրա՝ և՛ ուղղակիորեն, և՛ հասարակական աջակցության ձևավորման ճանապարհով, և կհանգեցնի վերարտադրողական առողջության մասին օրենքի ընդունմանը:

Աղբյուր՝ Լիխաան խումբ: Հասանելի է հետևյալ հղումով՝ *http://www.likhaan.com/*:

2012 թվականի դեկտեմբերին Հնդկաստանում տեղի ունեցած խմբակային բռնաբարության ահասարսուռ դեպքից հետո հանրությունը, հատկապես կանայք և աղջիկները սկսեցին օգտագործել սոցիալական մեդիան իրենց դժգոհության ձայնը բարձրացնելու համար և հասան Հնդկաստանում բռնաբարությանն առնչվող իրավական նորմերի արմատական փոփոխությունների: Առցանց քարոզչությունը ստիպեց իրավաստեղծ մարմիններին հաշվի նստել իրավիճակի հետ և սկսել գործել:[41]

Ամբողջ աշխարհով մեկ կանայք օգտագործում են ՏՀՏ-ն իրենց կյանքը բարելավելու և իրենց հուզող հարցերն ռակարգ մտցնելու համար: Չնայած որ այս ամենն ունի շատ կարևոր նշանակություն, միշտ չէ, որ դրանք ի հայտ են եկել որպես հստակ սահմանված գեդերազգայուն նորմերի կամ պետական քաղաքականության հետևանք: Դրանք հաճախ առաջ են եկել որպես «ներքևների» նախաձեռնություններ՝ որոնց աջակցել և խթանել են որպես փոփոխությունների միջնորդներ հանդես եկող ՈԿԿ-ները:

[41] Akanksha Prasad and Indu Nandakumar, "Delhi gang rape case: Social media fuels rally at India Gate", The Economic Times, 24 December 2012. Available from http://articles.economictimes.indiatimes.com/2012-12-24/news/35991878_1_delhigang-adhvith-dhuddu-social-media.

Հասկանալու համար, թե ինչպես պրոակտիվ պետական քաղաքականությունը և ծրագիրը կարող են ազդել կանանց հնարավորությունների լայնամասշտաբ ընդլայնման վրա, անհրաժեշտ է հասկանալ թե ինչ են «գենդերազգայունությունը» և «գենդերային մեյնսթրիմինգը» (դրանց մասին կխոսվի 4-րդ բաժնում), նախքան ՏՀՏ-ի միջոցով կանանց և աղջիկների հնարավորությունների ընդլայնմանն ուղղված պետական քաղաքականության հնարավոր ուղղությունների քննարկմանն անցնելը (դրա մասին կխոսվի 5-րդ բաժնում):

Գործնական առաջադրանք

- Վերևում նշվել են տարբեր հասարակություններում կանանց և աղջիկների կարգավիճակը սահմանող մի շարք հանգամանքներ:
- Նշե՛ք, թե ինչպիսի խոչընդոտների են հանդիպում ձեր երկրում ապրող կանայք և աղջիկները: Դրանք կարող են տարբերվել վերևում նշված արգելքներից: Եթե դրանք իսկապես տարբեր են, ապա բացատրե՛ք, թե ինչ են դրանք իրենցից ներկայացնում և ին բացասական ազդեցություն են ունենում:
- Ձեր կարծիքով ինչպե՞ս կարող են օգտագործվել ՏՀՏ ընձեռած հնարավորությունները Ձեր երկրում ապրող կանանց և աղջիկների կյանքը բարելավելու համար:

Առանցքային մտքեր

- Կանանց և ՏՀՏ միջև գոյություն ունի բազմակողմ փոխադարձ կապ: Այն ընդգրկում է ՏՀՏ ոլորտում և լրատվամիջոցներում աշխատող կանանց, կանանց և աղջիկների կերպարի ձևավորումը ՏՀՏ-ի միջոցով և լրատվամիջոցներում և ՏՀՏ կիրառումը կանանց և աղջիկներին կրթական և առողջապահական ծառայություններ մատուցելու համար:
- Այն խոչընդոտները, որոնց կանայք բախվում են ՏՀՏ հասանելիության և դրա կիրառման հետ կված, շատ չեն տարբերվում մյուս ծառայություններից օգտվելու ժամանակ ի հայտ եկող խնդիրներից: Դրանց թվում են գրագիտության, ժամանակի, եկամտի և ֆինանսական ռեսուրսների հասանելիության պակասը, կանանց համար բարենպաստ միջավայրի բացակայությունը, շարժունության սոցիալ-մշակութային սահմանափակումները և տվյալ հասարակությունում գիտակցության մեջ առկա գենդերային դերերը:
- Կանայք շահել են և՛ անհատապես, և՛ որպես խումբ, երբ ունակ են եղել օգտագործել ՏՀՏ-ն տնտեսական իրավիճակի բարելավման և իրենց իրավունքների պաշտպանության համար:

IV. ԱՌԱՋ ԴԵՊԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Ուսուցման արդյունքները

Այս բաժինը կարդալուց հետո ընթերցողները պետք է կարողանան.

- Տարբերակել գենդերային մեյնսթրիմինգի վերաբերյալ տարբեր մոտեցումները և դրանց առանձնահատկությունները,
- Իրականացնել ՏՀՏ զարգացման ծրագրերի իրավիճակային վերլուծություն և գենդերային աուդիտ՝ իրենց երկրի համատեքստում,
- Կիրառել գենդերային մեյնսթրիմինգի փուլերը ՏՀՏ զարգացման գործընթացում՝ իրենց երկրի համատեքստում,
- Մշակել քաղաքականության կամ գործունեության տարբեր ուղղություններ՝ ողջ երկրի կամ առանձին ծրագրի մակարդակով գենդերային մեյսթրիմինգ իրականացնելու համար:

Գենդերային հարաբերություններում փոփոխություններ կարող են տեղի ունենալ սոցիալական փոփոխությունների դանդաղ գործընթացի կամ մանրամասն մշակված քաղաքականությունների և ծրագրերի միջոցով: Մարդու իրավունքների և արժանապատվության սկզբունքների վրա հիմնված լուսավորյալ և զարգացած հասարակությունը պարտավոր է իրականացնել գենդերազգայուն կառավարում՝ գենդերային հարցերին առնչվող մանրամասն մշակված քաղաքականությունների և ծրագրերի միջոցով:

Գենդերազգայուն կառավարումն ընդունում է, որ «կանայք և տղամարդիկ ունեն տարբեր կարիքներ, շահեր, նախասիրութոյններ և պատասխանատվություններ և մարտահրավեր է նետում արմատավորված գենդերային անհավասարություններին»:[42] Այդպիսի երկրի «ինստիտուտները և գործընթացները մշակված են այնպես, որ վեր հանեն և ինտեգրեն գենդերային տարբերությունները որոշումների կայացման գործընթացի բոլոր ասպեկտներ, որպեսզի քաղաքականությունները և ծրագրերը հավասարապես օգտակար լինեն բոլոր կանանց և տղամարդկանց համար»:[43]

Գենդերազգայուն կառավարումն արդյունք է, որին հնարավոր է հասնել «գենդերային մեյնսթրիմինգի» ռազմավարության և գործընթացի միջոցով: Գենդերային

[42] Gender Hub eLearning, “Gender-sensitive governance”. Available from http://governance.genderhub.org/glossary/gendersensitive-governance/.
[43] Ibid.

մեյնսթրիմինգի գենդերային հավասարության հաստատմանն ուղղված բազմակողմ ռազմավարություն է: ՄԱԿ-ի կողմից 1997 թվականին տրված պաշտոնական սահմանման համաձայն գենդերային մեյնսթրիմինգը.

> Բոլոր ոլորտներում և բոլոր մակարդակներում ցանկացած պլանավորված գործողության, ներառյալ օրենսդրության, քաղաքականությունների և ծրագրերի՝ կանանց և տղամարդկանց վրա ունեցած ազդեցության գնահատման գործընթացն է: Այն կանանց և տղամարդկանց մտահոգությունները և փորձը բոլոր քաղաքական, տնտեսական և սոցիետալ ոլորտներին առնչվող քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացի ինտեգրալ մաս դարձնելուն ուղղված ռազմավարություն է՝ ապահովելու հաար, որ կանայք և տղամարդիկ դրանցից շահեն հավասարապես, իսկ անհավասարությունը վերանա:[44]

Գենդերային մեյնսթրիմինգը կարող է սահմանվել նաև որպես մի գործընթաց որի միջոցով ապահովվում է, որ կանայք և տղամարդիկ ունեն հավասար վերահսկողություն ռեսուրսների նկատմամբ, հավասարապես շահում են զարգացման և որոշումների կայացման գործընթացից զարգացման գործընթացների, պրոյեկտների, ծրագրերի և քաղաքականությունների բոլոր փուլերում:[45]

Գոյություն ունի քաղաքականության մշակման ժամանակ «գենդերային տեսանկյունից կույր» լինելու և գենդերը պրոյեկտների, ծրագրերի և քաղաքականությունների մշակման ազդեցիկ գործոն և սոցիալական իրավիճակի էական դետերմինանտ չհամարելու ոչ միտումնավոր հակում:[46]

Այլ դեպքերում քաղաքականությունները և ծրագրերը մշակվում են «գենդերային չեզոքության» ենթադրության հիման վրա, համաձայն որի դրանք հարմար, կիրառելի կա ընդհանուր են և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար:[47] Նման «գենդերային չեզոքությունը» ուղղակիորեն հակասում է գոյություն ունեցող այն ապացույցներին որոնց համաձայն քաղաքականությունները և ծրագրերը կանանց և տղամարդանց վրա տարբեր կերպ են ազդում:

Գենդերային մեյնսթրիմինգի նպատակը գոյություն ունեցող քաղաքականությունները և ծրագրերը վերացնելը կամ փոխարինելը չէ: Այն ուղղված է դրանք ավելի

---

[44] United Nations, The Report of the Economic and Social Council for 1997 (1997).
[45] World Bank, "Glossary". Available from http://info.worldbank.org/etools/docs/library/192862/introductorymaterials/glossary.html.
[46] Ibid.
[47] Wikipedia, "Gender neutrality". Available from https://en.wikipedia.org/wiki/Gender_neutrality.

արդյունավետ դարձնելուն՝ տարբեր շահառու խմբերի տարբերվող կարիքներին ուշադրություն հրավիրելու և գենդերային հարցերը բոլոր ոլորտներ մտցնելու միջոցով, որպեսզի գոյություն ունեցող քաղաքականություններն ավելի արդյունավետ իրականացվեն և լինեն ավելի էֆֆեկտիվ, թիրախային, թափանցիկ և հաշվետու:

Գենդերային մեյնսթրիմինգը կարող է իրականացվել ինչպես ամբողջ երկրի մասշտաբով, այնպես էլ առանձին ոլորտներում:

Գործի ուսումնասիրություն 8

Գենդերային մեյնսթիմինգը Կամբոջայում

Կամբոջայի 1993 թվականի սահմանադրության համաձայն «կանայք և տղամարդիկ հավասար են օրենքի առջև և ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին մասնակցելու հավասար իրավունք (հոդված 35)», «աշխատելու հավասար իրավունք և հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք»: Այն նաև բացահայտ կերպով արգելում է «կանանց դեմ խտրականության բոլոր ձևերը» (հոդված 45):

Քաղաքական շրջանակը սահմանելուց հետո Կամբոջայի կառավարությունը մշակեց համակարգեր և գործընթացներ ողջ երկրի մակարդակով գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելու համար: Բարձր մակարդակի քաղաքական աջակցությունն ապահովված էր: Նախարարություններում ձևավորված աշխատանքային խմբերը սահմանեցին մշտադիտարկման միասնական ցուցիչներ և 18 ամիսը մեկ մշտադիտարկում էին իրականացնում: 2014 թվականից սկսած մշտադիտարկումն իրականացվում է 5 տարին մեկ:

Կամբոջայի Կանանց գործերի նախարարությունն պարբերաբար (2004, 2008 և 2014 թվականներին) իրականացնում է Կամբոջայում գենդերային իրավիճակի մշտադիտարկում, որն իրենից ներկայացնում է բոլոր ոլորտների գենդերային իրավիճակի բազմակողմանի վերլուծական գնահատում: Այս գենդերային գնահատումները նախարարություններում գենդերային մեյնսթրիմինգի իրականացման և ընդհանուր առմամբ քաղաքականության մշակումը, ծրագրավորումը դեպի գենդերային հավասարություն և զարգացում ուղղորդման հիմքն են:

Պրոյեկտահեն մոտեցումից անցում կատարելով ծրագրահեն մոտեցման՝ Կամբոջան բոլոր մակարդակներում սահմանեց համապատասխան մեխանիզմներ՝ բոլոր ծրագրերի և գործողությունների գենդերային մեյնսթրիմինգն ապահովելու համար: Բոլոր նախարարություններում գործում են աշխատանքային խմբեր և գենդերային մեյնսթրիմինգի իրականացումն ապահովող խմբեր:

Կամբոջայի կառավարությունն ընդունում է, որ առկա են մարտահրավերներ, հատկապես քաղաքականության մշակումից դեպի բոլոր մակարդակներում դրա իրականացում ընկած ճանապարհին:

Աղբյուր՝ Կամբոջայի կանանց գործերի նախարարություն, «Գենդերային մեյնսթրիմինգ: Ինստիտուցիոնալ, գործընկերային և քաղաքականության համատեքստ. Կամբոջայի գենդերային գնահատումը», 2014 թվական: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.kh.undp.org/content/dam/cambodia/docs/DemoGov/NearyRattanak4/Neary%20Rattanak%204%20-%20PB%20Gender%20Mainstreaming_Eng.pdf:

Առանձին ոլորտներում առկա են գործընթացները բազմաբնույթ են և լուծում են տվյալ պրոյեկտին առնչվող գենդերային խնդիրներ: Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների գենդերային իրավիճակի գնահատման ժամանակ արձանագրել է գենդերային խնդիրների լուծման մի քանի առանձնահատուկ եղանակ.[48]

- Նեպալում ԱԶԲ-ն ու Նեպալի կառավարությունը մշակեցին և իրականացրին «Գենդերային հավասարություն և կանանց հնարավորությունների ընդլայնում» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր կրճատել աղքատության մակարդակը գյուղական վայրերում բնակվող կանանց և այլ խոցելի խմբերի անդամների հետ տնտեսական, սոցիալական իրավական և քաղաքական հնարավորությունների ընդլայնման ինտեգրյալ գործընթացի միջոցով հատուկ աշխատանք տանելով: Ծրագրի առանձնահատուկ գծերից էին տեղական համատեքստը և կոնֆլիկտի հետևանքով ստեղծված իրավիճակը հաշվի առնելը, ծրագրի իրականացման բոլոր փուլերին կանանց կոլեկտիվ մասնակցությունն ապահովող լավ կոորդինացված համակարգը և ընդհանուր առմամբ բազմակողմ և համակողմանի մոտեցումը: [49]
- Շրի Լանկայում իրականացված երկու ծրագրեր օգտագործում էին մասնակցային մոտեցումներ համայնքային զարգացման բաղկացուցչի վրա կենտրոնանալու համար որը քարոզում էր թիրախային հանրույթներում համայնքային ենթակառուցվածքների զարգացման և կենսամակարդակի վերականգման գործընթացներում համայնքային մասնակցության, սոցիալական ներառման և գենդերային հավասարության անհրաժեշտությունը: [50]
- Բանգլադեշում 2009-2013 թվականներին Փոքր և միջին ձեռնարկատիրությունների զարգացման ծրագիրը աջակցում էր ՓՄՁ-ների

[48] ADB, "Gender Equality Results Case Studies". Available from http://www.adb.org/publications/series/gender-equalityresults-case-studies.

[49] ADB, Gender Equality Results Case Study: Nepal Gender Equality and Empowerment of Women Project (Mandaluyong City, 2016). Available from http://www.adb.org/publications/gender-equality-results-case-study-nepal.

[50] ADB, Gender Mainstreaming Case Study: Sri Lanka North East Coastal Community Development Project and Tsunami-Affected Areas Rebuilding Project (Mandaluyong City, 2015). Available from http://www.adb.org/publications/gender-mainstreamingcase-study-sri-lanka-north-east-coastal-community-development

զարգացմանն ու տարածմանը: Ծրագիրը ներառում էր կանանց սեփականությունը հանդիսացող ՓՄՁ-ներին աջակցության տրամադրումը այդ կանանց առջև ծառացած խոչընդոտների և սահմանափակումների վերացման միջոցով: Հատուկ պիլոտային շրջաններում կանանց սեփականությունը հանդիսացող ՓՄՁ-ների թիվը մեծացավ ավելի քան տասը տոկոսով: ՓՄՁ-ների կին սեփականատերերի վերապատրաստումը բիզնեսի զարգացման, հաշվապահության, վարկերի համար դիմում ներկայացնելու կանոնների ու գործընթացների և բիզնեսի իրականացմանն առնչվող կարգավորումների թեմաներով նպաստեց նրանց համար ինստիտուցիոնալ ֆինանսների հասանելիության մեծացմանը: Շահերի պաշտպանության խմբերի ձևավորումը և տարբեր ասոցիացիաներին անդամությունը մեծացրին ՓՄՁ-ների կին սեփականատերերի վստահությունը և քաղաքական փոփոխությունների համար լոբբինգի իրականացման նրանց հնարավորությունները: Ֆինանսական ինստիտուտների և ՓՄՁ-ների կին ձեռնարկատերերի ասոցիացիաների միջև երկխոսությունը և հարաբերությունների զարգացումն օգնեցին ամրապնդել փոխըմբռնումը և համագործակցությունը՝ հանգեցնելով կանանց սեփականությունը հանդիսոցող ՓՄՁ-ների ցուցաբերած արդյունքների բարելավմանը: [51]

ՄԱԿ-ի մարդկային բնակավայրերի ծրագիրն արձանագրել է մի շարք դեպքեր, երբ որոշակի գենդերային խնդիրներ ներառվել են զարգացման ծրագրերի մեջ:[52] Աֆղանստանում համայնքների կարողությունների զարգացման միջոցով խաղաղության ամրապնդմանն ուղղված ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի մարդկային բնակավայրերի ծրագիրն առանձին աշխատում էր կանանց և տղամարդկանց «ինքնօգնության» խմբերի հետ: Սա կանանց հնարավորություն տվեց ամրապնդել համերաշխությունը և սովորել միմյանց կյանքի փորձից, ստանալ ձայնի իրավունք ձեռք բերել տնտեսական անկախություն և մասնակցել խնդիրների լուծման գործընթացին: Սա համայնքային խմբերի գիտակցության մեջ մտցրեց նաև կանանց հավասար մասնակցության արժեքը: Չնայած որ ծրագրի հիմնական նպատակը խաղաղության ամրապնդումն էր, ծրագրի ղեկավարները վեր հանեցին վճռորոշ ենդերային խնդիրները և լուծեցին դրանք կանանց և տղամարդկանց համար առանձին սոցիալական և տնտեսական միջավայր ստեղծելու միջոցով:[53]

---

[51] ADB, Gender Equality Results Case Study: Bangladesh Small and Medium-Sized Enterprise Development Project (Mandaluyong City, 2015). Available from http://www.adb.org/publications/gender-equality-results-case-study-bangladesh-sme-developmentproject.

[52] United Nations Human Settlements Programme, A Compendium of Case Studies on Gender Mainstreaming Initiativies in UN-Habitat, 2008-2012 (Nairobi, 2012). Available from http://unhabitat.org/books/a-compendium-of-case-studies-ongender-mainstreaming-initiatives-in-un-habitat/.

[53] Ibid.

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ հնարավոր է կիրառել գենդերային վերլուծության տեխնիկաները ճիշտ հարցեր տալու և մի շարք փուլերի միջով անցնելու միջոցով: Այնուամենայնիվ խորը գենդերային վերլուծություններն ավելի օգտակար են և պահանջում են այդ ոլորտի փորձագիտական գիտելիք:

Կան գենդերային մեյնսթրիմինգը քաղաքականության մշակման գործընթաց մտցնելու բազմաթիվ եղանակներ: Հանրամատչելի են մեծ քանակությամբ ռեսուրսներ և գործիքակազմեր, որոնք հնարավոր է մոդիֆիկացնել՝ համապատասխան համատեքստին հարմարեցնելու համար: Հաշվի առնելով այն, ինչ հասանելի է, ստորև ներկայացվում է գենդերային մեյնսթրիմինգը քաղաքականության մշակման գործընթաց մտցնելու պրոցեսի ընդհանուր նկարագրությունը:

4.1 Գենդերային մեյնսթրիմինգի նկատմամբ մոտեցումները

Գենդերային մեյնսթրիմինգը կարևոր է, քանի որ այն գենդերի հիմնահարցը[54] բացահայտ է դարձնում քաղաքականության բոլոր ոլորտներում:[55] Գենդերային հավասարությունն այլևս հանդես չի գալիս որպես առանձին հարց, որով զբաղվում են բացառապես նախարարությունները կամ կանանց հարցերով զբաղվող ստորաբաժանումները: Գենդերային մեյնսթրիմինգը դառնում է բոլոր քաղաքականությունները և ծրագրերի մտահոգության առարկա, և այս գործընթացը գնալով ավելի է խորանում, քանի որ զարգացման տարբեր ոլորտներ սերտորեն փոխկապակցված են: Ավելին, գենդերային մեյնսթրիմինգի մոտեցումը կանանց չի դիտարկում միայնության մեջ, այլ և՛ կանանց, և՛ տղամարդկանց դիտարկում է որպես զարգացման գործընթացի գործող անձինք:[56] Ի տարբերություն «գենդերային տեսանկյունից կույր» կամ «գենդերային տեսանկյունից չեզոք» մոտեցմանը՝ գենդերային մեյնսթրիմինգը ենթադրում է, որ քաղաքականությունները, ծրագրերը և մյուս միջամտությունները կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների վրա կազդեն տարբեր ձևերով:

---

[54] ESCAP, "E-Government for Women's Empowerment in Asia and the Pacific", May 2016. Available from http://egov4women. unescapsdd.org/.

[55] Ibid.

[56] Global Entrepreneurship Development Institute, "Female Entrepreneurship Index". Available from https://thegedi.org/research/womens-entrepreneurship-index; Social Institutions and Gender Index. Available from http://www.genderindex.org; The Economist Intelligence Unit, "Women's Economic Opportunity Index 2012". Available from http://www.eiu.com/public/thankyou_download.aspx? activity=download&campaignid=weoindex2012; World Bank, "Gender Data Portal". Available from http://datatopics.worldbank.org/gender/; and World Bank, "Gender Statistics". Available from http://databank. worldbank.org/data/reports.aspx? source=gender-statistics.

Վերջապես, գենդերային հավասարությունը բարելավելու հնարավորությունները բացահայտելու միջոցով գենդերային մեյնսթրիմինգը հնարավոր է դարձնում միևնույն (առկա) ռեսուրսների օգտագործումը բոլորի համար ավելի մեծ օգուտի հասնելու և կանանց ու տղամարդկանց համար միևնույն քաղաքական գործընթացներից ***հավասար*** օգուտ ստանալու նպատակով: Օպերացիոնալ տեսանկյունից գենդերային մեյնսթրիմինգը հնարավոր է դարձնում բացահայտել և լուծում տալ անհավասարության պատճառներին և գործընթացներին և կենտրոնանալ ինչպես անաչառության, այնպես էլ արդյունքների վրա:

Գոյություն ունի գենդերային մեյնսթրիմինգը հասկանալու մի քանի մոտեցում: Դրանցից յուրաքանչյուրն իր արժեքն ունի: Դրանցից մի քանիսը կքննարկվեն հաջորդիվ:

4.1.1 Գենդերային հարցերի նկատմամբ զգայունության ձևավորումը

Գենդերային մեյնսթրիմինգի գործընթացում առաջին քայլը գենդերային հարցերի [57]վերաբերյալ տեղեկացված և զգայուն[58] դառնալն է՝ հասկանալը և ընդունելը, որ կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեն սոցիալապես պայմանավորված տարբերություններ՝ հիմնված ձեռքբերովի վարքագծի վրա: Այսպիսի տարբերությունները ազդում են ռեսուրսների հասանելիության և դրանց վերահսկողության վրա: Իր հերթին, նման զգայունությունը գենդերային վերլուծության միջոցով պետք է կիրառվի քաղաքականություններում, ծրագրերում և պրոյեկտներում կառավարման բոլոր մակարդակներում: Զգայնացման լայնածավալ վերապատրաստման ծրագրերը օգնում են ստեղծել և մեծացնել գենդերային զգայունությունը քաղաքականություն մշակողների, ծրագրերի ղեկավարների և պրոյեկտների շուրջ աշխատող անձանց շրջանում:

Գործնական առաջադրանք

Մտածեք ստորև ներկայացված խնդրի լուծման շուրջ:

Երկու կին և մեկ տղամարդ հավակնում են միջին աստիճանի պաշտոնի ձեր գրասենյակում: Երեքն էլ հավասարաչափ որակավորում և փորձ ունեն: Հատուկ հարցին ի պատասխան՝ Աննան նշում է, որ ինքը շատ հավանական է շուտով կամուսնանա: Սիրանույշն ասում է, որ ինքն արդեն ամուսնացած է և ուզում է ընտանեկան կյանք սկսել: Այս հարցը տղամարդուն չի տրվում:

[57] ESCAP, "E-Government for Women's Empowerment in Asia and the Pacific", May 2016. Available from http://egov4women. unescapsdd.org/.
[58] Ibid.

- Ի՞նչն է որոշելու, թե ով է նշանակվելու այդ պաշտոնին:
- Ո՞ւմ դուք կընտրեիք և ինչո՞ւ:
- Ի՞նչ կարելի է ենթադրել ձեր ընտրության հետևում թաքնված կողմնակալության մասին:

4.1.2 Գենդերային վերլուծություն

Գենդերային վերլուծությունը գենդերի մասին տեղեկատվության հավաքագրման, մշակման և վերլուծության գործընթացն է, որը ծառայում է որպես գործիք քաղաքականության համար: Գենդերային վերլուծությունը տրամադրում է ըստ սեռային հատկանիշի բաժանված տեղեկատվություն և գենդերային դերերի մասի պատկերացում, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչ հիմքով է բաժանվում և գնահատվում աշխատանքը: Գոյություն ունեն (հասանելի են) մի շարք գլոբալ գենդերային ցուցանիշներ, որոնք կարող են հիմք ծառայել գենդերային վերլուծությունը սկսելու համար:[59] Այս մակրոմակարդակի տվյալները թույլ են տալիս կատարել գենդերային հավասարության համեմատություններ մեծ թվով երկրների միջև: Ցուցանիշներից որոշները տալիս են նաև կանանց օրակարգի վերաբերյալ ներպետական և տնային տնտեսություններին առնչվող տվյալներ:

Գենդերային վերլուծությունը կարևոր գործընթաց է՝ ապահովելու համար, որ զարգացումը օգուտ բերի և ռեսուրսներն արդյունավետորեն և արդար կերպով բաշխվեն և՛ կանանց, և՛ տղամարդկանց: Գենդերային վերլուծությունն օգնում է կանխատեսել ցանկացած խոչընդոտ կամ դժվարություն կամ բացասական ազդեցություն, որ կարող է տեղի ունենալ: Այն նաև օգնում է ապահովել, որ զարգացման ծրագրերը գենդերային տեսանկյունից «կույր» կամ չեզոք չլինեն: Գենդերային վերլուծություն իրականացնելու համար օգտագործվում են բազմաբնույթ շրջանակներ և գործիքներ:

Պատասխանե՛ք հարցերին

- Արդյոք ձեր երկիրը հավաքում է ձեռներեցության վերաբերյալ սեռային հատկանիշով առանձնացված տվյալներ:
- Եթե այո, որտեղ կարելի է գտնել այդ տվյալները, և ինչպես են դրանք օգտագործվում ազգային քաղաքականության մշակման համար:

[59] Global Entrepreneurship Development Institute, “Female Entrepreneurship Index”. Available from https://thegedi.org/research/womens-entrepreneurship-index; Social Institutions and Gender Index. Available from http://www.genderindex.org; The Economist Intelligence Unit, “Women’s Economic Opportunity Index 2012”. Available from http://www.eiu.com/public/thankyou_download.aspx? activity=download&campaignid=weoindex2012; World Bank, “Gender Data Portal”. Available from http://datatopics.worldbank.org/gender/; and World Bank, “Gender Statistics”. Available from http://databank. worldbank.org/data/reports.aspx? source=gender-statistics.

Հնդկաստանում կանանց ձեռներեցության համար նպաստող միջավայր ձևավորելու վերաբերյալ իր հետազոտությունում Շահը[60] մանրամասնում է գենդերային վերլուծության գործընթացը (նկար 4-ի գծապատկերը):

Լինելով ծավալուն և բազմաչափ՝ գենդերային վերլուծությունը մանրակրկիտ վերլուծություն է, որն, իր հերթին, հանգեցնում է իրականացման ենթակա կոնկրետ քաղաքական առաջարկությունների: Շահի առաջարկությունները բաժանվում են հետևյալ մասերի՝

- Կառավարության ջանքերը՝ ուղղված կանանց ձեռներեցության զարգացմանը,
- Քաղաքացիական հասարակության ջանքերը՝ ուղղված կանանց ձեռներեցության զարգացմանը,
- Ձեռներեցրության զարգացմանն ուղղված ժամանակակից քաղաքականությունները՝ կարգավորիչ, խթանող, վարկային և ներկայացուցչական,
- Կանանց կողմից ձեռներեցությամբ զբաղվելուն աջակցելուն ուղղված կառավարական ծրագրերը,
- Բիզնեսի զարգացման ծառայություններ (ԲԶԾ) տրամադրողները՝ աջակցող ինստիտուտները:

[60] Hina Shah, "Creating an Enabling Environment for Women's Entrepreneurship in India", ESCAP, May 2013. Available from http://www.unescap.org/sites/default/files/ESCAP-SSWA-Development-Paper_1304_1.pdf

Պատկեր 4. Գենդերային վերլուծության Շահի մեթոդաբանությունը



Աղբյուր՝ Հինա Շահ, «Կանանց ձեռներեցությունների համար բարենպաստ միջավայրի ստեղծում Հնդկաստանում», 2013 թ մայիս: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unescap.org/sites/default/files/ESCAP-SSWA-Development-Paper_1304_1.pdf


Գործիքներ
Հարցաթերթիկներ
Մանրամասն հարցազրույց հեռախոսի միջոցով
Մաս 2
Առաջնային տվյալների հավաքագրում
Կին ձեռներեցների ընտրության չափորոշիչների վերհանում
Բիզնեսով է զբաղվում ավելի քան 3 տարի
Առաջին սերնդի ձեռներեց է
Դեմոգրաֆիական ուսումնասիրության փոփոխականներ
Կրթություն
Փորձ
Տարիք
Ամուսնական կարգավիճակ
Սոցիալական աջակցություն
Սոցիո-մշակութային վերլուծություն
Կարգավիճակ
Հարաբերություններ տանը/համայնքում
Ինքնընկալում
Միջավայր
Մարտահրավերներ
Խոչընդոտներ
Ձեռնարկատիրական վերլուծություն
Ապրանք
Արտադրության խումբ/ոլորտ
Զբաղվածություն
Արտադրություն
Մարքեթինգ
Ֆինանսներ
Եկամուտ

4.1.3 Գենդերային աուդիտ

Գենդերային աուդիտը գնահատում է, թե ինչպես են գենդերային հարցերը ինտեգրվում քաղաքականության, ծրագրերի և պրոյեկտների մեջ: Գենդերային աուդիտը կարող է ունենալ լայն շրջանակ և կարող է ուսումնասիրել օրենսդրությունը, քաղաքական ծրագրերը, բյուջեները, անձնակազմի կարողությունները, գործիքներն ու ռեսուրսները, աշխատավայրի մշակույթը և կազմակերպչական խնդիրները[61]: Գենդերային աուսիտը կարող է օգտագործվել նաև միկրոմակարդակում՝ որևէ առանձին պրոյեկտ կամ ծրագիր ուսումնասիրելու համար:

Դեպքի ուսումնասիրություն 9

Գենդերային աուդիտի գործիքը Վիետնամում

Վիետնամի պլանավորման և ներդրումների նախարարությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը մշակել են գենդերային աուդիտի գործիքը՝ որպես սոցիալական աուդիտի 4 գործիքներից մեկը՝ Վիետնամի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկմանն աջակցելու համար:

Նախաձեռնության նպատակը սոցիալական աուդիտի մոտեցման կիրառմանն ուղղված կարողությունների զարգացումն էր՝ Վիետնամի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի սոցիալական ասպեկտների մշտադիտարկման համար, և դրա սոցիալական ազդեցության մեծացումը: Մասնավորապես, նախաձեռնությունը կենտրոնացել էր Վիետնամի բնակչության, հատկապես խոցելի խմբերի կենսապայմանների բարելավմանը և բնակչության մեջ սոցիալական և տնտեսական ավասարությունների նվազեցմանը: Գործիքը համակարգային մոտեցում կիրառեց գենդերային մեյնսթրիմինգի նկատմամբ, որն ընդգրկում էր և՛ երկրորդական, և՛ առաջնային տվյալների հավաքագրում: Վերջինն ընդգրկում էր առանցքային իրազեկող և ֆոկուս խմբերի հետ հարցազրույցները և ինքնագնահատման հարցաթերթիկները:

Մշակվել և օգտագործվել է «Գենդերային աուդիտի ձեռնարկ»՝ պետական պաշտոնյաներին և որոշում կայացնողներին գենդերային աուդիտի գործիքն օգտագործել սովորեցնելու համար:

Աղբյուր՝ Վիետնամի պլանավորման և ներդրումների նախարարությունը և ՅՈՒՆԻՍԵՖ, «Գենդերային աուդիտի ձեռնարկ. սոցիալական աուդիտի գործիք՝ Վիետնամի սոցիալ-տնտեսական զարգացման

[61] Lis Myers and Lindsey Jones, "Gender Analysis, Assessment and Audit Manual & Toolkit: For use by ACDI/VOCA staff and consultants in completing gender studies", August 2012. Available from http://www.acdivoca.org/wp-content/uploads/2016/07/ACDI-VOCA-Gender-Analysis-Manual.pdf; Data2X, "Gender Data Gaps". Available from http://data2x.org/what-is-gender-data/gender-data-gaps/ ; and World Bank, The Little Data Book on Gender 2016 (Washington D.C., 2016). Available from http://data.worldbank.org/products/data-books/little-data-book-on-gender.

ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկման համար»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unicef.org/vietnam/GENDER_TA.pdf

4.1.4 Գենդերային բյուջետավորում

Գենդերային բյուջետավորումը բոլոր փուլերում գենդերային հարցն ընդգրկելու գործընթացն է: Այդ փուլերն են՝ քաղաքականության/ծրագրի մշակում, ռեսուրսների բաշխում, իրականացում, վերանայում և ազդեցության գնահատում, ռեսուրսների վերաբաշխում ու բաշխման առաջնայնությունների վերանայում:

Գենդերային բյուջետավորման կարևորությունը դրևսորվում է դրա այն հիմնադրույթում, համաձայն որի՝ քաղաքականությունը չպետք է մնա միայն թղթի վրա: Ոչ մի ծրագիր չի կարող աշխատել առանց հահամապատասխան դրամական ապահովման: Հետևաբար, գենդերային բյուջեի վերլուծությունը ստուգում է, թե ինչ գումար է տրամադրվել այս կամ այն քաղաքականության իրականացման համար, արդյոք գումարը ծախսվել է այնպես, ինչպես նախօրոք բաշխվել է, ում է հասել այդ գումարը և արդյոք տրամադրված գումրը փոխել է հասարակության մեջ առկա գենդերային հատկանիշները:

Օգտագործվում են շատ հասկացություններ, որոնք ըստ էության նույն իմաստն ունեն: Նպատակը «գենդերային հիմնահարցերը հաշվի առնող բյուջեն» է, այսինքն՝ այն բյուջեն, որն ուղղված է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների միմյանցից տարբերվող կարիքների բավարարմանը: Գենդերային բյուջետավորման վերլուծության իրականացման առավելությունները ընդգրկում են՝

- Կառավարության և դրա ներկայացուցիչների ավելի մեծ հաշվետվողականություն գենդերային հավասարության, կանանց կարիքների և հանրային ծախսերի հետ կապված կանանց իրավունքների հարցերով,
- Ավելի մեծ թափանցիկություն և կոռուպցիայի մակարդակի իջեցում,
- Քաղաքական ծրագրերի պլանավորման և բյուջետավորման գործընթացում կանանց տեղեկացված մասնակցություն:

Չնայած կան գենդերային բյուջետավորման իրականացման մի քանի ելակետեր, սեռային հատկանիշով առանձնացված տվյալների բազաները կարևոր նշանակություն ունեն գործընթացի բոլոր փուլերում:

Դեպքի ուսումնասիրություն 10

Գենդերային հավասարության ապահովմանն ուղղված բյուջեն Ֆիլիպիններում

Սկսած 1996 թվականից, Ֆիլիպիններում ցանկացած պետական մարմնից պահանջվում էր իրենց բյուջեի առնվազն հինգ տոկոսը տրամադրել գոնդերային հավասարության հաստատմանն ուղղված աշխատանքներին և պատրաստել գենդերային և զարգացման ծրագիր:

Ֆիլիպինյան փորձի դրական կողմը գենդերային հավասարության ազգային ապարատի կողմից նախարարություններին տրամադրված աջակցությունն էր, ինչը հանգեցրել էր նախարարություններում իրազեկության բարձրացմանը, նվիրվածության մեծացմանը և կարողությունների զարգացմանը:

Այնուամենայնիվ, հաճախ բարձրաձայնվում էին բյուջեի այսքան փոքր մաս գենդերային հավասարության խնդիրներին տրամադրելու հետ կապված ռիսկերը, քանի որ նման մոտեցումը կարող էր ուժեղացնել կանանց մարգինալացումը՝ կապված ռեսուրսների հասանելիության հետ: Ընդգծվում էր ամբողջ բյուջեն գեմդերային տեսանկյունից վերանայելու անհրաժեշտությունը:

Ֆիլիպինների բյուջետավորման և կառավարման վարչությունը պաշտպանում էր կատարողականամետ բյուջետավորման համակարգ գենդերային հարցրերի ինտեգրման մոտեցումը՝ կապված բոլոր հանրային ծախսերի հետ:

Աղբյուր՝ Քերոլայն Հաննան, «Գենդերային հարցերի մեյնսթրիմինգ ազգային բյուջեներ. ակնարկ», 2008թ. ապրիլ: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.un.org/womenwatch/daw/news/speech2008/2008%20Korea%20Gender-responsive%20budgets%20April%2019.pdf:

Գենդերային բյուջետավորման վերլուծությունը կարող է իրականացվել հետևյալ փուլերում.

- Բյուջեի նախագծի մշակման փուլում, երբ կարելի է երաշխավորել, որ բյուջեով նախատեսված ֆինանսական բաշխումները համապատասխանում են գոյություն ունեցող կարիքներին: Կարող է իրականացվել ընթացիկ տարվա բյուջետային հաշվարկների վերլուծություն վերանայված հաշվարկների կամ նախորդ տարվա իրական ծախսերի համեմատ՝ ապահովելու համար, որ ձեռք են առնվել ճշգրտիչ քայլեր ընթացիկ տարվա բյուջեի պատշաճ և ամբողջական կիրարկման համար:
- Հետբյուջետային փուլում, երբ հնարավոր է վերլուծել ոլորտային և ըստ նախարարությունների կատարված բաշխումներն ու ծախսերը: Բաշխումները ցույց են տալիս կառավարության առաջնահերթությունները: Կարելի է վերլուծել նաև եկամուտների մասը՝ թե որոնք են եկամուտների աղբյուրները,

սուբսիդավորումները և այլն, ու թե ինչպես են դրանք ազդում կանանց և տղամարդկանց վրա:

- Իրացման փուլում կարելի է վերլուծել, թե արդյոք բյուջեն օգտագործվում է ամբողջ չափով և այնպես, ինչպես նախապես ծրագրավորված է եղել: Որոնք են իրականացման ծախսերը և սուբսիդավորումները, և ում համար են դրանք նախատեսված:
- Հետիրացման փուլում, երբ կարելի է ուսումնասիրել բյուջեի արդյունքները և ազդեցությունը: Բաշխումների իրականացման ժամանակ սպասվող արդյունքները կարելի է վերլուծել իրական, ներառյալ ոչ միտումնավոր արդյունքերի համեմատ. արդյոք գումարն օգտագործվում է այնպիսի եղանակով, որ հնարավոր է դարձնում արդյունավետ ճանապարհով հասնել ծրագրավորված արդյունքներին, և որն է դրա ունեցած ազդեցությունը: Կարելի է իրականացնել նաև ծրագրերի և պրոյեկտների ազդեցության գնահատում այն տեսանկյունից, թե արդյոք դրանք հասել են իրենց առջև դրված նպատակներին և խնդիրներին:

Դեպքի ուսումնասիրություն 11

Գենդերային մեյնսթրիմինգն Ինդոնեզիայում

Ինդոնեզիայի Հանրապետության կառավարության համար գենդերային մեյնսթրիմինգը գենդերային հավասարության հասնելու առանցքային ռազմավարությունն է: Համար 9/2000 նախագահական հրամանագրում գենդերային մեյնսթրիմինգը ներկայացվում է որպես «բոլոր պետական մարմինների գործունեության անբաժանելի մասը»: Միաժամանակ, համապետական և տարածքային կառավարման մարմիններին հանձնարարվել է մշակել գենդերային մեյնսթրիմինգի իրականացման մեխանիզմներ և ծրագրեր:

Բազմաոլորտ և բազմամակարդակ պետական մասնակցության հետ միաժամանակ, գենդերային հիմնահարցերն հաշվի առնող բյուջետավորմանն Ինդոնեզիայում աջակցում են նաև ռազմավարական գործընկերությունները: Կանանց խմբերը ներգրավված են զարգացման ծրագրերի մշակման գործընթացում տեղական և տարածքային մակարդակում, և նրանց ունեցած ներդրումներն իրենց դերն են խաղում համապետական մակարդակով նման ծրագրերի մշակման ընթացքում: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները համագործակցում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ հանրության մասնակցությունը մեծացնելու համար: Ինդոնեզիայի նախարարությունների, դոնոր կազմակերպությունների և ՄԱԿ-ի գործակալությունների միջև ձևավորվել են ամուր հարաբերություններ՝ ուղղված ֆինանսական և տեխնիկական աջակցության տրամադրմանը: Ավելին, համալսարանները և ՈԿԿ-ները նպաստել են հանրային ոլորտի պաշտոնյաների, ներառյալ ֆինանսների նախարարության և Բյուջեի հարցերով գլխավոր տնօրինության աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնություններին: Միասին վերցրած՝ ամենատարբեր կազմակերպություններ և անձինք իրենց ներդրումն են ունեցել

Ինդոնեզիայում գենդերային հիմնահարցերը հաշվի առնող բյուջետավորման ինստիտուցիոնալացման և ամրապնդման գործում:

Աղբյուր՝ ԱԽՏՍՀ, Կանանց տնտեսական հնարավորությունների զարգացում. Ասիայի ներկայացուցչական դեպքերի ուսումնասիրություն (Բանգկոկ, 2014), էջ 17: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unescap.org/sites/default/files/Empower-Women-Economically.pdf:

Պատասխանե՛ք հարցերին

Մոտ 60 երկիր ներդրել է գենդերային մեյնսթրիմինգի այս կամ այն ձևը՝ որպես քաղաքացիներին առավել արդյունավետ, էֆֆեկտիվ և պատասխանատու ծառայություններ մատուցելու քաղաքականության մի մաս:

- Արդյոք ձեր երկիրը մտնո՞ւմ է այդ 60 երկրների ցանկի մեջ:
- Հնարավո՞ր է առցանց գտնել ձեռ երկրի գենդերային մեյնսթրիմինգի քաղաքականության մասին տեղեկատվությունը:
- Եթե այո, ապա ձեր կարծիքով գենդերային քաղաքականության ի՞նչ մոտեցում է որդեգրվել: Դա համապետակա՞ն, թե՞ ոլորտային մոտեցում է:
- Կարո՞ղ եք գտնել սեռային հատկանիշով առանձնացված տվյալներ կանանց ձեռներեցության ոլորտի վերաբերյալ: Եթե այո, ապա ի՞նչ է այն պարունակում:

4. 2 Գենդերային մեյնսթրիմինգի փուլերը

Գենդերային հարցերը միայն կանանց հարցերով զբաղվող վարչությունների կամ նախարարությունների գործը չեն: Արդյունավետ լինելու համար գենդերային մեյնսթրիմինգը պետք է ունենա համապետական մոտեցում և պետք է ընդգրկվի[62] ցանկացած վարչության կամ նախարարության լիազորությունների և պարտականությունների սահմաններում: Սա կարևոր է այն պատճառով, որ վարչությունները և նախարարությունները, բոլոր կառավարական հաստատությունները փոխկապակցված են այս կամ այն կերպ, և որովհետև մի նախարարության քաղաքականություն կարող է դրական կամ բացասական ազդեցություն ունենալ մյուսի աշխատանքի վրա: Անկախ մոտեցումից, գենդերային մեյնսթրիմինգը գործընթացն ունի մի քանի փուլ: Այդ փուլերն ամփոփ կերպով ներկայացվում են ստորև՝ հատուկ հղում կատարելով կանանց ձեռներեցությանը[63]:

[62] ESCAP, "E-Government for Women's Empowerment in Asia and the Pacific", May 2016. Available from http://egov4women. unescapsdd.org/.

[63] UNDP, "Gender Mainstreaming in Practice: A Toolkit, Part 1 and 2", 2007. Available from http://www.kg.undp.org/content/ kyrgyzstan/en/home/library/womens_empowerment/a-toolkit--gender-mainstreaming-in-practice.html.

4.2.1 Ովքե՞ր են շահառուները

Չնայած որ զարգացման ցանկացած ոլորտ իր շահառուներն ունի հասարակության մեջ այն ժամանակ, երբ խոսքը գնում է գենդերային հարցերի մասին, պետք է պատասխանել մի քանի այլ հարցերի.

- Ովքե՞ր են գենդերային մեյնսթրիմինգի շահառուները: Կանանց ձեռներեցության համատեքստում, այն կընդգրկի՝
    - Տարբեր նախարարություններում աշխատող պաշտոնատար անձանց (օրինակ՝ արդյունաբերության, տարածքային զարգացման, կանանց և երեխաների, կրթության, առողջապահության, ֆինանսների),
    - Բանկային ոլորտը և այլ ֆինանսական ինստիտուտները, ներառյալ միկրոֆինանսների ոլորտի ինստիտուտները,
    - Գիտնականները և գենդերային հարցերով փորձագետները,
    - Կրթական և կարողությունների զարգացման հաստատությունները,
    - ՈԿԿ-ները և համայնքային կազմակերպությունները,
    - Կին ձեռներեցներին:
- Արդյո՞ք շահառուների միջև և քաղաքականություն մշակող մարմիններում առկա է գենդերային հավասարակշռություն: Եթե առկա է գենդերային անհավասարակշռություն, ապա կարևոր է, որ այն շտկվի, և քաղաքականություն մշակող մարմնի առնվազն 30 տոկոսը լինի թերներկայացված խմբից:
- Ի՞նչ յուրահատուկ գիտելիք և հմտություններ կարող է իր հետ բերել շահառուների խումբը: Ի հավելումն ամբողջ համակարգի ներկայացուցիչներ ներառելուն, պետք է ապահովել, որ շահառուների խումբն ունենա տարաբնույթ ոլորտներին առնչվող փորձ: Օրինակ, պաշտոնատար անձինք և խորհրդարանի ներկայացուցիչների կարող են իրենց հետ բերել քաղաքական փորձ, ՈԿԿ-ները կարող են բերել ոլորտի հիմնարար փորձ, իսկ հետազոտողները կարող են արժեքավոր տվյալներ տրամադրել որոշումների կայացման համար: Արդյո՞ք խմբի ներսում կան գենդերային հարցերի հետ կապված փորձագետներ:

Գենդերային մեյնսթրիմինգի շահառուների մատրիցա

Լեգենդ

- Բաղաքականության ուղղանպատակումներում և կոնկրետ բաղադրամասերի մշակում
- Ինստիտուցիոնալ բաղադրամասերի իրենց կանոնց և տեղեկատվության կարիքների և փորձի հետ կապը
- Բարոյական և հասարակական ակտիվության ներգրավում
- Տվյալների հավաքագրում և գենդերային վերլուծության իրականացում
- Կանացիություն բաղադրական կամքի ամրապնդումը
- Կանացիություն ֆինանսական և այլ գրավոր օգնության ապահովումը

Շահառուների խումբ	Բաղադրամասերի ուղղանպատակումներում և կոնկրետ բաղադրամասերի մշակում	Ինստիտուցիոնալ բաղադրամասերի իրենց կանոնց և տեղեկատվության կարիքների և փորձի հետ կապը	Բարոյական և հասարակական ակտիվության ներգրավում	Տվյալների հավաքագրում և գենդերային վերլուծության իրականացում	Կանացիություն բաղադրական կամքի ամրապնդումը	Կանացիություն ֆինանսական և այլ գրավոր օգնության ապահովումը
Գենդերային ֆոկալ կետեր այլ նախարարություններում և պետական մարմիններում	●			●		●
Գենդերային հավասարության ապահովման մանրամասն ունեցող զարգացման գործընկերներ	●		●	●	●	●
Գենդերային որոշում փորձ ունեցող պետական կամ անկախ փորձագետներ	●			●		
Մասնավոր որոշի շահերի կին և տղամարդ ներկայացուցիչներ		●	●	●	●	●
Կանանց կամ գենդերային հարցերով զբաղվող ՊՀԿ-ներ կամ համայնքահեն կազմակերպություններ	●	●	●	●		●
Տղամարդկանց գենդերային շահերը պաշտպանող ՊՀԿ-ներ կամ համայնքահեն կազմակերպություններ	●	●	●	●		●
Համապատասխան որոշային կամ «հատուկ շահի» կազմակերպություններ, որոնք հետաքրքրված են գենդերային հարցերով	●	●	●	●		●
Մարդու իրավունքների իմաստ կամ պաշտպաններ	●	●	●	●		
Մինչ թեմաներ կամ քաղաքական վերլուծաբաններ, որոնք ունեն գենդերային հարցերում փորձ և փորձագիտական գիտելիք	●			●		
Գիտնականներ և հետազոտողներ համալսարանների Գենդերային հետազոտությունների ամբիոններից կամ նմանատիպ այլ ամբիոններից	●			●		
Գենդերային հարցերին աջակցող քաղաքական գործիչներ			●		●	●
Գենդերային վիճակագրության որոշում փորձ ունեցող վիճակագիրներ կամ այլ տվյալներ հավաքագրողներ				●		

Աղբյուր՝ ՄԱԶԳ, «Գենդերային մեյնսթրիմինգը պրակտիկայում. գործնական, մաս 1 և 2», 2007 թ. մաս 2, հասանելի է հետևյալ հղմամբ http://www.kg.undp.org/content/kyrgyzstan/en/home/library/womens_empowerment/a-toolkit--gender-mainstreaming-in-practice.html

4.2.2 Ո՞րն է խնդիրը

Մի քանի հիմնարար հարցերին տրված պատասխանը կօգնի վերահանել հիմնական խնդիրը: Այդ հացերի թվում են.

1. Ո՞րն է առարկան: Տվյալ դեպքում առարկան է՝ «կանանց ձեռներեցության խթանումը ՏՀՏ-ի միջոցով»:
2. Ո՞րն է վերջնանպատակը: Տվյալ դեպքում՝ «կանանց հնարավորությունների ընդլայնում կանանց ձեռներեցության միջոցով»:
3. Արդյո՞ք սա կանանց և տղամարդկանց վրա տարբեր կերպ է ազդում:
4. Արդյո՞ք այս խնդրի մեյնսթրիմինգը կհանգեցնի ինստիտուտների, վերաբերմունքի և գենդերային հավասարությունը խոչընդոտող այլ գործոնների տրանսֆորմացիայի:

Եթե 3-րդ և 4-րդ հարցերի պատասխանը «այո՛, միանշանակ» է, ապա պետք է իրականացնել գենդերային աուդիտ:

4. 2. 3 Գենդերային քարտեզագրում և աուդիտ

Գենդերային քարտեզագրումը տեղեկատվության հավաքագրման, ինչպես նաև արդեն առկա և հետագայում հավաքագրման ենթակա տեղեկատվության վերհանման գործընթացն է: Սրա հետ կապված հարցերն ընդգրկում են.

- Ի՞նչ տեղեկատվություն է առկա այն մասին, թե նախկին փուլում վերհանված խնդիրն ինչ տարբեր ազդեցություններ է ունենում կանանց և տղամարդկանց վրա:
- Ի՞նչ տեղեկատվություն է պակասում:
- Հարցի հետ կապված ի՞նչ միջոցառումներ են արդեն կատարվել կամ ի՞նչ քաղաքական որոշումներ են ընդունվել:
- Այդ հարցի հետ կապված ի՞նչ ընթացիկ միջոցառումներ են իրականացվում:
- Ա՞յս հարցի հետ կապված ի՞նչ այլ միջոցառումներ են նախատեսվում: [64]

Այս հարցերի պատասխաններն օգնում են որոշել, թե ինչ տեղեկատվական բացեր են առկա: Հետևաբար, կարելի է իրականացնել գենդերային աուդիտ տեղեկատվական բացերը փակելու նպատակով: Գենդերային աուդիտը վճռական նշանակություն ունի տեղեկացված, գիտակից քաղաքական որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ

[64] Ibid.

տեղեկատվության և տվյալների տրամադրման տեսանկյունից: Գենդերային աուդիտի առանցքային քայլերից են. [65]

- Նախապատրաստական աշխատանք,
- Փաստաղթերի վերանայում,
- Առանցքային իրազեկողների հետ հարցազրույցներ,
- Ֆոկուսային խմբերի քննարկումներ,
- Ինքնագնահատման հարցաթերթեր,
- Տվյալների վերլուծություն և գենդերային մեյնսթրիմինգի կատըարելագործման միջոցառումների ծրագրի մշակում,
- Միջոցառումների ծրագրի տրամադրում բոլոր իրավասու մարմիններին,
- Միջոցառումների ծրագրի իրականացման մշտադիտարկում:

Ֆիլիպինների Կանանց հարցերով հանձնաժողովը մշակել է «Գենդերային հավասարակշռության և զարգացման ուղեցույցը», որը կարող է զգալի աջակցություն ցուցաբերել գենդերային աուդիտին:[66] Այդ ուղեցույցը պարունակում է քայլ առ քայլ նկարագրված գործընթաց՝ ամբողջ համակարգի մակարդակով պարտադիր իրականացման ենթակա համապատասխան միջոցառումների ցանկով՝ նախատեսված քաղաքականություն մշակողների համար:

4.2.4. Միջոցառումների և բյուջեի վերաբերյալ որոշումների կայացումը

Գենդերային քարտեզագրում և աուդիտ իրականացնելուց և դրանցից ստացված տեղեկատվությամբ ու գիտելիքներով զինվելուց հետո գալիս է քաղաքականության ձևավորման և բյուջետային հատկացումների փուլը: Այս փուլում կարևոր է փնտրել հետևյալ առանցքային խնդիրները լուծելու լավագույն ուղիները.

- Արդյունավետություն՝ ինչպե՞ս կարելի է սահմանափակ ռեսուրսներով հասնել ցանկալի արդյունքների:
- Էֆֆեկտիվություն՝ առկա իրավիճակում քաղաքական միջամտությունը որքանո՞վ արդյունավետ կարող է լինել:
- Գենդերային հավասարություն՝ ի՞նչ չափով է հնարավոր հարթացնել կանանց և տղամարդկանց միջև սոցիալական, պատմական և տնտեսական անհավասարությունը:

---

[65] Viet Nam's Ministry of Planning and Development and UNICEF, "Gender Audit Manual: A social audit tool to monitor the progress of Viet Nam's Socio-Economic Development Plan", no date. Available from http://www.unicef.org/vietnam/GENDER_TA.pdf.

[66] National Economic and Development Authority, Philippine Commission on Women, and Official Development Assistance Gender and Development Network, "Harmonized Gender and Development Guidelines for Project Development, Implementation, Monitoring and Evaluation", Second Edition, December 2010. Available from http://pcw.gov.ph/sites/default/files/documents/ resources/harmonized-gad-guidelines-2nd_ed_0.pdf.

- Ինչպե՞ս է հնարավոր քաղաքականության մեջ ընդգրկել սահմանակից այլ նպատակները, օրինակ՝ սոցիալական արդարությունը: Կարո՞ղ են այլ խմբեր ևս (օրինակ՝ ծայրահեղ աղքատության մեջ գտնվողները) շահել քաղաքական միջամտությունից:

Օրինակ, հնարավո՞ր է ձեռներեցության նպատակով ՏՀՏ օգտագործման վերաբերյալ կրթությունն ու կարողությունների զարգացումն ընդգրկել փոքր ձեռնարկատիրությամբ զբաղվել ցանկացող կանանց համար կապիտալի և ֆինանսների հասանելիության մեծացմանն ուղղված ֆինանսական քաղաքականության շրջանակ:

Գործնական աշխատանք

- Նշե՛ք ձեր երկրի կին ձեռներեցների վերաբերյալ ձեր ունեցած տեղեկատվությունը:
- Նշե՛ք ձեր երկրի կին ձեռներեցների վերաբերյալ այն տեղեկատվությունը, որ դուք *չունեք*, սակայն որն անհրաժեշտ է իրազեկ քաղաքականության մշակման համար:
- Մշակե՛ք գենդերային քարտեզագրման և աուդիտի առաջարկ: Ընդգրկեք ձեր կառույցի ծրագրի գենդերային աուդիտի առաջարկի տեխնիկական առաջադրանքը:
- Հիմնավորե՛ք ձեր առաջարկը ղեկավարի տեղակալին:

4.2.5 Հաղորդակցություն և քարոզչություն

Բազմաթիվ ուսումնասիրությունների և երկրներից ստացված ապացույցները ցույց են տալիս, որ կանայք ունեն տեղեկատվության պակաս գոյություն ունեցող հանրավորությունների վերաբերյալ: Դեպքի ուսումնասիրություն 12-ը ներկայացնում է հաղորդակցական փոսի առկայության դասական օրինակ, որն այդքան հաճախ արտացոլվում է կանանց և ՏՀՏ հետ առնչվող ծրագրերի վերաբերյալ գրականությունում: [67]

[67] Anita Dighe and Usha Vyasulu Reddi, Women's Literacy and Communication Technologies: Lessons that Experience has Taught Us (New Delhi: Commonwealth Educational Media Centre for Asia and Commonwealth of Learning, 2006). Available from http://cemca.org.in/ckfinder/userfiles/files/CEMCA_Womens_Literacy1.pdf ; and ADB, Gender Tool Kit: Micro, Small, and Medium-Sized Enterprise Finance and Development (Mandaluyong City, 2014). Available from http://www.adb.org/ documents/gender-tool-kit-micro-small-and-medium-sized-enterprise-finance-and-development . See also ESCAP, Enabling Entrepreneurship for Women's Economic Empowerment in Asia and the Pacific (Bangkok, no date). Available from http:// www.unescap.org/sites/default/files/Enabling%20women's%20entrepreneurship.pdf .

Դեպքի ուսումնասիրություն 12

Հայդերաբադում (Հնդկաստան) վառառքով զբաղվողներն անտեղյակ էին իրենց համար հասանելի բանկային վարկերի մասին

Հայդերաբադի կենտրոնում գտնվող հանրային բանկի գրասենյակից դուրս գոյություն ունի փողոցային շուկա: Այդտեղի մանր առևտրականների մեծ մասը կանայք են: Բանկն առաջարկում է (Հնդկաստանի կառավարության հանձնարարության համաձայն) բազմաթիվ զրոյական հաշվեկշռով խնայողական հաշիվներ և ցածր տոկոսադրույքով փոքր վարկեր՝ նախատեսված մանր առևտրով զբաղվող կանանց համար: Սակայն այդտեղի առևտրականները բացարձակ անտեղյակ էին հենց իրենց դռան շեմին առկա հնարավորությունների մասին:

Աղբյուր՝ հեղինակի անձնական հետազոտություններ և դեպքի վայր կատարած այցելություններ, 2010:

Կարևոր է հասկանալ նաև, որ գենդերային մեյնսթրիմինգին դիմադրողներ են հանդիպում և՛ քաղաքականություն մշակողների, և՛ շահառուների շրջանում: Դրան կան բազմաթիվ պատճառներ: Դրանցից են գենդերային հարցերի վերաբերյալ սխալ տեղեկատվությունը կամ տեղեկատվության պակասը, սահմանափակ ռեսուրսները և գենդերային դերերի մասին մշակութային և ավանդական պատկերացումները: Հետևաբար, հաղորդակցական և քարոզչական ռազմավարությունները գենդերային մեյնսթրիմինգի կարևոր մասն են:

Շահառուների շրջանում իրազեկության բարձրացումը

Տեղեկատվական ռազմավարությունները պետք է ընդգրկվեն քաղաքականության մշակման, ծրագրերի և պրոյեկտների իրականացման գործընթացի բոլոր փուլեր: Արդյունավետ հաղորդակցական տեխնոլոգիաները հաշվի են առնում կանանց և տղամարդկանց (որպես մատակարարներ, հանդիսատեսներ, սուբյեկտներ և շահառուներ) տարբեր կարիքները: Այլ կերպ ասած՝ հաղորդակցությունը պարզապես տեղեկատվության փոխանցման չեզոք գործընթաց չէ, այլ պարունակում է իրազեկության բարձրացման, վարքագծի փոփոխման և հաջողված փորձի փոխանցման նպատակների սահմանում և իրականացում, և այս տարբեր նպատակների թիրախները տարբեր շահառուներ են:

Կին շահառուների համար առաջին հերթին կարևոր է իմանալ լրատվական դաշտը և ՏՀՏ համակարգը և գոյություն ունեցող նախապատվությունները: Լրատվական դաշտը ճիշտ օգտագործելու համար կարելի է առաջադրել հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք կանայք և տղամարդիկ կարդում են տարբեր հրապարակումներ:
- Արդյո՞ք կանայք և տղամարդիկ լսում են տարբեր էլեկտրոնային լրատվամիջոցներ:
- Ի՞նչ բովանդակության նյութեր են նրանք նախընտրում. արդյո՞ք կանայք և տղամարդիկ տարբերվում են նյութերի նախընտրելի բովանդակության տեսանկյունից:
- Արդյոք լրատվամիջոցների սպառման բնութագրերը (հաճախականությունը, ժամանակը) տարբեր են կանանց և տղամարդկանց համար:
- Ի՞նչ ճանապարհով են կանայք ստանում իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը կամ օգնությունը՝ զանազան լրատվամիջոցների կամ ՏՀՏ-ների՞, թե՞ միջազգնձնային աղբյուրների՝ բարեկամների, ընկերների, այլ կանանց, հեղինակավոր անձանց, տեղի ՈԿԿ-ների կամ պաշտոնատար անձանց միջոցով:
- Արդյո՞ք կանայք և տղամարդիկ ունեն վստահելիության տարբեր չափորոշիչներ (կապված հեղինակությունների, օգտագործված փաստարկների և այլնի հետ): Այլ կերպ ասած՝ տեղեկատվության ինչպիսի աղբյուրներ են կանանց համար համարվում «վստահելի»:
- Արդյո՞ք կանայք և տղամարդիկ ունեն տարբեր արժեքներ, ինչի հետևանքով որոշակի տեղեկատվության արձագանքում են տարբեր ձևերով:

Այս հարցերին պատասխանելը կօգնի ձևավորել հաղորդակցության ռազմավարություն, որը կապահովի, որ կանանց իրազեկությունն իրենց հասանելի հնարավորությունների, քաղաքականությունների, ինստիտուտների և գործընթացների մասին կմեծանա: Այլապես արդյունքը նման կլինի «մթության մեջ քար նետելուն»:

Շահառուների շրջանում քարոզչությունը

«Գենդերային տեսանկյունից կույր» կամ «գենդերային տեսանկյունից չեզոք» մոտեցումները հաղթահարելու համար անհրաժեշտ են բարձրաստիճան պաշտոնյաներին և որոշում կայացնողներին, գիտնականներին, դոնորներին և զարգացման հարցերով գործընկերներին թիրախավորող ակտիվ և արդյունավետ քարոզչական ռազմավարություններ: Այս խմբերում «գենդերային հարցերի վերաբերյալ զգայուն» քաղաքականության մշակման քարոզչության մի քանի ձևերից են.

- **Գենդերային ֆոկալ կետերի կամ գենդերային կառավարման հանձնաժողովների ձևավորում բոլոր նախարարություններում և՛ համապետական, և՛ տարածքային և՛ տեղական մակարդակներում:** Բոլոր շահառուներին միավորող ցուցակների կամ սոցիալական ցանցերում (օրինակ՝ Ֆեյսբուքում կամ Գուգլ + -ում) ձևավորված խմբերում միավորելը տեղեկատվությամբ կիսվելու կամ քննարկումներ կազմակերպելու արդյունավետ

եղանակ է, պայմանով, որ բոլորն ունեն համացանց մուտք գործելու հնարավորություն: Գենդերային ֆոկալ կետերը կարող են տեղեկացնել խմբերին համապատասխան կառավարական նախաձեռնությունների մասին: Միաժամանակ, գենդերային ֆոկալ կետերը որպես խմբերի սեփական դատողությունների փոխանցման խողովակ ծառայեցնելը կօգնի ապահովել, գենդերային հարցերը մեյնսթրիմինգի ենթարկվեն պետական քաղաքականության մշակման և ծրագրավորման ժամանակ:

- **Տարեկան գենդերային հաշվետվությունների մշակում:** Կառավարության կողմից նմանատիպ հաշվտվության ներկայացումը կարող է դառնալ վիճակագրական տեղեկատվության կարևոր աղբյուր և առաջընթացին հետևելու ու հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու գործիք: Նմանատիպ հաշվետվությոն կարող է մշակվել ինչպես «ներսում»՝ գենդերային հարցերով պատասխանատու ազգային կառույցի կողմից, այնպես էլ պայմանագրի հիման վրա՝ հետազոտություններ իրականացնող կազմակերպության կամ ՈԿԿ-ի միջոցով:
- **Էլեկտրոնային հաղորդակցության միջոցների, օրինակ՝ էլեկտրոնային կայքերի և համայնքների օգտագործում:** Էլեկտրոնային համայնքի մեկ օրինակ է Գենդերային հարցերով լուծումների փոխանակման կենտրոնը[68]՝ գիտելիքի կառավարման նախաձեռնություն՝ մշակված ՄԱԿ-ի հնդկաստանյան թիմի կողմից: Ձևավորված լինելով 2005թ-ին որպես անդամակցության վրի հիմնված առցանց հարթակ՝ կենտրոնը միավորում է քաղաքականություն մշակողներին, քաղաքացիական հասարակության՝ զարգացման հարցերով զբաղվող անդամներին, ՈԿԿ-ներին, միջազգային կազմակերպություններին, մասնավոր ոլորտի ներկայացուցիչներին, գիտական ոլորտում աշխատողներին, լրատվամիջոցներին և կառվարությանը՝ սեփական փորձի հիման վրա ձեռք բերած գիտելիքները կիսելու համար:
- **Գենդերային կադրերի կենտրոնի ստեղծում:** Սրանք կարող են լինել գենդերային քաղաքականության վերաբերյալ հաշվետվությունների, գրքերի, տեղեկագրերի և այլ տեղեկատվության հավաքագրման և վերաբաշխման կենտրոններ, որոնք գենդերային մեյնսթրիմինգն ավելի արդյունավետ կդարձնեն և կնպաստեն գենդերային հարցերի պրոֆիլի՝ կառավարության կողմից քննարկվող հարցերում ավելի մեծ տեղ զբաղեցնելուն և՛ ազգային, և՛ տարածքային մակարդակով:
- **Համագործակցություն առաջատար լրատվամիջոցների հետ գենդերային հարցերին առնչվող նյութերի մշակման մասով՝** քաղաքացիների շրջանում լայն շրջանառության մեջ մտցնելու համար՝ որպես համայնքային և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մի մաս: Լրատվամիջոցների հետ նման համագործակցությունը կնպաստի նաև շահառուների շրջանում իրազեկության բարձրացմանը:

[68] United Nations in India, "UN Solution Exchange". Available from http://in.one.un.org/page/un-solution-exchange.

Գործնական առաջադրանք

ՄԱԿ-ի Կանանց հարցերով հանձնաժողովը հրապարակել է տարեկան հաշվետվություն՝ «Աշխարհի կանանց առաջընթացը 2015-2016 թվականներին»:

- Արդյո՞ք ձեր երկիրը հրապարակում է գենդերային հարցերին առնչվող հաշվետվություն: Այն հասանելի՞ է ձեր երկրի էլեկտրոնային կայքով:
- Եթե այո, ապա ինչի՞ մասին է վերջին հաշվետվությունը: Ի՞նչ է այն ընդգծում:
- Եթե ոչ, հիմնավորե՛ք ձեր երկրում ամենամյա գենդերային հաշվետվության ներկայացման անհրաժեշտությունը: Դուք հանդես եք գալու բարձրաստիճան պաշտոնյաների խմբի առջև: Ինչպես դուք կհամոզեք խմբին, որ անհրաժեշտ է իրականացնել ամենամյա գենդերային հաշվետվություն:

Առանցքային դրույթներ

- «ՏՀՏ-ն հանուն զարգացման» ծրագրերը կանանց և տղամարդկանց վրա տարբեր կերպ են ազդում: Այս տարբերությունները հաղթահարելու հարցում կարևոր դեր է խաղում գենդերային մեյնսթրիմինգը:
- Գենդերային մեյնսթրիմինգը գենդերային հարցերը բոլոր պետական ծրագրերում ներառելու գործընթացն է:
- Գենդերային մեյնսթրիմինգը կարող է իրականացվել ինչպես համապետական, այնպես էլ առանձին ծրագրի մակարդակով:
- Գենդերային մեյնսթրիմինգի հետ կապված կան տարբեր ելակետեր կամ մոտեցումներ: Այն ներառում է գենդերային վերլուծություն, գենդերային աուդիտ և գենդերային բյուջետավորում:
- Գենդերային մեյնսթրիմինգը ենթադրում է շահառուների և խնդիրների բացահայտման ու տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգային գործընթաց՝ գենդերային հարցերի ներառումը երաշխավորելու համար:
- Հաղորդակցական և քարոզչական ռազմավարությունները գենդերային մեյնսթրիմինգի կարևոր մասն են:
- Պետք է աշխատել շահառուների երկու տարբեր խմբերի հետ՝ կանանց՝ որպես շահառուների և կառավարության՝ որպես մատակարարողի:
- Յուրաքանչյուր խմբի համար պետք է մշակել տարբեր հաղարդակցական ռազմավարություններ:
- Պետք է գիտակցել շահառուների համար հիմնական լրատվամիջոցների, իսկ կառավարության համար՝ էլեկտրոնային հաղորդակցության կարևորությունը:

V. Կանանց ձեռներեցություններում ՏՀՏ ներդրման՝ «գենդերային հարցերի վերաբերյալ զգայուն» քաղաքականության և միջոցառումների ծրագրի ձևավորումը

Ուսուցման արդյունքները

Այս բաժինը կարդալուց հետո ընթերցողները պետք է կարողանան.

- Հասկանալ կանանց ձեռներեցություններում ՏՀՏ ներդրման քաղաքականության ուղղությունների և իրականացման շրջանակների միջև տարբերությունը
- Հասկանալ թվային ֆինանսական ներառումը և դրա դերը կանանց ձեռներեցությանն աջակցելու գործում
- Վերհանել այն խնդիրները, որոնք ի հայտ կգան ֆինանսական ներառման ՏՏ լուծումները մշակելուց և ներդնելուց հետո:
- Վերհանել այն քայլերը, որոնք իրենց երկրում քաղաքականություն մշակողները կարող են ձեռնարկել կանանց ձեռներեցության գոյություն ունեցող քաղաքականությունը գենդերային հարցերի վերաբերյալ զգայուն դարձնելու համար:

Այս մոդուլում շոշափվող հիմնական չորս թեմաներն են՝ Կառավարություն, Կանանց հնարավորությունների ընդլայնում, , Կանանց ձեռնարկատիրություն և ՏՀՏ: Այս բաժնի նպատակն է միավորել այս թեմանորը տրամաբանական և կոհերենտ եղանակով:

Գոյություն ունի արդյունավետ գենդերային քաղաքականության մշակման երեք առանձնահատուկ տարր.[69]

1. Իրավիճակային վերլուծություն: Վերլուծությունը ուսումնասիրում է շահառու խմբերի և հենց կազմակերպության հետ կապված գենդերային խնդիրները: Վերջինս ներառում է հետևյալի ուսումնասիրությունը. (ա) գենդերային հարցերի հետ կապված անձնակազմի գիտելիքներ, հմտություններ, պրակտիկա, (բ) գործոններ, որոնք ազդում են անձանակազմի անդամների՝ գենդերային հարցերի լուծմանը նիրվածության վրա և (գ) անձնակազմի վրա ազդող գենդերային խնդիրներ, ինչպիսիք են գենդերային տարբերություններն առաջխաղացման հնարավորությունների և աշխատավայրում բռնության տեսանկյունից:

[69] UNDP, "Resource Guide: Mainstreaming Gender in Water Management", Version 2.1, November 2006, p. 139. Available from http://www.undp.org/content/dam/aplaws/publication/en/publications/environment-energy/www-ee-library/watergovernance/resource-guide-mainstreaming-gender-in-water-management/IWRMGenderResourceGuide-English-200610. pdf

Կազմակերպությունում գենդերային հարցերի վերաբերյալ զգայունության բացակայության պայմաններում հնարավոր չի լինի արդյունավետ լուծում տալ գենդերային խնդիրները:

2. Քաղաքականություն: Այն պետք է բխի իրավիճակային վերլուծությունից և և պետք է պարունակի գենդերային հարցերի վերաբերյալ զգայուն պրակտիկայի տեսլական, ինչպես նաև այդ տեսլականի իրականացման տարբեր ուղիներ: Քաղաքականությունը հաճախ հանդես է գալիս պետական փաստաթղթի տեսքով:

3. Իրականացման ռազմավարություն կամ միջոցառումների ծրագիր: Սա իրավիճակային վերլուծության և քաղաքականության վրա հիմնված ներքին փաստաթուղթ է: Այն պետք է պարունակի մանրամասներ այն մասին, թե ինչպես է տվյալ քաղաքականությունի իրականացվելու որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Այն սովորաբար նկարագրում է ան միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն՝ նշելով դրանց իրականացման ժամանակամիջոցը, թիրախները, բյուջեն և մշտադիտարկման ու գնահատման չափանիշները:

Կառավարությունները քաղաքականություն մշակող և որոշում կայացնող մարմինների միջոցով մշակում են ծրագրեր բնակչության շահերը պաշտպանելու նպատակով: Այս ծրագրերը, եթե չկա հակառակի հստակ հրաման, հակված են անտեսել տարբեր խոցելի խմբերին մտահոգող առանցքային հարցերը: Առավել հաճախ անտեսվում են կանանց և աղջիկներին մտահոգող հարցերը:

Այս պատճառով անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ քայլեր կառավարության գործունեությունը գենդերային մեյնսթրիմինգի ենթարկելու համար: Այսպիսի քայլերը կարող են ընդգրկել.

- Հրամայել փոքր և միջին ձեռնարկությունների (փմձների) բոլոր ոլորտներին առնչվող իրավական ակտերի և քաղաքականությունների գենդերային աուդիտի ու վերլուծության իրականացում՝ մինչ քաղաքականության կամ ծրագրի մշակումը:
- Հավաքագրել սեռային հատկանիշով առանձնացված տվյալներ և մշակել գենդերային ռազմավարություն յուրաքանչյուր ոլորտի համար:
- Մշտական հիմունքներով իրականացնել «գենդերային զգայունության բարձրացման» ծրագրեր պետական պաշտոնյաների շրջանում: Ֆիլիպինների «Գենդերային հավասարակշռության և զարգացման ուղեցույցը»[70] բոլոր մակարդակի պետական պաշտոնյաների շրջանում «գենդերային զգայունության բարձրացման» օգտակար ձեռնարկ է:

[70] National Economic and Development Authority, Philippine Commission on Women, and Official Development Assistance Gender and Development Network, "Harmonized Gender and Development Guidelines for Project Development, Implementation, Monitoring and Evaluation", Second Edition, December 2010. Available from http://pcw.gov.ph/sites/default/files/documents/ resources/harmonized-gad-guidelines-2nd_ed_0.pdf.

- Ստեղծել գենդերային ֆոկալ ստորաբաժանումներ հանրային իշխանության բոլոր մակարդակներում և բոլոր մարմիններում:

Գործնական առաջադրանք

- Կարդացե՛ք ՄԱԶԾ-ի «Ուղեցույց: Գենդերային մեյնսթրիմինգը ջրային կառավարման ոլորտում» աշխատանքի 140-141-րդ էջերը: Այն հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.undp.org/:
- Օգտագործելով այնտեղ տրված ցուցումները՝ իրականացրեք ձեր սեփական կազմակերպության իրավիճակային վերլուծությունը (կամ գենդերային վերլուծությունը)՝ դրա գենդերազգայնության աստիճանը պարզելու համար:
- Ձեր կարծիքով ի՞նչ է պետք անել այն ավելի գենդերազգայուն դարձնելու համար:

5.1 Կառավարության դերը: Հնարավորություններն ընդլայնող օրենսդրություն և իրավական շրջանակ

Կանանց հանարավորությունների ընդլայնումը նշանակում է, որ հնարավորությունների հավասարությունը կանանց թույլ է տալիս կատարել իրենց, իրենց ընտանիքի և իրենց համայնքի համար լավագույն ընտրությունը: Այնուամենայնիվ այնտեղ, որտեղ գերակայող են իրավական գենդերային տարբերությունները, հատկապես երբ դրանք շարունակում են գործել տնտեսական հնարավորությունների ոլորտում, անհավասարությունն ունենում է հեռահար հետևանքներ: Համաշխարհային բանկի «Կանայք, բիզնեսը և իրավունքը 2016» զեկույցում նշվում են առնվազն 21 ոլորտներ որտեղ առկա են իրավական տարբերություններ միևնույն ամուսնական կարգավիճակն ունեցող կանանց և տղամարդկանց միջև (տե՛ս, Նկար 4):

Նկար 4. Իրավական տարբերություններն ամուսնացած և չամուսնացած կանանց միջև

Կանայք, Բիզնեսը և իրավունքը աշխատանքն ուսումնասիրում է տարբերությունները համեմատելով նույն ամուսնական կարգավիճակն ունեցող կանանց և տղամարդկանց հետևյալ 21 ոլորտներում

1. Դիմում անձնագիր ստանալու համար
2. Տանից դուրս ճանապարհորդություն
3. Երկրից դուրս ճանապարհորդություն
4. Առանց թույլտվության աշխատանքի ընդունվել կամ մասնագիտության ձեռք բերել
5. Պայմանագրի ստորագրում
6. Ձեռնարկատիրության գրանցում
7. «Տնային տնտեսության» կամ ընտանիքի ղեկավար լինելը
8. Սեփական երեխաներին քաղաքացիության փոխանցում
9. Բանկային հաշվի բացում
10. Բնակության վայրի ընտրություն
11. Նույնականացման քարտի ձեռքբերում
12. Սեփականության նկատմամբ իրավունքների տիրապետում
13. Սեփականության նկատմամբ ժառանգական իրավունքների տիրապետում
14. Միևնույն գիշերաժամյա աշխատանք
15. Միևնույն աշխատանքի իրականացում
16. Թոշակի անցնելու օրենքով սահմանված միևնույն տարիք ունենալը
17. Հարկային նվազեցման միևնույն պայմաններ
18. Դատարանում տված վկայության միևնույն կշիռ
19. ասահմանադրությունում սեռական խորականության դեմ ուղեված կամ գենդերին առնչվող հոդվածի առկայություն
20. Սովորութային իրավունքի կիրառում, եթե դա հակասում է սահմանադրությանը
21. Անձնական իրավունքի կիրառում, եթե դա հակասում է Սահմանադրությանը

Հավաքագրված տվյալները ներառում են նաև հինգ այլ ոլորտներ, որոնք վերաբերում են միայն ամուսնացած կանանց

22. Իրենց ամուսիններին ենթարկվելու իրավական պարտավորություն
23. Քաղաքացի չպանդիսացող ամուսնուն քաղաքացիության փոխանցում
24. Ամուսնական սեփականության տնօրինում
25. Ամուսնական սեփականություն ունեցած ոչ դրաման ներդրման իրավական ճանաչում
26. Իրենց մահացած ամուսինների սեփականությունը ժառանգելու իրավունքի առկայություն

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, «Կանայք, բիզնեսը և իրավունքը 2016: Ճանապարհ դեպի հավասարություն», Վաշինգտոն, 2015թ, էջ 3, հասանելի է հետևյալ հղումով՝ http://wbl.worldbank.org/~/media/WBG/WBL/Documents/Reports/2016/WBL2016-Key-Findings.pdf

Գենդերային հավասարությունը խթանող օրենքներ ունենալը դեռ բավարար չէ: Այդ օրենքները գործնական ազդեցություն չեն ունենա, եթե օրենքների այդ մշակման, կիրարկման, իրականացման մակարդակը կամ կարողությունները ցածր լինեն: Հետևաբար, թղթի վրա գրված օրենքները կանանց կյանքում որևէ էական փոփոխություն չեն մտցնում և չեն արտացոլում գոյություն ունեցող իրական իրավական վիճակը:

Պարտադիր չէ նոր օրենքներ մշակել կանանց խնդիրները լուծելու համար, չնայած որ դա իդեալական լուծում կլիներ: Վճռական նշանակություն ունի գենդերային մեյնսթրիմինգի իրականացումն ընթացիկ քաղաքականություն մշակելու գործընթացում, հանրային գործառույթների իրականացման բոլոր ոլորտներում (ինչպես որ դա արվել է Կամբոջայում, տե՛ս, դեպքի ուսումնասիրություն 8): Սա իրականացվում է որոշում կայացնող բոլոր մարմիններում, շահառուների և օրենսդրական խմբերում, ինչպես նաև պլանավորման և իրականացման թիմերում կանանց համարժեք ներկայացվածությունը և մասնակցությունն ապահովելու համար (միջազգայնորեն ընդունված նվազագույն շեմը 30 տոկոսն է):

Գենդերային աուդիտը և վերլուծությունը՝ որպես քաղաքականության մշակման և պլանավորման նախապայման, էական, և վերջնական ծրագիր գենդերային հարցերի ինտեգրման պարտադրումը վճռական նշանակություն ունեն հաջողության հասնելու համար:

Գենդերային մեյնսթրիմինգը կարող է իրականացվել որպես «կառավարման ողջ համակարգն ընդգրկող» գործընթաց և նախատեսի բյուջետային հատկացում գենդերային հավասարության հաստատմանն ուղղված աշխատանքների համար (օրինակ Ֆիլիպիններում, տե՛ս, դեպքի ուսումնասիրություն 10), կամ բոլոր ծախսերի որոշակի տոկոսը կարող է ուղղվել կանանց հնարավորությունների ընդլայնմանը (օրինակ Հնդկաստանում): Գենդերային մեյնսթրիմինգը կարող է իրականացվել նաև որպես աղքատության նվազեցմանն ուղղված հատուկ ծրագրի մաս (տե՛ս, դեպքի ուսումնասիրություն 13):

Դեպքի ուսումնասիրություն 13

Գենդերային մեյնսթրիմինգը ՄԳԳՎԶԵԱԱ-ում

Հնդկաստանում Մահաթմա Գանդիի գյուղական վայրերում զբաղվածության երաշխավորման ազգային ակտը (ՄԳԳՎԶԵԱԱ) մշակվել էր գյուղական տնտեսություններին աշխատանքով ապահովելու միջոցով գյուղական վայրերում աղքատության և խոցելիության բարձր մակարդակը հաղթահարելու համար: Միաժամանակ, ՄԳԳՎԶԵԱԱ-ն նպատակ ունի վերափոխել գյուղական համայնքները

գյուղատնտեսության ոլորտում արտադրողականությունը բարձրացնող ենթակառուցվածքների ստեղծման միջոցով:

ՄԳԳՎԶԵԱԱ-ն ներառում է որոշ դրույթներ, որոնք կոչված են վերացնելու այն խոչընդոտները, որոնց կանայք հանդիպում են գյուղատնտեսության ոլորտում: Այն խթանում է նրանց մասնակցությունն աշխատուժին հատուկ քվոտայով (առնվազն մեկ-երրորդ), տրամադրում է երեխաների համար նախատեսված տարածքներ և առավելություն է տալիս կանանց (հատկապես չամուսնացած) տանը մոտ աշխատելու տեսանկյունից: Այն սահմանում է, որ կանանց և տղամարդկանց պետք է տրվեն միևնույն աշխատավարձերը, ինչպես որ սահմանվում է 1976 թվականի հավասար վարձատրության մասին ակտով. Սա շատ կարևոր քայլ էր՝ հաշվի առնելով այդ ժամանակ գերակշռող աշխատավարձերի տարբերությունները:

Ուղենիշները սահմանում են, որ երբ բանկերը և տարածքային կառավարման մարմինները բանկային հաշիվներ են բացում, նրանք պետք է դիտարկեն անհատական և միասնական հաշիվների բացման հնարավորությունը, որպեսզի եկամուտը միայն տնային տնտեսության ղեկավար-տղամարդուն չհասնի: Ակտը սահմանում է, որ կանայք պետք է ներկայացված լինեն տեղական համայքներում, սոցիալական աուդիտի գործընթացում (մշտադիտարկման մեխանիզմ ՄԳԳՎԶԵԱԱ-ի իրականացման հաշվետվողականությունն ապահովելու համար) և մարզային ու համապետական հանձնաժողովներում: Սոցիալական աուդիտի ֆորումը, ըստ դրա, պետք է անցկացվի այնպիսի ժամանակահատվածում, որ կանայք և մարգինալացված համայնքները կարողանան մասնակցել: Սա կարևոր քայլ է գենդերազգայուն մոտեցման որդեգրման ուղղությամբ:

Աղբյուր՝ Ռեբեկա Հոլմս, Նիդհի Սադանա և Սասվաթի Ռաթ, «Փոփոխության հնարավորությո՞ւն: Մահաթմա Գանդիի գյուղական վայրերում զբաղվածության երաշխավորման ազգային ակտի գենդերային վերլուծություն», Արտասահմանյան զարգացման ինստիտուտի ծրագիր, բրիֆինգ համար 53, 2011 թվականի փետրվար: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.odi.org/sites/odi.org.uk/files/odi-assets/publications-opinion-files/6301.pdf:

Ուշադրություն դարձրեք, որ դեպքի ուսումնասիրություն 13-ում կին աշխատողը ծրագրի կենտրոնում է: Հավասարությունն ապահովվում է քվոտաների միջոցով, գործող օրենքները կիրառվում են գենդերային տեսանկյունից ավելի հավասար և արդար:

Կարելի է վիճել՝ նշելով, որ բոլոր երկրներն ունեն սահմանադրական դրույթներ և համապատասխան օրենսդրություն ու կանոններ, որ կարգավորում են տնտեսական, ներառյալ ձեռներեցության հետ կապված գործունեությունը: Նման օրենքների և կանոնների գոյությունը փաստ է: Այնուամենայնիվ, այդ ընդգրկուն օրենքներից և նորմերից շատերը գենդերային տեսանկյունից չեզոք են, այսինքն՝ նախատեսված են

բոլոր մարդկանց համար հաշվի չառնելով կանանց և տղամարդկանց համար առկա առանձնահատուկ պայմանները և համատեքստը:

ESCAP-ի կողմից իրականացված ուսումնասիրությունը՝ ուղղված ձեռներեցության քաղաքականության՝ գենդերային հարցերի տեսանկյունից ուսումնասիրությանը ցույց տվեց, որ.

- Գենդերային հարցերը հաշվի առնող քաղաքականություններն ու ծրագրերը մեկուսացված են և առնչվում են առանձին դեպքերի,
- Պետական մարմինների աշխատանքի ոչ բավարար համակարգվածությունը խոչընդոտում է գենդերային կարիքների գնահատման ամբողջական ինտեգրումը ՓՄՁ քաղաքականության մշակման գործընթաց,
- Քաղաքական ծրագրերը կիրառվում են անհետևողականորեն, հատկապես վառ դրսևորվելով տեղային մակարդակում,
- Գրանցման և լիցենզավորման անհետևողական, խրթին և դժվարամատչելի գործընթացները խոչընդոտում են կանանց ձեռներեցության զարգացումը:
- Գիտելիքի պակասը և պետական կարգավորումների վերաբերյալ պաշտոնական ուղենիշների դժվարամատչելի բացասական ազդեցություն են ունենում կին ձեռներեցների վրա:[71]

Այլ կերպ ասած՝ գոյություն ունեցող օրենքներից շատերը և հիմնական պրակտիկան «գենդերային տեսանկյունից կույր» են և հարմարեցված չեն կանանց հատուկ նպատակներին: Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Կենտրոնական Ասիայում իրականացված մեկ այլ ուսումնասիրություն հաստատում է վերոնշյալը:[72]

ԱԶԲ-ի «Գենդերային գործիքակազմ: Միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրությունների ֆինանսավորումը և զարգացումը»[73] աշխատանքի ամփոփման մեջ թվարկվում են մտահոգության առարկա հանդիսացող մի շարք ոլորտներ և առաջարկվում են հնարավոր քայլեր այդ խնդիրները լուծելու համար: Մտահոգության տեղիք տվող ոլորտներից են՝ հնարավորություններն ընդլայնող օրենքներ և իրավական շրջանակ, ֆինանսներ, բիզնես կարողությունների զարգացում, բիզնեսի զարգացմանն աջակցող ծառայություններ, արժեքների

[71] ESCAP, Enabling Entrepreneurship for Women's Economic Empowerment in Asia and the Pacific (Bangkok, no date). Available from http://www.unescap.org/sites/default/files/Enabling%20women's%20entrepreneurship.pdf.
[72] ADB, Information and Communication Technologies for Women Entrepreneurs: Prospects and Potential in Azerbaijan, Kazakhstan, the Kyrgyz Republic, and Uzbekistan (Mandaluyong City, 2014). Available from http://www.adb.org/sites/default/files/publication/42869/ict-women-entrepreneurs.pdf.
[73] ADB, Gender Tool Kit: Micro, Small, and Medium-Sized Enterprise Finance and Development (Mandaluyong City, 2014). Available from http://www.adb.org/documents/gender-tool-kit-micro-small-and-medium-sized-enterprise-finance-anddevelopment.

ձևավորումն ու զարգացումը և ծառայություն մատուցողների շրջանում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Ծառայություն մատուցողները՝ ներառյալ կառավարությունը, մասնավոր ոլորտը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, կարևորն դեր ունեն խաղալու կանանց տնտեսական իրավունքների ընդլայնման և in creating a level playing field for economic empowerment գործում: Դրանցից յուրաքանչյուրը Պատկեր 5-ում նկարագրված կանանց ձեռներեցության էկոհամակարգի էական մասն է կազմում:

Պատկեր 5 Ձեռներեցության էկոհամակարգը



Աղբյուր՝ UN-APCICT/ESCAP, Կանայք և ՏՀՏ, Կին ձեռներեցների բաժին, մոդուլ W1 Բիզնես պայմանավորում ՏՀՏ միջոցով (Ինչեոն, 2016թ.). Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://e-learning.unapcict.org/wifiinfobank/data/Module_W1.pdf

Հենց սկզբից պետք է նշել, որ հիմնահարցերը սերտորեն փոխկապակցված են, չնայած որ հաջորդող քննարկումը բաժանված է մի քանի կատեգորիաների: Գենդերազգայուն քաղաքականության մշակման և իրականացման ցանկացած փորձ պետք է հաշվի առնի տարաբնույթ ոլորտների միջև գոյություն ունեցող սերտ կապերը:

Իրականացման արդյունավետ մեխանիզմները ունեն վճռական նշանակություն, և հենց այստեղ է կարևորվում ՏՀՏ դերը: ՏՀՏ-ն ընդլայնում են հնարավորությունները. դրանց այդ կարողությունը հիմնված է մի քանի բացառիկ բնութագրերի վրա՝ արագություն, հասանելիություն, կառուցվածքի և կիրառության ճկունություն: Պետության համար հանրային կառավարման ոլորտում ՏՀՏ կիրառումը ստեղծում է հնարավորություն անցում կատարել էլ-կառավարումից «խելացի կառավարման» (այնպիսի կառավարում, որը «հասկանում է» քաղաքացիների բարձրաձայնած/չբարձրաձայնած կարիքները), մշակել լուծումներ այդ կարիքները բավարարելու համար և արդյունավետ կիրառել այդ լուծումները:[74] ՏՀՏ արդյունավետ կիրառումը տալիս է նաև գենդերազգայուն կառավարման համակարգ ստեղծելու հնարավորություն:

ՏՀՏ-ն կարող է օգտագործվել կանանց հնարավորությունների ընդլայնման և կանանց ձեռներեցության խթանման համար մի շարք ճանապարհներով: ESCAP-ի «Էլ կառավարումը հանուն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում[75] կանանց հնարավորությունների ընդլայնման» աշխատանքում 12 գործերի վերլուծության հիման վրա նշվում է.

> Գենդերային հարցերի լուծմանն ուղղված էլ-կառավարման միջամտությունները հանգեցնում են գենդերային հավասարությանը նպաստող բազմաթիվ դրական արդյունքների: Դրանք բարձրացնում են կանանց ինքնագնահատականը, հնարավորություն են տալիս նրանց մարտահրավեր ներտել ավանդական նորմերին և հաստատել գործընկերային հարաբերություններ, բարձրացնում են աշխատանքային շուկա մտնելու ունակության նրանց վստահությունը, կանանց կարևոր տեղեկատվություն են տալիս իրենց իրավունքների մասին և նրանց համար հասանելի է դարձնում փոխհատուցման մեխանիզմները: Դրանք նաև ձևափոխում են հանրային ինստիտուտները՝ դրանք դարձնելով տեխնիկապես և քաղաքականապես ավելի ունակ մատուցելու գենդերային հարցերն ընդգրկող ծառայություններ[76]:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է նաև, որ.

- Գենդերային հարցերը լուծելու էլ-կառավարման կարողությունը կախված է արդյունավետ նորմերի և կանոնների առկայությունից, սակայն էլ-կառավարման

[74] Arti Gupta, “Smart government means going beyond mobile”, 20 January 2014. Available from http://www.slideshare.net/ leadonco/smart-government-means-going-beyond-mobile.
[75] ESCAP, “E-Government for Women’s Empowerment in Asia and the Pacific”, May 2016. Available from http://egov4women. unescapsdd.org/.
[76] Ibid.

համակարգում գենդերի ինստիտուցիոնալացումը ենթադրում է նաև ավելի մեծ փոփոխություններ հանրային ինստիտուտների գործունեության մշակույթում և մարդկային ռեսուրսների կարողություններում:

- Երբ առկա են գենդերային մեյնսթրմինգին առնչվող օրենքներ և քաղաքականություններ ու գենդերային բյուջետավորման կանոններ, գենդերի ինստիտուցիոնալացումը էլ-կառավարման համակարգ ավելի արդյունավետ է:
- Լավ մշակված էլ-կառավարման ռազմավարությունները ոչ միայն լուծում են զարգացման հետ կապված ծառայություններում կանանց չնեչկայացվածության հարցերը, այլև կանանց զարգացման օրակարգի մշակմանը մասնակցելու հնարավորություն են տալիս: [77]

ՏՀՏ-ն աջակցում է քաղաքականության իրականացմանը հետևյալ ձևերով.

- Պետությունը կարող է օգտագործել առկա ցուցանիշները և տվյալների բազաները մակրո և միկրո մակարդակի տվյալներ հավաքագրելու և ընդհանրացնելու համար:
- Կառավարության ազատ հասանելի տվյալներն օգտագործելով և «սեռը» որպես տվյալների որոնման կարգավորում ներառելով՝ գոյություն ունեցող տվյալների բազաներից[78] կարելի է արագ դուրս բերել սեռային հատկանիշով առանձնացված տվյալներ:
- Կարելի է ստեղծել ազգային առցանց «գենդերային հանրույթ», որպեսզի գենդերային հարցերով փորձագետները, ՈԿԿ-ները և մյուս շահառուները կարողանան փոխանակել իրենց հայեցակետերը, լավագույն փորձը, առանձին գործերի ուսումնասիրությունների արդյունքները, գենդերային մեյնսթրիմինգի գործիքները, վերապատրաստման ձեռնարկները և այլն:[79]

Հետևաբար, որո՞նք են կանանց ձեռներեցությունը խթանելու համար բարենպաստ քաղաքական միջավայր ձևավորելու նպատակով ՏՀՏ-ն որպես գործիք կիրառելու հնարավոր ձևերը:

Հետագա բաժինները բացահայտում են մտահոգության առարկա հանդիսացող ոլորտները և որոշակի գենդերային հիմնահարցեր, ինչպես նաև դրանց հնարավոր լուծումները և ՏՀՏ դերը այդ լուծումները գտնելու գործում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց ձեռներեցությանը:

---

[77] Ibid.

[78] Data mining is the practice of examining large pre-existing databases in order to generate new information

[79] See United Nations in India, “UN Solution Exchange”. Available from http://in.one.un.org/page/un-solution-exchange.

5.2 Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին առնչվող քաղաքականությունները, օրենքները և կարգավորումները

Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին (ՄՓՄՁ) առնչվող քաղաքականությունների, օրենքների և կարգավորումների գենդերային աուդիտն ամենայն հավանականությամբ ցույց կտա, որ դրանք կամ «գենդերային տեսանկյունից կույր» կամ «գենդերային տեսանկյունից չեզոք» են, կամ որ գոյություն ունեցող պրակտիկան ոչ միտումնավոր կերպով խտրականություն են դրսևորում կին ձեռներեցների նկատմամբ: Դա կարող են առնչվել լիցենզավորմանը, աշխատանքային ժամերին կամ ՝ աշխատանքային օրենսգրքի՝ վարձատրության կարգը սահմանող դրույթներին և այլն:

Նման պրակտիկան շտկելու քայլերից կարող են լինել.

- Վերանայել նման քաղաքականությունները և օրենքները՝ խոչընդոտները և անհավասարությունները վերացնելու համար:
- Պարզեցնել և ավելի արդյունավետ դարձնել գրանցման, լիցենզավորման, գործարկման և հարկերի վճարման ընթացակարգերը, որպեսզի կին ձեռներեցները խնայել ժմանակը և կրճատեն ծախսերը ու խուսափեն պաշտոնյաների և գործակալների ոտնձգություններից: ՏՀՏ-ի վրա հիմնված պլատֆորմները և ծառայությունները կարող են նպաստել մեկ պատուհանի սկզբունքով գործող կայքէջի վրա հիմնված պորտալի կամ էլեկտրոնային լուծումների (օրինակ՝ բբջային հեռախոսների համար նախատեսված ծրագրերի կամ հաղորդագրությունների) ստեղծման միջոցով: Լավագույն դեպքում պորտալը կամ էլեկտրոնային լուծումը պետք է լինեն տեղի լեզվով և օգտագործվեն հեշտ, հստակ ցուցումների և պատկերների վրա հիմնված հրամանների միջոցով:
- Բարձրացնել իրավական գրագիտությունը՝ կանանց իրենց բջջային հեռախոսների և առցանց պորտալի, ինչպես նաև ավանդական լրատվամիջոցների (օրինակ՝ ռադիո և հեռուստատեսություն) միջոցով կարճ գովազդների տեսքով տարբեր օրենքների մասին արագ և անհրաժեշտ տեղեկատվություն տալու եղանակով:

5.3 Թվային ֆինանսական ներառում

Բարենպաստ միջավայր ստեղծելուն ուղղված քաղաքական քայլերը պետք է լինեն տվյալ պետությանը և համատեքստին համապատասխան: Պետությունը պետք է ձեռնարկի մի շարք միջոցներ կանանց հանդիպող ֆինանսական խնդիրները լուծելու համար, հատկապես հասանելիության և գենդերային տարբերությունների հետ կապված խնդիրները: Բացի դրանից, պետությունը պետք է ստեղծի բարենպաստ քաղաքական միջավայր՝ ֆինանսական ներառման հստակ նպատակներով և

քանակական թիրախներով: Օրինակ, Պապուա Նոր Գվինեան հանձնարարել է, որ նոր բանկային հաշիվների կեսը պատկանեն կանանց: [80]

Դեպքի ուսումնասիրություն 14

Պապուա Նոր Գվինեայի համազգային միկրոբանկը թիրախավորում է կանանց

Պապուա Նոր Գվինեայի համազգային միկրոբանկը մեկնարկեց «Մայքեշ» (MiCash) ծրագիրը՝ հստակ նպատակ ունենալով բանկային հաշիվ բացել այդպիսին չունեցողների համար: Մայքեշը սկզբում ներկայացվում էր որպես խնայողությունների համար նախատեսված պրոդուկտ, բայց ներառում էր նաև շարժական գումարի ծառայություն: Ծրագրի մեկնարկի մի քանի ամիսների ընթացքում պահանջարկը համեմատաբար բարձր էր. 2012 թվականի հունիսին Մայքեշի հաճախորդների 70 տոկոսը նախկինում երբեք չէին օգտվել Համազգային միկրոբանկի ծառայություններից: 2014 թվականի հոկտեմբերի դրությամբ Մայքեշի հաճախորդների 38 տոկոսը կանայք էին, և այն օգտագործում էին առաջին հերթին խնայողությունների համար: Կին հաճախորդների թիվը մեծացնելու նպատակով Համազգային միկրոբանկը մեկնարկեց ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված, միայն կանանց համար նախատեսված, երես-առ-երես իրականացվող լայնածավալ ծրագիր, որը հասանելի էր նույնիսկ գյուղերում և պլանտացիաներում ապրող կանանց:

Աղբյուր՝ GSMA, Իրավիճակը արդյունաբերությունում 2014 թվականին: Շարժական ֆինանսական ծառայություններ բանկերում հաշիվ չունեցողների համար (2014թ.): Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.gsma.com/mobilefordevelopment/wp-content/uploads/2015/03/SOTIR_2014.pdf:

Որպես քաղաքական այլընտրանք՝ պետությունները կարող են.

- Ձեռնարկել անհրաժեշտ կարգավորիչ քայլեր թվային ֆինանսական ներառումը հնարավոր դարձնելու համար, օրինակ՝ ներդնել թվային ստորագրությունների համակարգ,
- Բարեփոխել իրավական և կարգավորիչ շրջանակները, օրինակ՝ պարզեցնել «ճանաչի՛ր քո հաճախորդին» (ՃՔՀ) գործընթացը,[81]
- Բարձրացնել իրազեկության մակարդակը կանանց շրջանում ֆինանսական գրագիտության ծրագրերի կազմակերպման միջոցով:

[80] Alliance for Financial Inclusion, Policy Frameworks to Support Women's Financial Inclusion (2016). Available from http:// www.afi-global.org/publications/2325/Policy-Frameworks-to-Support-Women-s-Financial-Inclusion.

[81] KYC is the process of a business verifying the identity of its clients. The term is also used to refer to the bank regulation which governs these activities. KYC policies are becoming much more important globally to prevent identity theft, financial fraud, money laundering and terrorist financing. Wikipedia, "Know your customer". Available from https://en.wikipedia.org/wiki/Know_your_customer.

Վերոնշյալ երեք տարբերակների իրականացման գործում էլ իր հստակ դերն ունի նորարական ՏՀՏ-ն:

5.3.1 Կառավարության կատարած և կառավարությանն արված վճարումների թվայնացումը

Քաղաքացիներին առցանց կամ իրենց բջջային հեռախոսների միջոցով պետական վճարումներ կատարել թույլ տալը հանգեցնում է ժամանակի և ծախսերի խնայողությանը: Այն պետությանն օգնում է նաև բացահայտել և թիրախավորել ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները՝ հարկային հայտարարագրերի, վարկերի և այլ ուղղակի դրամական փոխանցումների ու նպաստների համար:

Պետական մարմինների կողմից անհատներին և փոքր բիզնեսներին կատարված վճարումների (օրինակ՝ աշխատողներին կատարված վճարումները, սոցիալական նպաստների փոխանցումը և հումանիտար օգնությունը) թվայնացումը նույնպես հանգեցնում է ժամանակի և ծախսերի խնայողության: Ավելին, այն կարող է նվազեցնել կորուստները: Այն ունի նաև բնակչության մի լայն հատվածի թվային ֆինանսական համակարգին ծանոթացնելու ներուժ:

Չինական կառավարությունը ներկայումս շահառուներին սուբսիդիաներ է տրամադրում բանկային հաշիվների միջոցով: Նրանք կարող են այցելել 900 000 բանկային գործակալություններից մեկը, ինչպես օրինակ մանրածախ առևտրի տաղավարներ, վաճառքի էլեկտրոնային կետերի միջոցով իրեն գումարը ստանալու համար:

5.3.2 Մեծացնել ֆինանսական ծառայությունների հասանելիությունը կանանց համար

Թվային նույնականացման հասանելիության խթանումը կարող է նպաստել կանանց ֆինանսական ներառմանը, քանի որ տղամարդկանց համեմատ կանանց՝ հաշվի բացման համար անհրաժեշտ ֆորմալ նույնականացում ունենալը պակաս հավանական է:

Պակիստանում կառավարությունը ներդրեց կենսաչափական նույնականացման համակարգ (օրինակ, մատնահետքերի գրանցում և ծիածանաթաղանթի սկանավորում), որը կարող է օգտագործվել բանկային հաշիվ բացելու համար, ինչպես նաև մտցրեց բազմամակարդակ ՃՔՀ համակարգ, որտեղ փոքր գործարքներով և

հաշվեկշռով հաշիվների համար պահանջվում է ներկայացնել ավելի քիչ փաստաթղթեր:[82]

Բանգակդեշում Բանգլադեշի բանկը պարզեցրել է ՃՔՀ-ն շարժական բանկային հաշիվների համար[83], իսկ Պապուա Նոր Գվինեայում Համազգային միկրոբանկն ընդունում է գյուղապետերի նամակները որպես Մայքեշ շարժական դրամական հաշիվ բացելու համար անհրաժեշտ նույնականացման փաստաթուղթ: [84]
Վարկային շուկաներում, հատկապես ոչ պաշտոնական ձեռնարկությունների և ցածր եկամուտ ունեցող վարկառուների դեպքում, վարկատուն սովորաբար սահմանափակ տեղեկատվություն ունի պոտենցիալ վարկառուի՝ վարկը վերադարձնելու կարողության մասին, ինչը հանգեցնում է վարկավորման գործընթացի խափանմանը: Թվային տեխնոլոգիաները կարող են օգնել հաշվարկել կրեդիտային միավորները թվային տեխնոլոգիաների միջոցով:

Ալիֆայնենսը՝ չինական Ալիբաբա էլ-առևտրի ֆիրմայի դուստր ձեռնարկությունը, ծառայություններ մատուցողներին վարկեր է տրամադրում իր էլ-առևտրի պլատֆորմի միջոցով: Ալիֆայնենսի կրեդիտային միավորների հաշվարկման մոդելը հիմնվում է ծառայություն մատուցողի առնվազն երեքամսյա առցանց գործունեության վրա և վարկերի տրամադրման մասին որոշումները կայացնում է ավտոմատացված ձևով և գրեթե ակնթարթորեն:[85]

ՃՔՀ պարզեցված գործընթացը, որը կարող է հեշտացնել SIM քարտի գրանցումը և բջջային հեռախոսի ձեռքբերումը կանանց համար, նույնպես շատ օգտակար կլինի՝ հաշվի առնելով տարաբնույթ նորարական շարժական ֆինանսական ծառայությունների արագ աճը:

Օրինակ, թվային կուտակումների ծառայությունները միավորվում են ապահովագրությանը և վարկերին՝ կին հաճախորդներին խթանելով խնայողություններ անել ավտոմատ կերպով հաշվեկշիռը պահելով ավելի վարձր տոկոսադրույք ունեցող ֆիքսված դեպոզիտներում և այնուհետև, երբ հաշվեկշիռը ցածր է, այն հետ տեղափոխելով: Տոկոսները հաշվվում են արդյունավետ ֆիքսված ժամկետի չափով: [86]

---

[82] Women's World Banking, "Digital Savings: The Key to Women's Financial Inclusion?" 2015. Available from https://www. womensworldbanking.org/wp-content/uploads/2015/08/Digital-Savings-The-Key-to-Women%E2%80%99s-FinancialInclusion_WomensWorldBanking.pdf.
[83] Alliance for Financial Inclusion, Policy Frameworks to Support Women's Financial Inclusion (2016). Available from http:// www.afi-global.org/publications/2325/Policy-Frameworks-to-Support-Women-s-Financial-Inclusion.
[84] Mobile banking is the use of a mobile device to conduct banking services such as deposits, withdrawals, account transfer and balance inquiry. Mobile money is a service to perform and receive payment using a mobile device.
[85]. 92 World Bank, World Development Report 2016: Digital Dividend (Washington D.C., 2016
[86] ICICI Bank, "Presenting the new Advantage Woman Savings Account". Available from http://www.icicibank.com/PersonalBanking/account-deposit/advantage-woman-savings-account/index.page.

5.3.3 Մեծացնել իրազեկությունը և վստահություն ներշնչել

Հաշվի առնելով, որ ավանդական լրատվամիջոցները՝ ռադիոն և հեռուստատեսությունը ունեն մեծ տարածում, լսարան և վստահություն, դրանք կարող են օգտագործվել որպես հանրային իրազեկմանն արդյունավետ գործիք, հատկապես այն վայրերում, որտեղ առկա են կապի և ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ:

Կանանց շրջանում վստահության ձևավորում «արտաբորսութային» գործարքների միջոցով: Համայնքային աշխատողների կողմից կանանց շրջանում թվային ծառայությունների նկատմամբ վստահության ձևավորմանը և դրանց արժևորմանը նպաստելը նունպես վճռական նշանակություն ունի կանանց շրջանում թվային ֆինանսական ծառայությունների տարածման համար: Որպես օրինակ կարող են ծառայել Ինֆոկանայք Բանգլադեշում (դեպքի ուսումնասիրություն 4) և Ֆիլիպինների Համայնքային էլ-կենտրոնների գիտական աշխատողները:

5.3.4 Քրաուդֆանդինգ

Քրաուդգանդինգը բաղկացած է այնպիսի ֆինանսական ծառայություններից, որոնք շրջանցում են ավանդական ֆինանսական միջնորդներին՝ օգտագործելով մեծ թվով անհատներից կամ կազմակերպություններից ձեռք բերված փոքր չափերի գումարները որևէ ծրագիր, բիզնես կամ անձնական կարիք ֆինանսավորելու համար, և որոնք իրականացվում են հիմնականում առցանց ցանցահեն և շարժական պլատֆորմների միջոցով:

Քրաուդֆանդինգն ունի ձեռներեցությունը խթանելու ներուժ՝ մեծացնելով այն ներդրողների թիվը, որոնցից կարելի գումար ստանալ առանց սեփականատերերի և ձեռնարկատեր (վենչուրային) կապիտալիստների ավանդական շրջանի միջոցով անցնելու: Քրաուդֆանդինգը կառավարելու համար անհրաժեշտ են որոշակի կարգավորիչ նորմեր: Հաշվի առնելով, որ Չինաստանում այժմ առկա է մոտ 10 000 քրաուդֆանդինգային հարթակ, Չինաստանի Բանկային գործունեության կարգավորման հանձնաժողովը սկսել է քրաուդֆանդինգը կարգավորող նորմերի շրջանակի ձևավորման գործընթաց: [87]

Ստորև ներկայացված երկու օրինակները նկարագրում են ավանդական սոցիալական ցանցերով ֆինանսավորումը և SS միջոցով իրաիկանացվող քրաուդֆանդինգը:

[87] Alliance for Financial Inclusion, Policy Frameworks to Support Women's Financial Inclusion (2016), p. 12. Available from http://www.afi-global.org/publications/2325/Policy-Frameworks-to-Support-Women-s-Financial-Inclusion

Դեպքի ուսումնասիրություն 15

Ռոտացիոն խնայողությունների և վարկային միավորումը

Ռոտացիոն խնայողությունների և վարկային միավորումը (ՌԽՎՄ) անհատների խումբ է, որոնք համաձայնում են հանդիպել որոշակի ժամանակահատվածի ընթացքում՝ համատեղ խնայելու և փոխառություն վերցնելու համար, այսինքն՝ այն համատեղ վարկառության և վարկատվության ձև է: Այս ոչ պաշտոնական խմբի յուրաքանչյուր անդամ համաձայնում է ամսվա որոշակի օր որոշակի գումար դնել ընդհանուր դրամարկղ, իսկ անդամներից մեկը կարողանում է միանգամից վերցնել այդ գումարը: Արդյունքում ՌԽՎՄ-ի գոյության ընթացքում յուրաքանչյուր անդամ հնարավորություն է ունենում ստանալ բավական մեծ գումար և օգտագործել այն ըստ սեփական հայեցողության: Խմբի անդամներից մեկը դառնում է «հիմնադրամի» կառավարիչ:

Մանկական ֆոնդը կամ, ինչպես հաճախ այն անվանում են, «կատուների երեկույթը», Հարավային Ասիայի կանանց շրջանում տարածված խնայողությունների ոչ պաշտոնական խումբ է: Այն կարող է կազմակերպվել խաղադրույթների կամ աուկցիոնի տեսքով, որտեղ անդամները նշում են (նվազման կարգով) այն գումարը, որ իրենք ցանկանում են վերցնել ընդհանուր ֆոնդից՝ որոշելու համար, թե ում է հասնելու գումարն այդ ամիս:

Քանի որ ցանկացած գործարք յուրաքանչյուր ամիս տեսանելի է յուրաքանչյուր անդամի համար և խմբի մոտ որևէ գումար չի պահվում, համակարգը մեծ հաշվով պարզ և թափանցիկ է, հետևաբար՝ շատ տարածված և շրջանցում է ֆորմալ ինստիտուցիոնալ ֆինանսական համակարգերը:

Վերջերս Արևելյան Աֆրիկայի «Հարամբի» կամ «Չանգա» կոչվող ոչ պաշտոնական սոցիալական ֆինանսավորման պրակտիկան թվայնացվել է Քենիայում, Թ-Չանգայի կողմից: Թ-Չանգայի սեփականատիրական տեխնոլոգիան ցանկացածին հնարավորություն է տալիս արագ և մատչելի կառավարել դրամահավաքը՝ վերականգնելով համայնքային դրամահավաքի ուժը՝ անկախ ընկերների և ընտանիքի անդամների միջև գոյություն ունեցող աշխարհագրական

տարածությունից: Թ-Չանգայի 10 000 հաճախորդներ հավաքել են 100 000 ԱՄՆ դոլար 65 000 հաճախորդների գործարքների միջոցով՝ Սաֆարիքոմի M-PESA, «Էյրթել մանի» և «Փեյփալ» համակարգերով:

Աղբյուր՝ Թ-Չանգա: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://changa.co.ke:

Դեպքի ուսումնասիրություն 16
Քրաուդֆանդինգը Kiva.org-ի միջոցով

Kiva.org-ը 2005 թվականին հիմնադրված միջազգային շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն աջակցում է աղքատության հաղթահարմանն ուղղված զագացման ծրագրերի համատեղ ֆինանսավորմանը և քրաուդֆանդինգին: Kiva.org-ի միջոցով նույնիսկ 25 ԱՄՆ դոլարի չափով փախառություն տալով՝ յուրաքանչյուր ոք կարող է օգնել փոխառուին ստեղծել կամ զարգացնել բիզնես, գնալ դպրոց, ստանալ մաքուր էներգիա կամ իրացնել իր ներուժը:

Երբ փոխառուն Kiva.org-ի միջոցով դիմում է փոխառություն ստանալու համար, դիմումն անցնում է ստուգման և հաստատման գործընթաց միջով, որից հետո տեղադրվում է Kiva.org-ում: Անհատները կարող են որպես փոխառություն տալ առնվազն 25 ԱՄՆ դոլար:

Kiva.org-ի միջոցով ձեռք բերված փոխառություններն ունեն վճարման 97 տոկոսի պատմական ցուցանիշ:

Աղբյուր՝ Քիվա, *«Ինչպես է Քիվան աշխատում»:* Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.kiva.org/about/how:

5.4 Ենթակառուցվածքը և տեխնոլոգիան

Կանանց ձեռնարեցությունների համար ՏՀՏ-ն և տեխնոլոգիական ենթակառուցվածքները, ներառյալ «սմարթֆոնները» (ի հակադրություն սովորական հեռախոսների) պակաս հասանելի են:[88] Ներկայիս աշխարհում սրանք բիզնեսի զարգացման համար կենսական նշանակություն ունեցող գործիքներ են: Ինչպես նախկինում նշվել է, կանանց կողմից ՏՀՏ հասանելիության և օգտագործման խոչընդոտների թվից են.

- Գինը,

[88] A dumb phone is a basic mobile phone that lacks the advanced functionality characteristic of a smartphone. There are still six dumb phones for every smartphone in the world.

- Ցանցային ծածկույթը և ցանցի որակը,
- Անվտանգությունը և ոտնձգությունները,
- Օպերատոր-գործակալ վստահությունը,
- Տեխնիկական գրագիտությունը և վստահությունը:

Այս սահմանափակումները հաղթահարելու համար կառավարությունները պետք է ակտիվ կերպով.

- Զարգացնեն ՏՀՏ ենթակառուցվածքը և ծառայությունները, ինչպես նաև ավելի հասանելի դարձնեն տվյալ երկրի լեզվով աշխատող բջջային ծրագրերը,
- Կանանց տրամադրեն ժամանակը խնայող տեխնոլոգիական գործիքներ,
- Ենթակառուցվածքների զարգացումը համատեղեն կանանց ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերի հետ,
- Օգտագործել հին և նոր ՏՀՏ-ի համադրումը տեղեկատվության տարածման և իրազեկության բարձրացման համար,
- Մուտքի կետերում (օրինակ՝ հեռահաղորդակցության կետերում) և առցանց կիբեռանվտանգության ու գաղտնիության ապահովման մեխանիզմների ստեղծում՝ կիբեռճնշումների և անվտանգության ապահովման և կանանց ու ծառայություն ատուցողների վստահության պակասի հաղթահարման համար:

5.5 Կարողությունների և բիզնեսի զարգացման ծառայություններ

Ֆինանսական և տեխնոլոգիական գրագիտությունը և իրազեկությունը կանանց կողմից առկա հնարավորությունների և BDS-ի ոչ բավարար օգտագործման մատնանշվող պատճառներից են: Այլ պատճառներից են.

- BDS ծածկույթի բացակայությունը կամ ոչ բավարար զարգացվածությունը կանանց համար,
- Ոչ բավարար հասանելիությունը,
- Կին ձեռներեցների (ներկա և ապագա) թույլ իրազեկությունը ծառայությունների վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը գնում է մեծ թվով մարդկանց մասին, ՏՀՏ-ն կարող է օգտագործվել.

- Կին ձեռներեցների համար առցանց դասընթացների տրամադրման և վերապատրաստման անցկացման համար: Առցանց կարողությունների զարգացումը, այնուամենայնիվ, պետք է ամրապնդվի մուտքի կետերում արդյունավետ երես-առ-երես ուսուցումով:

- Առցանց կոմպետենտահեն հավաստագրման համակարգի ստեղծման համար: Օրինակ, սերմերի համար որակի ստուգում իրականացնող կանանց համար կարող է իրականացվել իրենց ներկա գիտելիքի և կարողությունների թեստավորում և դրա հիման վրա տրամադրել հավաստագիր, որը, իր հերթին, կօգնի նրանց գտնել ֆինանսավորում ֆինանսական ինստիտուտների կողմից:

5.6 Ծառայությունների հասանելիությունը և մարքեթինգը

Կանայք մշտապես նշել են ժամանակի և շարժունության հետ կապված սահմանափակումները որպես ծառայությունների հասանելիության և դրանցից օգտվելու խոչընդոտներ: Նրանք նշել են նաև՝

- Ֆինանսական գրագիտության և կրթության ցածր մակարդակը,
- Առկա տեղեկատվության հասանելիության պակասը:

Մատակարարների տեսանկյունից առկա է իգական և արական սեռի հաճախորդների միջև տարբերությունների ընկալման, ինչպես նաև միևնույն ծրագրի՝ կանանց և տղամարդկանց վրա ունեցած տարբեր ազդեցության մասին գիտելիքների պակաս: Այս ամենի արդյունքում տարբեր ծրագրեր չեն հասնում կին շահառուներին, իսկ հասնելու դեպքում էլ դրանք լինում է ոչ բավարար և ոչ ադեկվատ:

Կառավարությունները կարող են լուծել այս խնդիրները արդյունավետ քարոզչության և մարքեթինգի միջոցով.

- Կանանց համար հարմար ժամկետներում և վայրերում ՏՀՏ վերաբերյալ վերապատրաստման իրականացման,
- Տեղեկատվական արշավների կազմակերպման,
- Հաճախորդների կարիքների գենդերահեն գնահատման և դրան համապատասխան արտադրանքի մշակման միջոցով: Օրինակ, կարելի է օգտագործել ձայնային փոստը և ինտերակտիվ ձայնային պատասխանի ծառայությունը (ԻՁՊԾ) տեխնիկական գրագիտության խոչընդոտները հաղթահարելու համար:

Չնայած որ վերջին հաշվով ծառայությունների որակը կախված կլինի տեղական աջակցությունից և վերապատրաստումներից, մատակարարները կարող են.

- Օգտագործել կարճ հաղորդագրությունների ծառայությունը (SMS) թարմ տեղեկատվություն հաղորդելու համար,
- Օգտագործել առցանց և բջջային ծառայությունները քարոզչությանը և մարքեթինգին աջակցելու համար,

- Օգտագործել առցանց վերապատրաստումների և կարողությունների զարգացման ծրագրերը՝ ուսուցանվածն ամրապնդելով հարմար ժամկետներում և վայրերում կազմակերպվող անմիջական դասավանդումներով,
- Մշակել և մեկնարկել տեղեկացվածության և իրազեկության բարձրացմանն ուղղված արշավներ՝ օգտագործելով հիմնական լրատվամիջոցները:

Վերոնշյալ հիմնահարցերից շատերը բազմակողմ են և վերաբերում են միանգամից մի քանի ոլորտների: Նմանապես, ՏՀՏ կիրառման վերոնշյալ եղանակներից շատերը պիտանի են տարաբնույթ գործառույթների իրականացման համար: Կոնկրետ տարբերակի ընտրությունը կախված կլինի կոնկրետ, տեղային, տվյալ խնդրին առնչվող քաղաքականությունից կամ ծրագրից: Տարբերակներից ոչ մեկն ամբողջությամբ չի բավարարի տվյալ խնդրի լուծման համար, և յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակից և համատեքստից կախված կլինի այն թե ՏՀՏ կիրառման տարբերակների որ համադրությունն ավելի կհամապատասխանի առկա իրադրությանը:

Այս բաժինն անդրադարձավ կանանց ձեռներեցության խթանման նպատակով գենդերային մեյնսթրիմինգի իրականացման համար ՏՀՏ կիրառման՝ քաղաքականության մշակման հետ կապված հարցերին: Հաջորդ ենթաբաժինները կենտրոնանում են իրականացման ասպեկտների վրա:

5.7. Գենդերազգայուն էլ-կառավարում՝ հանուն կանանց ձեռներեցության

Էլ-կառավարումը քաղաքացիներին պետական ծառայությունների մատուցումն է էլեկտրոնական եղանակով: Սույն մոդուլում արդեն նշվել է, որ ՏՀՏ-ն գենդերային տեսանկյունից չեզոք չէ, քանի որ այն գործում է անհավասար սոցիալական և քաղաքական համակարգում: Դրանք կանանց և տղամարդկանց կողմից հավասար չեն գնահատվում, կառավարվում և ղեկավարվում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԾՋ) կողմից ներկայացված զեկույցում առանձնացվում է էլ-կառավարման հինգ առանցքային ոլորտ, որտեղ պետք է հաստատել գենդերային հավասարություն: Դրանք են.

1. Էլ կառավարման քաղաքականությունների և ռազմավարությունների մշակում,
2. Հիմնական էլ-ծառայությունների մատուցում,
3. Քաղաքացիների, հատկապես մարգինալացված խմբերի, կանանց և երիտասարդության էլ-մասնակցություն,
4. ՏՀՏ հասանելիություն,

5. Բաց տեղեկատվության հասանելիություն ՏՀՏ-ի միջոցով:[89]

Շատ դեպքերում պետություններն իսկապես պահում են տվյալներ այն մասին, թե ովքեր են օգտագործում էլ-կառավարական կոնկրետ լուծումները: Այնուամենայնիվ, չնայած նման տվյալների գոյությանը, հազվադեպ են իրականացվում օգտագործման գենդերային բնութագրերի բացահայտմանն ուղղված վերլուծություններ:

Հետևաբար, գենդերային քարտեզագրման և աուդիտի իրականացումը մուտքի, կիրառման և վերահսկողությանն առնչվող տարբեր բնորոշ գծերի բացահայտմանն ուղղված առաջին քայլն է: Հավաքագրված տվյալները պետք է արտացոլեն նաև բյուջեների և ռեսուրսների գենդերային բաշխումը: Սեռային հատկանիշով առանձնացված նման տվյալների հավաքագրումը կօգնի (1) հասկանալ արդյոք ՏՀՏ-ն նպաստել է էլ-ծառայությունների օգտագործման կանանց հնարավորությունները, (2) սահմանել, թե որտեղ, երբ և ինչպես են կանայք օգտվել նման ծառայություններից և թե կոնկրետ որ ծառայությունից են նրանք օգտվել, (3) վերհանել հնարավորությունների և հասանելիության ընդլայնման լավագույն եղանակները:

ՏՀՏ կիրառման երկու տասնամյակները ցույց են տվել, որ ՏՀՏ-ն կառվարության կողմից ետական ծառայությունների մատուցման կարևոր գործիքներ են: ՏՀՏ-ն կարող է օգտագործվել (1) ծառայությունների առավել արդյունավետ և հավասարակշիռ մատուցման, (2) համալիր պլանավորման գործընթացներին և միջոլորտային համակարգմանը նպաստելու, և (3) տեղեկատվության փոխանակման, քարոզչության և մշտադիտարկման հնարավորությունների ընդլայնման համար: Իրականացման հետ կապված խնդիրները խաթարել են զարգացող երկրներում առանցքային սոցիալական ոլորտներում ներդրված ջանքերը: Երբ ՏՀՏ-ն օգտագործվում են ինտեգրված մոտեցումները և ծախսարդյունավետ լայնածավալ լուծումների մշակումը խթանելու համար հավանական է, որ իրկանացման և օպերացիոնալ ընդհանուր ծասերն ավելւժի փոքր լինեն:

Լրացուցիչ էլ-ծառայությունների մշակումը պետք է լինի օրակարգում, սակայն կարևոր է հիշել, որ այս հարթակների մեծամասնությունը հաճախ մշակվում և իրականացվում են կանանց՝ որպես ստացողների համար՝ առանց այս լուծումների հայեցակարգային ձևակերպմանը, մշակմանը և զարգացմանը նրանց լրիվ մասնակցության՝ դրանով իսկ այս ծրագրերը նրանց համար պակաս հարմարավետ դարձնելով:

[89] UNDP, "Primers in Gender and Democratic Governance #4 – Gender Responsive E-governance: Exploring the Transformative Potential", 2008. Available from http://www.undp.org/content/dam/aplaws/publication/en/publications/womensempowerment/primers-in-gender-and-democratic-governance-4/f_GenderGovPr_eG_Web.pdf

Նոր էլ-ծառայությունների մշակումն անիմաստ կլինի, եթե դրանք միմյանց կապված չլինեն և չունենան օգտագործման պարզ ինթերֆեյսերին բնորոշ բոլոր հատկանիշները: Էլ-ծառայությունները պետք է նաև հասանելի լինեն տարբեր հարթակների միջոցով (առցանց հարթակներ, ծրագրեր և ԻՁՊԾ): Համատեղելիությունը հարթակների միջև և բարձ ու ցածր կապունակության պայմաններում ունի վճռական նշանակություն:

Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրներում էլ-կառավարման միջոցով կանանց հնարավորությունների ընդլայնմանը նվիրված ESCAP-ի ուսումնասիրությունը վեր է հանել գենդերազգայուն էկոհամակարգին բնորոշ հատկանիշների երեք խումբ.

1. Ծառայությունների մատուցում, որը բաղկացած է՝
   - Թվային գործընթացների և մարդկային միջամտության հավասարակշռումից,
   - Ծառայությունների մատուցման միջսահմանային կարգավորումների արդյունավետ կառավարումից,
   - Տվյալների հավաքագրման և կապունակության ոլորտներում կատարված նրդորումներից,
   - Տվյալների գենդերազգայուն կառավարումից, որը հավասարակշռում է թափանիցկությունը և գաղտնիությունը:
2. Քաղաքացիների ընկալունակություն, որը բաղկացած է՝
   - Կանանց ներգրավվածությունը պետական կառույցներ և ընտրության հնարավորությունն ընդլայնող տեխնոլոգիաների մշակում,
   - Թվային ծառայությունների մատուցման նկատմամբ անանց վստահության և դրանց արժևորման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
   - Կանանց իրավուքները պաշտպանող կառույցների առաջնորդում՝ գենդերային հարցերի նկատմամբ աչալուրջ էլ-կառավարման զարգացման համար:
3. Կապունակություն
   - Կանանց առցանց մասնակցությունը խթանող մոդելների ձևավորում,
   - Բոլոր կանանց համար ՏՀՏ-ից օգտվելու ապահով վայրերի և սուբսիդացված մուտքի ապահովում[90]:

Ամփոփելով կարելի է նշել, որ ՏՀՏ ներդրումը գենդերազգայուն կառավարման ձևավորման գործում կարող է շատ մեծ լինել, պայմանով, որ գենդերային հարցերը մեյնսթիմինգի ենթարկվեն ՏՀՏ քաղաքականության մեջ՝ հատկապես հասանելիության, ծառայությունների որակի հետ կապված, ինչպես նաև կանանց առնչվող իրավական, սոցիալական և քաղաքական խնդիրները լուծելու միջոցով:

[90] ESCAP, "E-Government for Women's Empowerment in Asia and the Pacific", May 2016. Available from http://egov4women. unescapsdd.org/

5.8 Իրականացում

Որևէ քաղաքականության, ծրագրի կամ նախագծի հաջող իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ՏՀՏ-ների օգտագործման խոչընդոտների և խթանիչների՝ սեռերի հիման վրա տարանջատված մանրակրկիտ բազա: Գոյություն ունեն կանանց համար որոշ խոչընդոտների համաշխարհային մասշտաբի ապացույց և մակրո մակարդակի տվյալներ՝ գրագիտություն, ժամանակի սղություն, աշխատանքային և տնային պարտականություններ, շարժունակության պակաս և սոցիոմշակութային խոչընդոտներ: Նմանատիպ տեղեկատվությունն արդյունավետ է, բայց ոչ բավարար:

Սեռով պայմանավորված տվյալների բազայի կազմումը և հավաքագրումը նպատակ ունի նույնականացնել և փաստաթղթայնացնել դեպի ՏՀՏ-ներ մուտքի և դրանց օգտագործման տարբեր մոդելները ազգային քաղաքականության մշակման և քաղաքական նպատակներ սահմանելու համար: Նման տվյալների հավաքագրումը կիրառելի է նաև քաղաքական առաջնահերթությունների սահմանման և իրականացման ռազմավարության համար:

Այնտեղ, որտեղ չկան տվյալներ, չկա նաև տեսանելիություն, իսկ առանց տեսանելիության, չկա նաև առաջնահերթություն:[91] Հետևաբար, ՏՀՏ-ի և գենդերային վիճակագրության հավաքագրումը անհրաժեշտ նախապայման է ցանկացած գենդերային պրոբլեմատիկայի՝ պլանավորման և իրականացման գործընթացի համար՝ օգտագործելով ՏՀՏ-ը:

Քանի որ համախառն տվյալները հաճախ քողարկում են գենդերային տարբերությունները, այս տարբերություններն արտացոլված չեն քաղաքականության մեջ: Հիմնական մակարդակի միկրո տվյալները, որոնք են քանակականները՝ որակական բովանդակությամբ, անհրաժեշտ են կանանց և աղջիկների հիմնական կարիքներն ըմբռնելու համար:

Այս տվյալների մեծ մասը կարող է լինել որակական ու մարամասն և հավաքագրվել յուրաքանչյուր նախագծի համար առանձին-առանձին: Օրինակ, ԱԶԲ-ն փաստաթղթայնացրել է մի շարք նախագծեր, որոնցում գենդերային խնդիրներն առաջին անգամ են սահմանվել տվյալ նախագծերում, իսկ նախագիծը պլանավորվել և իրականացվել է առաջ քաշված նման խնդիրների լուծման համար:[92] Տնային

[91] United Nations Conference on Trade and Development, Measuring ICT and Gender: An Assessment (New York and Geneva,
2014). Available from http://www.uis.unesco.org/Communication/Documents/measuring-ict-and-gender.pdf.This publication
also provides a list of different agencies and sources that collect gender-sensitive ICT data.

[92] For a list of case studies, see ADB, “Gender Equality Results Case Studies”. Available from http://www.adb.org/publications/

տնտեսությունների ներսի միկրո մակարդակի տվյալները, որոնք պետք է հավաքագրվեն հաշվի առնելով գենդերային գործոնները, ներառում են ստորև ներկայացված կետերը.

- Մանրամասներ՝ հավաքագրված անհատական, և ոչ թե տնային տնտեսությունների մակարդակով
- Տնային տնտեսությունում ակտիվների սեփականության և տիրապետման վերաբերյալ մանրամասներ: Տվյալները հաճախ հավաքագրվում են տնային տնտեսությունների մակարդակով և ներկայացնում արական սեռին որպես <<ընտանիքի գլուխ>>, անգամ եթե կինն է ընտանիքի՝ գումար վաստակող անդամը: Նման տեղեկատվությունն անբավարար է, հատկապես եթե խոսքը վերաբերում է ՏՀՏ-ի տիրապետմանը և վերահսկողությանը: Տվյալները պետք է հավաքագրվեն այն մարդու վերաբերյալ, ում պատկանում է և ով վերահսկում է ՏՀՏ-ների մուտքը:
- տվյալներ վարձատրվող / չվարձատրվող աշխատանքի և վերջինիս ծավալի վերաբերյալ՝ ժամանակի և ջանքերի տեսանկյունից: Տնային պայմաններում կատարվող աշխատանքը չի վարձատրվում և հաճախ համարվում է ոչ ֆորմալ, անգամ եթե այն կապված է այնպիսի սեփականության խնամքի հետ, ինչպիսին են խոշոր եղջերավոր անասունները:
- ժամանակի օգտագործման մոդելներ կանանց և աղջիկների համար տնային պայմաններում տնային աշխատանք կատարելու պարագայում: Օրինակ, որքան ժամանակ է ծախսվում ջուր կամ վառելիք բերելու համար: Սա պատկերացում կտա այն մասին, թե որքան ժամանակի ճկունություն պետք է տրվի առաջարկվող նախագծում:
- բանկային վիճակագրություն և տնային տնտեսության բանկային հաշիվների սեփականության իրավունք: Ու՞մ անունով է բանկային հաշիվը: Մուտքը դեպի հաշիվ և դրա վերահսկումը կարող է նաև բացատրել ֆինանսական ռեսուրսների վերահսկումը:
- բջջային վճարումների հարթակների օգտագործման մանրամասներ՝ առկայության դեպքում (նույնսիկ եթե այն օգտագործվում է միայն արտագնա աշխատանքի մեկնած ընտանիքի անդամներից դրամական փոխանցումներ ստանալու համար): Սա կարող է պատկերացում տալ օնլայն և բջջային վճարումների հարթակների նկատմամբ տղամարդկանց և կանանց վստահության մակարդակի մասին:

series/gender-equality-results-case-studies.

- տնային պայմաններում հարմարությունների առկայությունը, այսինքն՝ պետքարանը և ջուրը, որոնք ամենամեծ խնդիրներն են կանանց և աղջիկների համար ժամանակի, առողջության և անվտանգության տեսանկյունից: Սա հնարավորություն կտա պատկերացնել, թե որքան ժամանակ է ծախսվում ծանր աշխատանքի, ինչպես նաև առողջության վրա դրա ազդեցության, նաև ժամանակի մասին, որն անհրաժեշտ է եկամտաբեր գործունեության համար:
- առանձնահատուկ սոցիոմշակութային խոչընդոտները, որոնց բախվում են կանայք
- կանանց նկատմամբ բռնությունը տնային պայմաններում, որը լուրջ ազդեցություն է ունենում կանանց ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա, ինչը խոչընդոտում է իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը
- տարբեր ՁԼՄ-ների և ՏՀՏ-ի հասանելիությունը՝ ըստ գենդերի (օգնելու հաղորդակցման և շահերի պաշտպանության պլանի ստեղծմանը):

Զարգացման համար ՏՀՏ-ի չափման գործընկերությունը <<Չափելով ՏՀՏ-ն և գենդերը>>[93] հրապարակման մեջ ցուցակագրել է ՏՀՏ-ին բնորոշ որոշ ոլորտներ, որոնցում գենդերի հետ կապված վիճակագրությունները կարևոր են: Ներառված են հետևյալ հարցերը՝

- որո՞նք են այն տարբերությունները, թե ինչպես, որտեղ և երբ են կանայք ու տղամարդիկ օգտագործում ՏՀՏ,
- ի՞նչ խոչընդոտների են կանայք բախվում համացանցից օգտվելիս,
- արդյո՞ք կանայք ունեն անհրաժեշտ կրթություն, ուսուցում և հմտություններ տեղեկատավական հասարակության մեջ գործելու համար,
- որո՞նք են գենդերային տարբերությունները ՏՀՏ ոլորտում զբաղվածության և ձեռնարկատիրության միջև,
- տվյալ իրավիճակում ի՞նչ առանձնահատուկ ուղիներով ՏՀՏ-ն կարող է նպաստել կանանց ձեռներեցությանը, եկամտի ձևավորմանը և ինքնազբաղվածությանը,
- ի՞նչ բովանդակություն են ցանկանում և կարիքն ունեն կանայք և աղջիկները, արդյո՞ք այն հասանելի է իրենց,
- ինչպե՞ս ՏՀՏ-ն կարող է բարելավել աղջիկների, կանանց և նրանց ընտանիքների առողջական վիճակը զարգացող երկրներում,
- որո՞նք են գաղտնիությանը, ապահովությանը և անվտագությանը վերաբերող սեռով տարանջատվող ՏՀՏ հիմնախնդիրները

[93] United Nations, Measuring ICT and Gender: An Assessment (New York, 2014). Available from http://unctad.org/en/pages/PublicationWebflyer.aspx?publicationid=924.

- ի՞նչպիսին է կանանց ներկայացվածությունը և մասնակցությունը ՏՀՏ քաղաքականությանը և կառավարմանը:

ՏՀՏ-ի հետ առնչվող սեռով տարանջատվող տվյալների համար օգտագործելով <<Գենդերի էվոլյուցիայի մեթոդաբանությունը համացանցի և ՏՀՏ-ի համար>>[94] օգնում է սահմանել կանանց հատուկ կարիքները այնպես, որ նախագծերը հարմարեցվեն գենդերային հիմնախնդիրների լուծմանը: Գենդերային հիմնախնդիրների լուծման գործողությունների օրինակները ներառում են՝

- կապի բարելավում և ցածր մակարդակի կապ ունեցող տարածքներին դիմելու համար միջոցների, ուղիների և ՏՀՏ-գործիքների օգտագործում, ինչպիսին է, օրինակ, <<հիմար հեռախոսը>> միայն սմարթֆոնների փոխարեն
- կանացի բոլոր ծառայությունների կենտրոնների ստեղծում և տեղայնացում հասարակական վայրերում՝ տնից մի փոքր հեռավորության վրա, այսինքն՝ <<անվտանգ սոցիալական տարածքներում >>,
- երեխաների խնամքի և այլ առողջական ծառայությունների ապահովում նման կենտրոններում,
- Ճկուն կամ <<ճիշտ ժամանակին>> տեղայնացված ուսուցման հնարավորությունների տրամադրում, որոնք չեն պահանջում 09:00-17:00 գրաֆիկ՝ շաբաթական մի քանի օր
- ուսուցման վայրերի հարմարեցումը առանձնահատուկ կարիքների բավարարման համար
- թրեյներների կողմից գենդերային խնդիրների հաշվի առնումը, նույնիսկ եթե նրանք բոլորը կանայք չեն,
- բովանդակության կիրառումը՝ տեղի լեզվով և կանանց ներգրավվումը բովանդակության կատարելագործման գործում՝ օգտագործելով կանանց սեփական փորձը՝ որպես ուսուցման հիմնական կետեր,
- տարբեր ԶԼՄ-ների և ՏՀՏ գործիքների համախմբում և համընկեցում՝ տեղեկատվությունը և գիտելիքը կանանց տարբեր ուղիներով հասանելի դարձնելու նպատակով, այն դեպքում, երբ կանանց համար հասանելի չէ տվյալ միջոցը,
- պարզ լեզվի, SMS ծանուցումների, IVRS-ի և ձայնային հաղորդագրության օգտագործում՝ այդպիսով հաղթահարելով գրագիտության, ժամանակի և հեռավորության խոչընդոտները,

[94] Association for Progressive Communications, "Gender Evaluation Methodology for Internet and ICTs: A Learning Tool for
Change and Empowerment". Available from http://www.genderevaluation.net/gem/en/gem_tool/index.htm.

- կանանց համար հուսալի և անվտանգ հարթակների ու ծառայությունների զարգացում՝ հատկապես սեռով պայմանավորված բռնությունների դեպքերի համար:

Գոյություն ունեն բարդ գենդերային և ՏՀՏ բազմաթիվ խնդիրներ, որոնք ունեն բարձրաձայնման կարիք՝ հաղթահարելու այն սահմանափակումները, որոնց բախվում են ձեռներեց կանայք և ապահովելու բարենպաստ միջավայր վերջիններիս համար՝ նորարարություններով հանդես գալու և բարգավաճելու համար: Այս հիմնախնդիրների որոշ մասը կարող է լինել Ձեր կարողություններից , ժամանակից և ռեսուրսներից անդին: Այնուամենայնիվ, կարևոր է գենդերային և ՏՀՏ այս որոշ խնդիրների բացահայտումը և լուծումը, քանի որ, հակառակ դեպքում, համայնքում կամ բնակավայրերում գենդերային անհավասարությունը կարող է ավելի խորանալ և այսպիսով վտանգի դնել զարգացման նպատակների նվաճումները՝ ներառյալ ԿԶՆ-ները:

Գործնական առաջադրանք

- Գտեք Ձեր երկրում ձեռնարկատիրությանը վերաբերող որևէ օրենք, օրինակ, աշխատանքային օրենսդրություն, ֆինանսական ծառայությունների մասին օրենք կամ ՏՏ ակտ:
- Ուսումնասիրել օրենքը գենդերի տեսանկյունից: Դուրս բերել այն վիճահարույց տարրերը / դրույթները, որոնք ուղղման կամ փոփոխության կարիք ունեն:
- Առաջարկել ուղիներ և միջոցներ, թե ինչպես կարելի է օրենքը կամ պրակտիկան փոփոխել:
- Ներառել ՏՀՏ-ների օգտագործումը օրենքի կիրառման մեջ:
- Առաջարկել հաղորդակցության և տեղեկատվական աջակցության պլան, այնպես, որ տեղեկատվությունը հասնի շահառուներին:

Առանցքային դրույթներ

- Բարենպաստ քաղաքականության և միջավայրի ձևավորում՝ խթանելու կանանց ձեռնարկատիրությունը՝ ներառյալ ներգրավվածությունը մի շարք օրենսդրական և ֆինանսական գործունեությունների մեջ՝ գործող օրենքների փոփոխությունից, մինչ ֆինանսական ներգրավում և մասնավորապես կին-ձեռներեցներին ուղղված ծառայություններ:

- ՏՀՏ-ները խաղում են վճռական դեր որպես <<խթանողներ>> . (1) օգնելով կառավարություններին պարզեցնել և բարելավել նույնականացման նորմերը և ֆինանսական գործարքների գործընթացները, (2) ապահովելով բազմաթիվ հարթակներ իրազեկման և մարքեթինգի համար և (3) առաջարկելով գործիքներ կին-ձեռներեցների հնարավորությունների ընդլայնման համար:
- Կառավարությունը պետք է առանցքային դեր խաղա բարենպաստ օրենսդրություն և քաղաքականություն ձևավորելու գործում՝ խթանելու կանանց ձեռնարկատիրությանը:
- Սա կարող է նշանակել նոր օրենքների տեղծում կամ գոյություն ունեցող օրենքների և գործընթացների փոփոխում՝ ներառելու գենդերը և դարձնելու դրանք առավել զգայուն գենդերային հիմնախնդիրների նկատմամբ:
- Դեպի ֆինանական և թվային ֆինանսական ծառայություններ մուտքի հասանելիությունը կարող է օգնել ընդլայնելու ծառայությունների հասանելիությունը և նպաստելու կանանց և աղջիկների ավելի մեծ թվի ներգրավմանը տնտեսական հիմնական ուղղություններում:
- Քաղաքականությունը կառավարության դերի մի մասն է, իսկ դրա իրագործումը՝ մեկ այլ: Իրագործման մեջ անհրաժեշտ է հավաքագրել տնային տնտեսությունների ներսում սեռերով տարանջատվող տվյալներ ծրագրի և նախագծերի պլանավորման համար և ներառել համապատասխան ու գենդերային խնդիրների արձագանքմանն առնչվող պրակտիկաներն իրագործման գործընթացում:

VI. Ամփոփում

Կայուն զարգացման գործընթացում կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման կենտրոնական նշանակությունը չի կարող նվազեցված կամ թերագնահատված լինել: Եթե տնտեսական իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը, ինչպիսին նախատեսված էր այս մոդուլում, ձգանն է, որը կհանգեցնի այլ իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը, ապա շատ կարևոր է, որ կառավարությունները բացահայտեն ուղիներ և միջոցներ՝ նպաստելու կանանց տնտեսական իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը:

Ավելի վաղ մոդուլում նշվեց երեք կետ՝ կրթություն, զբաղվածություն և ձեռնարկատիրություն: Եթե կրթությունը հիմնարար է, իսկ զբաղվածությունը կենսական, ապա ձեռնարկատիրությունն ուղղված է կանանց հնարավորությունների ընձեռնմանը <<աշխատանք փնտրողներ>>-ից վերածվելու <<աշխատանք ստեղծող>>-ների:

Մոդուլի այս եզրափակիչ հատվածի ջանքերն ուղղված են միավորելու նախորդ բաժիններում դիտարկված՝ կանանց ձեռնարկատիրության խթանմանն ուղղված տարբեր գաղափարներ կայուն զարգացման հիմնահարցերի, գենդերի և գենդերային հիմնախնդիրների, կառավարության դերի և ՏՀՏ-ների օգտագործման վերաբերյալ:

6.1 Օրենքների և քաղաքականությունների մեյնսթրիմինգ

Քաղաքականության մշակման գործընթացում գենդերային պրոբլեմատիկան հաշվի առնելու գիտակից ջանքերը շատ կարևոր են: Սա կերաշխավորի, որպեսզի կանանց ձայները դառնան լսելի, հաշվի առնվեն նրանց՝ գենդերին հատուկ կարիքները, և վերացվեն նրանց՝ որպես ձեռներեցների աճին խոչընդոտող արգելքները: Կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը չի կարող տեղի ունենալ ՝ առանց գենդերային խնդիրները հաշվի առնելու:

Սա կարող է նշանակել՝

- փոփոխել գործող օրենքներն այնպես, որպեսզի դրանք դառնան առավել զգայուն գենդերային հիմնախնդիրների նկատմամբ,
- գենդերային բյուջետավորում, ինչը կերաշխավորի հատուկ և համապատասխան բյուջետային հատկացումներ կանանց ծրագրերին, օրինակ, գենդերային հիմնադրամ՝ յուրաքանչյուր ոլորտային նախարարությունում,

- կանանց բավարար ներկայացվածություն քաղաքականության մշակման և իրագործման բոլոր մակարդակներում՝ որոշումների ընդունման գործընթացում երաշխավորելու կանանց կարիքների և խնդիրների տեսանելիությունը և առաջնայնությունը
- ստեղծել միայն կանանց՝ մեկ պատուհանի սկզբունքով ծառայություններ խորհրդի և խորհրդատվության, BDS-ի, կարողությունների զարգացման և որակավորման բարձրացման համար,
- երաշխավորել ֆինանսական ներգրավվածությունը, օրինակ Հնդկաստանի Բհարաթիյա Մահիլա Բանկը (Կանանց բանկ)[95], ավանդներ է ընդունում բոլորից, բայց ֆինանսական աջակցություն ցուցաբերում միայն կանանց: Մեկ այլ օրինակ է Ինդոնեզիայի Քելուարգա Հարապան ծրագիրը, որտեղ կանանց կանխիկ դրամական փոխանցումները կապված են խնայողական հաշիվների հետ՝ հիմնված տեղերում ցուցաբերվող առողջապահական և կրթական ծառայություններին տնային տնտեսությունների մասնակցության հիման վրա:
- կանանց համար հիմնել հարմարավետ տարածքներ և ապահովել գենդերին հատուկ ծառայություններ և հարմարություններ:[96]

Սրանք պարզապես մի քանի առաջարկություններ են և կարող են լինել նաև ավելին՝ կախված համատեքստից, տեղական իրողություններից և իրավիճակներից:

6.2 ՏՀՏ հնարավորությունները կին-ձեռնարկատերերի համար

ՏՀՏ-ներն առաջարկում են կին-ձեռներեցներին ստեղծել ընդլայնված հնարավորություններ և մեթոդներ, ղեկավարել և առաջ տանել սեփական բիզնեսը, կարգավորել մատակարարման շղթան, զարգացնել մարքեթինգային ուղիները, ստանալ մուտք դեպի բիզնեսի աջակցման ծառայություններ և ստեղծել ցանցեր հաճախորդների, բիզնես-գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի հետ: ՏՀՏ-ները, իրենց վերահսկողության դեպքում, նաև օգնում են կանանց բարձրացնել ինքնագնահատական և ձեռք բերել ինքնավստահություն, և, եթե էլեկտրոնային ծառայությունները հասանելի են, օգտվել դրանցից ճկուն ժամկետներում:

Առանց ժխտելու հիմնական լրատվամիջոցների և համացանցի ազդեցությունը կանանց վրա վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ այսօրվա

[95] Bharatiya Mahila Bank. Available from http://www.bmb.co.in/.

[96] Alliance for Financial Inclusion, Policy Frameworks to Support Women's Financial Inclusion (2016). Available from http://
www.afi-global.org/publications/2325/Policy-Frameworks-to-Support-Women-s-Financial-Inclusion.

տեխնոլոգիաները բջջային սմարթֆոններն են: Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում սմարթֆոնի ընդունման արագ աճն առաջարկում է կառավարություններին և այլ ծառայությունների մատակարարներին ընդլայնման և տնտեսական աճի հնարավորություններ տարբեր ծառայությունների և կանանց սեփական ձեռնարկությունների միջոցով:

Ինչևիցե, հասանելիությունն ու վերահսկողությունը կիրառության բանալիներն են: Քաղաքական գործիչները, ովքեր փորձում են ընդլայնել կանանց մուտքը դեպի ՏՀՏ-ներ, կարող էին բացահայտել ուղիներ և միջոցներ՝

- ինտեգրացնելու գենդերն ազգային լայնաշերտ ծրագրերին, հետևելու բջջային մուտքերին և հավաքագրելու սեռով պայմանավորված տվյալներ ըստ գենդերի օգտագործման վերաբերյալ,
- երաշխավորելու կանանց պաշտպանությունը բջջայինների օգտագործման և օնլայն լինելու դեպքերում՝ անցկացնելով տեղեկատվական արշավներ և զարգացնելով իրավական և քաղաքական շրջանակները՝ հետևելու հետապնդումներին բջջային հեռախոսներով և շարժական համացանցով:
- երաշխավորելու համապատասխան կանոնակարգեր կանանց համար գների նվազեցման և ընդլայնված լուսաբանման նապատակով, օրինակ, վերացնելով բջջային հարկերը, որոնք մեծացնում են ծախսերի խոչընդոտը, թույլատրելով ենթակառուցվածքի կամավոր բաժանումը բջջային օպերատորների միջև և ազատելով վերջիններիս համար բավարար դաշտ՝ ընդունելի արժեքով,
- կանանց և աղջիկների մոտ ձևավորել տեխնիկական գրագիտություն, ինքնավստահություն և թվային հմտություններ՝ ինտեգրացնելով բջջային և թվային հմտությունների թրեյնինգներ այն կանանց համար, ովքեր մասնակցում են կառավարական ծրագրերին և դրանք ավելացնել տարրական ու միջնակարգ դասարանների ուսումնական ծրագրերում:[97]

ՏՀՏ-ն կարող է արդյունավետ դեր խաղալ կին-ձեռներեցների համար ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման գործում՝ հատկապես բջջային վճարումների նշանակալի աճի համատեքստում: Դրա համար կառավարությունները կարող են օգտագործել նոր տեխնոլոգիաները՝ թվայնացնելով վճարումները և նպաստների ուղղակի փոխանցումները՝ ներառելով կենսաչափությունը՝ որպես թվային ֆինանսական նույնականացման համակարգի ստեղծման մի մաս և ապահովելով մեկ տեղում ամբողջական լուծումներ նոր բիզնեսների գրանցման

[97] World Wide Web Foundation, "Five barriers, five solutions: Closing the gender gap in ICT policy", 9 June 2015. Available from http://webfoundation.org/2015/06/five-barriers-five-solutions-closing-the-gender-gap-in-ict-policy/.

գործընթացները և բոլոր բիզնես-գործարքներն օնլայն տարբերակով իրականացնելու համար:

Կան նաև քաղաքական այլ տարբերակներ, որոնց կարող են հետևել կառավարությունները դեպի շուկաները մուտք ապահովելու համար: Այդ տարբերակները ներառում են բոլոր գնումների օնլայն անցկացումը՝ նախապատվությունը տալով կին-ձեռներեցներին և դյուրացնելով էլեկտրոնային առևտուրը:

Հետևելով կին-ձեռներեցների կողմից ՏՀՏ-ների օգտագործման ուսումնասիրությանը չորս երկրներում՝ Ադբեջանում, Ղազախստանում, Կիրգիզիայի Հանրապետությունում և Ուզբեկստանում, ԶՀԲ-ը մի քանի խաչաձև առաջարկություններ է արել այդ երկրների համար: Առաջարկություններից մի քանիսը ներառում են՝

- Կին-ձեռներեցների համար ՏՀՏ աջակցությամբ նոր գործարար-հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվական արշավների մշակում: Այս արշավների մեծ մասը կարող է օգտագործել այնպիսի հիմնական լրատվամիջոցներ, ինչպիսիք են հեռուստատեսությունը, ռադիոն և տպագրությունը:
- ՏՀՏ-ի աջակցությամբ ուսումնական ծրագրերի ստեղծում կին-ձեռներեցների համար:
- SMS և IVRS ձայնային հաղորդագրությունների վրա հիմնված տեղեկատվական ազդանշանային ծառայությունների ստեղծում,
- Վարկային ծրագրերի կազմում կին-ձեռներեցների համար ՏՀՏ ծառայությունների և օնլայն բիզնեսների ոլորտում նոր ձեռնարկությունների համար:
- Ապահովել կանանց ձեռնարկատիրական բջիջներով ոլորտային նախարարություններում:
- Աջակցություն կանանց՝ ֆինանսական հնարավորությունների հետ կապված կարողությունների զարգացման և BDS ծառայությունների միջոցով՝ հատկապես գյուղական և արվարձանային շրջաններում:
- ՏՀՏ ենթակառուցվածքների զարգացում մատչելի լայնաշերտ կապով՝ 100%-ոց ծածկույթով, էլեկտրոնային վճարային համակարգերով և բջջային վճարումներով:[98]

[98] ADB, Information and Communication Technologies for Women Entrepreneurs: Prospects and Potential in Azerbaijan, Kazakhstan, the Kyrgyz Republic, and Uzbekistan (Mandaluyong City, 2014). Available from http://www.adb.org/sites/default/files/publication/42869/ict-women-entrepreneurs.pdf.

6.3 Գենդերային հիմնախնդիրների նկատմամբ զգայուն քաղաքականության ստեղծման սցենար

Եթե կանանց գործակալությունը պետք է առաջանա իրավունքների և հնարավորությունների ընդլայնմամբ ձեռնարկատիրության միջոցով, ապա Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում ներկայիս սցենարը, կանանց ձեռնարկատիրության տեսակետից, այնքան էլ բարվոք վիճակում չէ և արտացոլում է այդ տարածաշրջանի սոցիալական, մշակութային և քաղաքական իրողությունները: Եթե իրականությունը փոխվի, նշանակալի ջանքեր պետք է գործադրվեն բոլոր շահագրգիռ կողմերի կողմից և այս նպատակով էլ կանանց պետք է տրվի ձայն, իսկ նրանց կարիքները պետք է լինեն լսելի և հասցեավորված: Այդ ձայնը տալը գենդերային հիմնախնդիրները հաշվի առնող քաղաքականության և պրակտիկայի մի մասն է:

Գենդերային ուղղվածությունն <<ամբողջովին կառավարական>> ջանք է, սակայն որոշ համատեքստերում և իրավիճակներում այն կարող է կիրառվել նաև անհատական ծրագրերում և նախագծերում: Գենդերային պրոբլեմատիկան հաշվի առնելու համար կարևոր են գենդերային աուդիտը և գենդերային բյուջեները, և սա կարելի է անել ինքնուրույն կամ էլ դրսից: Միևնույն ժամանակ կառավարությունները կարող են շատ բանի հասնել՝ կազմելով գենդերային հիմնական կետերը և հրապարակելով գենդերային տարեկան հաշվետվություններ սեռով պայմանավորված տվյալներով մակրո- և տնային տնտեսությունների ներսի մակարդակներով: Նման տարբերակված տվյալները կարող են մեծ ներդրում լինել գենդերազգայուն քաղաքականության մշակման և իրագործման համար:

Մոդուլը սկսվել է՝ առաջարկելով հայացք նետել զարգացման ներկայիս դիսկուրսի և կայուն զարգացման ջանքերում կանանց ներգրավվածության կարևորությանը: Ավելի ուշ քննարկվել են ՏՀՏ-ների կողմից ներկայացված եզակի հնարավորություններին վերաբերող հարցեր: Հաջորդիվ, գենդերային պրոբլեմատիկայի ակնարկն է, ինչպիսին այն ներկայացվում է ամբողջ աշխարհում: Եվ, վերջապես, այս մոդուլի ջանքերը կայանում են քաղաքականության ակնարկի ներկայացման մեջ գենդերային հիմնախնդիրների նկատմամբ զգայունության շրջանակներում:

Քաղաքական կամքով և բիզնես սկսելու համար կանանց աջակցությամբ նման ակտիվ քաղաքական միջավայրը պարտադիր է: Սակայն առանց բավարար ուշադրություն դարձնելու կանանց և աղջիկներին հետ պահող խոչընդոտներին և մարտահրավերներին՝ ոչինչ չի փոխվի, քանի դեռ կա իշխանության փոփոխություն: Այս իշխանափոխությանը հասնելն այն պայքարն է, ինչի մեջ աշխարհի բոլոր կանայք

շարունակում են ներգրավվել: Քանի դեռ կա գենդերային անհավասարություն, չի կարող լինել իրական և կայուն զարգացում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Նշումներ դասընթացավարների համար

Սա բարդ մոդուլ է՝ բաղկացած տարբեր թեմաներից, որոնք, առաջին հայացքից, որևէ կապ չունեն միմյանց հետ: Մոդուլը զարգացման տարբեր թեմաները՝ ԿԶՆ-եր, գենդերը, տնտեսությունը և ֆինանսները, ՏՀՏ-ները խորությամբ հասկանալու կոչ է անում: Այստեղ փորձ է արվել թռչնի թռիչքի բարձրությունից դիտարկել տարբեր հիմնախնդիրներ, որոնք իրենց բնույթով կապված են, եթե կան որոշակի հաջողություններ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման գործում: Ուշադրությունը սևեռված է կանանց ձեռներեցության վրա, այնուամենայնիվ, քննարկված շատ սկզբունքներ կապված են կանանց զարգացման այլ բաժինների հետ:

Դասընթացավարների համար նախատեսված այս նշումների նպատակն է համաձայնեցնել հեղինակի և դասընթացավարների առաջնահերթությունները և դյուրացնել նրանց ջանքերը և կարողությունը՝ արդյունավետ կերպով ներգրավվելու դասընթացներին:

Մոդուլի նպատակը

Գենդերային հիմնախնդիրները առանձնահատուկ կերպով զգայուն են և կրում են անձնական բնույթ: Կարևոր է գիտակցել, որ գենդերային հիմնախնդիրները պարզապես կանանց մասին չեն: Դրանք կանանց և տղամարդկանց մասին են, երկուսի միջև փոխհարաբերությունների: Գենդերի վերաբերյալ տեղեկացվածության կամ գենդերային պրոբլեմատիկային ուղղված յուրաքանչյուր ջանքի վերջնական նպատակն է հանգեցնել այն վերաբերմունքի փոփոխությանը, որով պետական պաշտոնյաները դիտարկում են և լուծում գենդերային հիմնախնդիրները զարգացման մեջ:

Ցանկալի չէ, որ գենդերի ողջ դասընթացն ընթանա սովորական ճանապարհով՝ ենթադրելով, որ խոսքը միայն կանանց մասին է, այդ պատճառով էլ կին-աշխատակիցները պետք է վերապատրաստվեն: Փոխարենը, նպատակն է փոխել վերաբերմունքը թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում:

Ռեսուրսային անձանց և դասընթացավարների գիտելիքների բազան

Ճիշտ ռեսուրսային անձ կամ դասընթացավար ունենալը կարող է կարևոր լինել հաջողություն կամ ձախողում գրանցելիս: Շատ կարևոր է, որ դասընթացավարները և քաղաքական որոշումներ ընդունողներն արդեն ունենան ամուր հիմք և քաջատեղյակ լինեն գենդերային հավասարությունից և գենդերային իրավահավասարության հիմնախնդիրներից՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ իրենց երկրի մակարդակով, և ամբողջովին համոզված լինեն, որ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը հրամայական է կայուն զարգացման համար:

Ահա, թե ինչու կատարյալ կլիներ, եթե այս մոդուլի նյութը ներկայացվեր կանանց զարգացման և ՏՀՏ-ների հետ կապված որոշակի փորձ ունեցող սոցիոլոգի կողմից: Ոլորտում փորձառությունը ցանկալի է, բայց ոչ պարտադիր: Ոլորտում ունեցած փորձառությունը մեծացնում է վստահությունը դասընթացավարի նկատմամբ:

Թիրախային խմբեր

Այս մոդուլի հիմնական թիրախային խումբը միջին օղակի և միջին մակարդակի պետական պաշտոնյաներն ու քաղաքական որոշումներ ընդունողներն են: Հանրային կառավարման ոլորտում նրանց գիտելիքը և փորձը համարվում է նախնական գիտելիք և ուսուցում: Այնուամենայնիվ, այս մոդուլը համապատասխանում է նաև այլ ուսուցողական խմբերի:

Բոլոր դեպքերում, վերապատրաստման դասընթացին պետք է մասնակցեն հավասար թվով կանայք և տղամարդիկ: Գենդերային հիմնախնդիրներն անհանգստացնում են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց: Չափազանց մեծ թվով կանանց մասնակցությունը վերապատրաստման ծրագրին անտեսում է գենդերի վերաբերյալ տեղեկացնելու նպատակին, իսկ չափազանց մեծ թվով տղամարդկանց մասնակցությունը կարող է հանգցնել նրան, որ կանայք չխոսեն:

Եվ նորից, մասնակցությունը չպետք է լինի միայն կանանց ուղղվածությամբ նախարարություններից և կառավարության բոլոր մակարդակների ստորաբաժանումներից: Գենդերային հիմնախնդիրները բոլոր նախարարությունների գործունեության կարգն են՝ ներառյալ նրանք, որոնք կենտրոնացած են զարգացման այնպիսի ուղղությունների վրա, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, գյուղերի զարգացումը, աղքատության կրճատումը, առողջությունը, հմտությունների զարգացումը և մասնագիտական կրթությունը, և նրանք, որոնք կենտրոնացած են առևտրի և արդյունաբերության ոլորտներում:

Ֆինանսների նախարարությունը հատկապես մեծ կարևորություն ունի, քանի որ ֆինանսներին է պատկանում վերջին խոսքը զարգացման ծրագրերում:

Վերապատրաստման տևողությունը

Մոդուլի շնորհանդեսի խորությունը կախված կլինի առկա ժամանակից: 1-ին, 2-րդ և 3-րդ բաժինները ներկայացնում են համատեքստը: 4-րդ բաժինը՝ գենդերային պրոբեմատիկայի և 5-րդ բաժինը գենդերային խնդիրների նկատմամբ զգայուն քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ շատ կարևոր են և ընկած են գործադրվող ողջ ջանքի հիմքում: 6-րդ բաժինն ամփոփում է նախորդ բաժինները: Կախված ժամանակից՝ դասընթացավարները կարող են, ըստ իրենց առաջնայնությունների, ընդգրկել կամ դուրս թողնել որևէ բաժին, սակայն նրանք պետք է ներառեն 4-րդ և 5-րդ բաժինները:

Մեծ քանակությամբ տեղեկատվություն և ակտիվություն է ներառված մոդուլում: Դասընթացն անցկացնելու համար պահանջվող նվազագույն ժամանակը կլինի մեկ աշխատանքային օր՝ 4 սեսիաներով, յուրաքանչյուրը՝ 90 րոպես տևողությամբ: Կախված տեղի իրավիճակից՝ դասընթացավարը կարող է օգտագործել նույն բովանդակությունը 2-5 –օրյա դասընթացի համար կամ մի քանի շաբաթվա ընթացքում՝ շաբաթական մեկ սեսիայով:

Մեկ բաժինը ներկայացնելու համար անհրաժեշտ նվազագույն ժամանակահատվածը 90 րոպե է: 90-րոպեանոց սեսիայի ընթացքում 60 րոպեն կարող է հատկացվել բովանդակության ներկայացմանը, իսկ 30 րոպեն՝ խմբային աշխատանքին կամ վարժություններին: Ավելի շատ ժամանակի դեպքում այն հավասարապես բաժանվում է բովանդակության ներկայացման և վարժությունների միջև: Օրինակ, եթե կա երկու օր, ապա երկու բաժինները կարող են ներկայացվել յուրաքանչյուր օր՝ յուրաքանչյուր բաժնին տրամադրելով երեք ժամ(90 րոպե ներկայացման և 90 րոպե խմբային աշխատանքի համար):

Օգտագործել տրված դեպքերի ուսումնասիրությունները՝ որպես օրինակներ: Իդեալականորեն, դասընթացավարներ պետք է գտնեն և ձեռք բերեն դեպքերի ուսումնասիրություններն իրենց սեփական երկրի կամ նմանատիպ զարգացող երկրի համատեքստից:

Բաժնի ուսումնական դիզայն

Ըստ էության, դասընթացավարը պետք է հետևի մեծահասակների ուսուցման կայացած սկզբունքներին: Դրանք ներառում են հետևյալները.

- Մեծահասակները շատ լավ սովորում են այն ժամանակ, երբ զերծ են անհարկի սթրեսից, ձանձրույթից, տեղեկատվության ավելցուկից և երկրորդ, երբ նրանք չեն փորձում գուշակել ուսուցչի նպատակները:
- Մեծահասակներն իրենք են որոշում, թե ինչն է կարևոր սովորել:
- Մեծահասակները լրացուցիչ ուսուցմանը չեն մոտենում <<մաքուր էջից>>, այսպիսով, առաց կյանքի հետ կոնկրետ առնչության՝ ուսուցումը գրեթե արժեք չունի:
- Մեծահասակները հենվում են նախկին փորձի վրա, որով նրանք չափում են ցանկացած նոր տեղեկատվություն: Նրանք հավանաբար արդեն ունեն ձևավորված տեսակետներ տվյալ թեմայի վերաբերյալ:
- Մեծահասակներն ունեն իրենց կյանքի և աշխատանքի հետ սերտորեն առնչվող ուսուցման կարիք: Նրանք օգտակար ուսուցման փորձ են համարում այն, որի ընթացում կարող են ստացած նոր գիտելիքը կապել իրենց փորձի հետ՝ խնդիրները լուծելու համար: Նրանք, այսպիսով, ակնկալում են, որ իրենց տրված գիտելիքը պետք է անմիջապես օգտակար լինի:
- Մեծահասակներն ակնկալում են, որպեսզի ուսուցման գործընթացը լինի դյուրին, հարմար և հետաքրքիր, և ուսուցման <<ինչու>>-ն նույնքան կարևոր է, որքան <<ինչպես>>-ը: Մեծահասակները նվաճման զգացողության կարիք ունեն՝ որպես խթան հետագա ուսուցման համար: Սա օգնում է նրանց բարձրացնել ինքնագնահատականը և ձեռք բերել ինքնավստահություն իրենց սովորելու կարողության մեջ:
- Ավելի քան, որևէ այլ բանի մեծահասակները կարիք ունեն ծառայել որպես տեղեկված ռեսուրս դասընթացի համար, այնպես, ինչպես իրենց սովորող կոլեգաները:

Մոդուլը գրվել է՝ պահպանելով վերոնշյալ սզբունքները, և դասընթացավարները ևս պետք է դրանք պահեն իրենց մտքում և <<զրուցեն մասնակիցների հետ>>, այլ ոչ թե միակողմանի եղանակով <<սովորեցնեն>> նրանց՝ առանց բավարար փոխազդեցության:

Մեկօրյա սեմինարը կարող է ներառել հետևյալ սեսիաները՝ յուրաքանչյուրը 90 րոպե տևողությամբ՝

- Սեսիա 1 . Ներկայացնել մոդուլը, դրա նպատակները և ակնկալվող արդյունքները: Այնուհետև անցկացնել գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացման վարժություններ և քննարկել ազգային համատեքստը ԿԶՆ-նեի, ՏՀՏ-ների և ձեռներեցության վերաբերյալ:
- Սեսիա 2. Ներկայիս գենդերային պրոբլեմատիկայի հայեցակարգերը և գենդերային պրոբլեմատիկայի փուլերը որպես հիմք գործնական իրավիճակների վերլուծության և գենդերային պլանավորման համար:
- Սեսիա 3.Շարունակել իրավիճակային վերլուծությամբ, սակայն կենտրոնանալ կանանց ձեռներեցության և անհրաժեշտ անելիքների վրա:
- Սեսիա 4. Քննարկել քաղաքականության մշակումը և իրագործումը, որին հաջորդում է գործողությունների պլանի ստեղծման վարժությունը (բացատրված է ստորև):

Քանի որ գենդերային հիմնախնդիրները հաճախ քողարկված են նախկինում գոյություն ունեցող պատկերացումներով և վերաբերմունքով՝ որպես յուրաքանչյուր հասարակության մեջ սոցիալիզացիայի գործընթացի արդյունք, առավել օգտակար կլիներ սեմինարը սկսել <<սեռ>>-ի և <<գենդեր>>-ի միջև տարբերությունների քննարկումից: Գենդերային պրոբլեմատիկայի վերաբերյալ նախապատրաստված մեկ կամ երկու վարժությունը կօգնեն ներգրավել մասնակիցներին և կոտրել միապաղաղությունը:

Գենդերային հիմնախնդիրները նաև հակված են լինել զգայուն և երբեմն նաև սարսափելի, հետևաբար այս հիմնախնդիրները պետք է լուծվեն տակտի զգացումով, որպեսզի քննարկումները չվերաճեն զայրացած վիճաբանությունների: Դասընթացավարները պետք է անցկացնեն սեսիաները արդյունավետ կերպով՝ մտքում պահելով բովանդակությունը և տրված ժամանակը:

Դասընթացավարները կարող են սկսել դասընթացը՝ ներկայացնելով երկիրը զարգացման խնդիրների, գենդերային հիմնախնդիրների, ՏՀՏ սցենարի և ձեռներեցության, հատկապես կանանց ձեռներեցության և գոյություն ունեցող քաղաքականության ու օրենքների համատեքստից:

Ազգային դասընթացավարները ամենալավն են հասկանում երկրում առկա իրավիճակը: Հետևաբար, դասընթացի և քննարկումների անցկացման համատեքստը կազմելուն և համապատասխան տոն տալուն կօգնեն հետևյալ կետերը.

- Ազգային առանձնահատկությունների նկարագրությունը՝ գենդերային հիմնախնդիրների հետ կապված

- Ազգային առանձնահատկությունների նկարագրությունը՝ ձեռներեցության հետ կապված

4-րդ բաժինը՝ կանանց համար գենդերազգայուն քաղաքականության մշակման գործընթացի վերաբերյալ, հատկապես բարդ և խճճված բաժին է, քանի որ մասնակիցներին կարող են անծանոթ լինել այստեղ ներկայացված հայեցակարգերը: Չնայած, որ նախընտրելի է ունենալ հյուր խոսնակի, ով արդեն նախաձեռնել է գենդերային ուսուցում կառավարության համար՝ խոսելու այդ թեմայով, սակայն միշտ չէ, որ հնարավոր է գտնել նման անձի: Հետևաբար դասընթացավարներին խորհուրդ է տրվում ժամանակ տրամադրել՝ ծանոթանալու գենդերային պրոբլեմատիկայի թեմային՝ կարդալով նաև այս թեմայով գոյություն ունեցող գրականությունը (տես մոդուլի վերջում ներկայացված հղումները):

<<Ինչ անել>>-ները կարող են օգտագործվել՝ կատարելագործելու խմբային վարժությունները կամ քննարկումները: Վարժությունները կօգնեն մասնակիցներին ավելի լավ հասկանալ հայեցակարգերը: 4.1.1 բաժնում <<Ինչ անել>>-ի պատասխանը պարզ է: Եթե անձը զգայուն է գենդերային հիմնախնդիրների նկատմամբ, ապա թեկնածուի սեռը կարևոր չէ, կգնահատվեն միայն աշխատանքը կատարելու որակավորումներն ու կարողությունը:

5-րդ բաժնում գենդերազգայուն քաղաքականության և դրա իրագործման պլանը կազմելիս առաջարկված են քաղաքականության տարբերակների ընտրություն: Դասընթացավարները, այնուամենայնիվ, խրարուսվում են բարելավելու բովանդակությունը իրենց երկրներից բերված օրինակներով:

Դասընթացավարները կարող են եզրափակել դասընթացը գործողությունների պլանի մշակման խորացված վարժությունով: Վարժության մանրամասները նկարագրված են ստորև: Սա շատ լավ միջոց է վստահ լինելու, որ մասնակիցները յուրացրել են մոդուլի բովանդակությունը:

Դասընթացավարները խրախուսվում են օգտագործել այս մոդուլը և այլ ռեսուրսային նյութեր, որոնք կարող են գտնել՝ հարստացնելու իրենց ազգային և տեղական դասընթացը, քանի որ նրանք լավագույնս համապատասխանում են դրան: Հեղինակը փորձել է ըմբռնել այն ամենի էությունը, ինչ հասանելի է: Հարստանալով ավելի շատ գիտելիքով՝ տեղական դեպքերի ուսումնասիրությունները և օրինակները կբարելավեն ուսուցման գործընթացը և կդարձնեն բովանդակությունն առավել արժեքավոր:

Դասընթացավարներն ազատ են որոշելու ինչպես կշարունակեն և կօգտագործեն ռեսուրսները և ազգային ու տեղային օրինակները, բացի նրանցից, որոնք բերված են

մոդուլի մեջ: Փաստացիորեն՝ տեղային դեպքերի ուսումնասիրությունների և օրինակների ներառումը հարստացնում է վերապատրաստման փորձի ներկապնակը:

Դասընթացավարները նաև խրախուսվում են օգտագործելու մոդուլի բաժինները՝ ըստ այն կարևորության, որոնք նրանք տալիս են դրանց: Պարտադիր չէ, որպեսզի բոլոր բաժիններն օգտագործվեն, սակայն հաջորդականության պահպանումը կլինի օգտակար:

Գործողությունների պլանի մշակման վարժություն

Ուղեցույց գործողությունների պլանի մշակման համար

Բոլոր մասնակիցները պետք է ներկայացնեն գործողությունների պլան՝ անհատականորեն կամ խմբով, մինչ Մոդուլ P1. Բարենպաստ միջավայր կին ձեռներեցների համար վերապատրաստման դասընթացի ավարտը:

Գործողությունների պլանը պետք է օգնի մասնակիցներին դիտարկել և վեր հանել յուրաքանչյուր երկրի/ կառավարության/ կազմակերպության ներկա հիմնախնդիրներն ու մեծ մարտահրավերները և փորձել լուծումներ գտնել կամ այլընտրանքներ առաջարկել ներկայացված հիմնախնդիրների և խնդիրների համար:

Հաջողված գործողությունների պլանի համար մասնակիցները մինչ դասընթացին միանալը պետք է հավաքագրեն թեմային առչնվող տվյալներ և վերլուծել իրենց երկրում կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման, կանանց ձեռներեցության հետ կապված միջավայրն ու պայմանները :

Գործողությունների պլանի սեսիան նպատակ ունի վերանայել, վերլուծել, քննել, գնահատել և որոշել ընթացիկ քաղաքական նախաձեռնությունների հաջողությունների և ձախողումների պատճառները և ապահովել լավագույն քաղաքական այլընտրանքները և նորարարական համակարգերը:

Գործողությունների պլանը, որպես այդպիսին, պետք է ապահովի գործնական, կիրառելի և հնարավոր այլընտրանքները և լուծումներ՝ հիմնված իրական իրավիճակների վրա:

Գործողությունների պլանի մշակման սեսիա

3-ժամանոց գործողությունների պլանի մշակման սեսիան նախատեսում է մասնակիցներին ընձեռել հնարավորություն ունենալ ավելի շատ խորացված քննարկումներ խմբերում և նախապատրաստվել հաջողված շնորհանդեսների համար:

Գործողությունների պլանի շնորհանդես

Նախատեսվում է, որ վերապատրաստման պետք է բաղկացած լինի մասնակիցների՝ գործողությունների պլանների շնորհանդեսներից, որոնց պետք է հաջորդեն քննարկումները: Մոդուլի հեղինակը, UN-APCICT-ի ռեսուրսային անձինք և տեղական դասընթավարները կարող են հանդես գալ որպես մեկնաբաններ և քննարկումների մասնակիցներ:

Շնորհանդեսի սլայդերում ցուցադրվող գործողությունների պլանի կաղապարը պետք է օգտագործվի որպես վարժության հիմք:

Հեղինակի մասին

Ուշա Ռանի Վյասուլու Ռեդդին Հնդկաստանի Հիդերաբադ քաղաքում գտնվող <<ՏՀՏ-ն զարգացման համար>>-ի անկախ խորհրդատու է: Նա նախկինում Հիդերաբադում Հնդկաստանի Վարչակազմի քոլեջի Մարդկային զարգացման կենտրոնի տնօրենն էր և կրթության պրոֆեսոր: 1998-2006թթ. նա եղել է Հնդկաստանի Նոր Դելի քաղաքում գտնվող Ասիայի համագործակցության կրթական մեդիա կենտրոնի տնօրենը: Նրա աշխատանքը տարածվում էր Ասիայի համագործակցության բոլոր երկրների վրա և կենտրոնացած էր ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտում ՏՀՏ-ի կիրառման տեխնիկական աջակցության և խորհրդատվության տրամադրման վրա: Մինչ 1988թ. նա եղել է Հիդերաբադի Օսմանիա համալսարանի Աուդիո-վիզուալ հետազոտությունների կենտրոնի ղեկավար և պրոֆեսոր: Նրա հոդվածները լայնորեն տպագրվել են տարբեր ակադեմիական, միջազգային և գրախոսական հրատարակություններում:

UN-APCICT

ՄԱԿ-ի Տեղեկատվության և հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման ասիական և խաղաղօվկիանոսյան ուսումնական կենտրոնը (UN-APCICT) Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովի (ESCAP) օժանդակ մարմինն է: UN-APCICT -ը նպատակ ունի ուժեղացնել ESCAP -ի անդամ երկրների ջանքերը՝ օգտագործելու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները իրենց սոցիալ-տնտեսական զարգացման մեջ մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման միջոցով: UN-APCICT -ի աշխատանքը կենտրոնացած է երեք հիմնասյուների վրա՝

1. Վերապատրաստում – Կատարելագործել քաղաքական որոշումներ ընդունողների և ՏՀՏ մասնագետների ՏՀՏ գիտելիքներն ու հմտությունները և ուժեղացնել ՏՀՏ դասընթացավարների և ՏՀՏ վերապատրաստման ինստիտուտների կարողությունները

2. Հետազոտություն – Նախաձեռնել ՏՀՏ-ում մարդկային ռեսուրսի զարգացման վերաբերյալ վերլուծական ուսումնասիրությունների անցկացումը և

3. Խորհրդատվական – ESCAP -ի անդամներին և ասոցացված անդամներին տրամադրել խորհրդատվական ծառայություններ մադրկային ռեսուրսի զարգացման ծրագրերի վերաբերյալ

UN-APCICT -ն գտնվում է Ինչեոնում, Հյուսիսային Կորեա

http://www.unapcict.org

ESCAP

ESCAP -ն ՄԱԿ-ի տարածաշրջանային զարգացման մարմինն է և ծառայում է Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում որպես տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական կենտրոն: Վերջինիս նպատակն է նպաստել իր 53 անդամների և 9 ասոցացված անդամների միջև համագործակցությունը: ESCAP -ն ապահովում է ռազմավարական կապ համաշխարհային և երկրի մակարդակով ծրագրերի և հիմնախնդիրների միջև: Այն աջակցում է տարածաշրջանի երկրների կառավարություններին տարածաշրջանային դիրքերն ամրապնդելու և քարոզում է տարածաշրջանային մոտեցումների կիրառում գլոբալիզացվող աշխարհում տարածաշրջանի եզակի սոցիալ-տնտեսական մարտահրավերներին պատասխանելու համար: ESCAP -ի գրասենյակը գտնվում է Բանգկոկում, Թայլանդ:
http://www.unescap.org

UN-APCICT/ESCAP
United Nations Asian and Pacific Training Centre for Information
and Communication Technology for Development
5th Floor G-Tower, 175 Art center daero,
Yeonsu-gu, Incheon City, Republic of Korea

www.unapcict.org